

398(47. 925)

$\mu$  - 17




06 APR 2010

Opway



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ԲԱՆԱՍՔՐՅԱ

Բ . ԽՈԼՈԹԵԱՆՑ



# ԻՐԱՎԱԴԱ ՀԵՐԱՍՆԵՐԸ

## ՀԱՅ ՃՈՂՈՎՐԴԻ ՄԵԶ



առ . ԱՌԱՋԱԲԱՆ

բ . ՆԻՒԹ

ՊԱՆԱՑ , ԿՈՂՊԱՑ և ԱՊԱՐԱՆԻ ԲԱՐԲԱՐՆԵՐՈՎ.



ՊԱՐԻՍ

Տպագրութիւն «Բանասկր»ի

1901





Հայոց ուսումնական Կոմիտասի պատվավոր և գլուխ  
առաջ Տեղական Զեօքանակայի Մաներ

398(47.925)

Բ. ԽԱՆԱԳԻՆ

Հայութական պատվավոր

Խ-17

Դ. Խանագին

Մ

Երևան. 1901

# ԻՐԱՆԻ ՀԵՐԱՍՆԵՐԸ

ՀԱՅ ՃՈՂՈՎՐԴԻ ՄԵԶ

ա. ԱՌԱՋԱԲԱՆ

բ. ՆԻԽԻԹ

ՎԱՆԱՅ, ԿՈՂՊԱՅ և ԱՊԱՐԱԿԻ ԲԱՐԲԱՐԵՐՈՎ.



ՊԱՐԻՍ

Տպագրութիւն «Բանասէր»ի


1901






# ԻՐԱՆԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԷԶ



Ա Ր Ա Ջ Ա Բ Ե Ա



Ա. ՀԱՅ ԵԽ ՊԱՐՄԻՑ ՀԵՐԱԾՆԵՐԸ

Ամեն մի ազգ , զեռ իւր կեանքի օրօրոցում սիրում է զարդարել իւր հնագոյն անցեալն որպէս առասպելներով , քաջարի նախնեաց փայլուն հռչակով , նոյն իսկ սերել իրան որ եւ է զիւցազնից : Այս թանկագին յիշատակարանն ժողովուրդը պահպանում է ամենայն սրբութեամբ եւ կտակում նորատի սերնդին : Հին Յոյներին հաճոյ էր խմբել ծեր «աշուղի» չուրջն եւ ականջ զներ Տրովագայի պաշարման , հերոսաց հուժեկու հարւածների , չաստուածոց խնջոյքների , կամ Հերակլէսի , թեսէսոսի եւ այլ զիւցազանց արկածների «հաղըլներին» : Բատ Խորենացու , Հայկի մասին «անգիր հին ասացեալ զրոյցներ» էին պատում ժողովրդի մէջ (1) . Գերմանացոց «Ներելունգների մասին երգը» ամբողջապէս կենդանացնում է այս ազգի հնագոյն աշխարհայեցողութիւնը . Թուսաց «Ծյուն» (Եղելիք) կոչւած վիպական աւանդութիւնները ներկայացնում են զարմանալի հարուստ պաշար ժողովրդի զիւցազնական անցնալի . թերեւս մի կողմ թողած արեւելեան առասպելների գանձարանն , որ ցիր-ցան տարածւել է զանազան երկրներ :

Ժամանակի ազգեցութիւնը մի կողմից քաղաքակրթութեան՝ միւս հետզհետէ թուլացնում են այս յիշողութիւնը ժողովրդի մէջ , իսկ ազգերի փոխադարձ յարաբերութիւններն առաջ են բերում եւ մտաւոր շփոմըն , հետեւապէս եւ ընտանի աւանդութեանց աղաւազումն չնորհիւ օտարազնեայ զրոյցների : Սկզբնական սերմն աւելի խորն է թագուում նոր եւ նոր շերամերի տակ :

Պատմական անցքերն ոչ պակաս փոփոխութիւններ են մուծանում աւանդութեանց բովանդակութեան մէջ . հին հերոսը շատ անդամ աեղի է տալիս նորագունին , նորան կտակում իւր բնաւորութիւնը , յատկու-

(1) Գիրք Ա. Գլ. Ժ : Տես նմանապէս վահագնի մասին Գիրք Ա. Գլ. լ. թ :

թիւնները, զէնքերը, ժողովուրդը ինքն, այլեւս չ'գոհանալով իւր հին դիւցազնից, որից բաժանւած է երկար գարերով, իւր բոլոր բանաստեղական հանձարը թափում է նոր հերոսի վերայ, որ հոչակում է նորա օրերով կամ մօտիկ անցեալում։ Նորա երեւակայութիւնը կրկին թեւ է առնում եւ կրկին ստեղծագործում։

Այսպէս են կազմուում պատմական երգերն, որոնք խմբ ու մ են յայտնի ազգային գործիչների շուրջն եւ պատում նոցա անունը առասպելական լուսով։ Խուսաց ժողովուրդն այստեղ եւս կարող է ամենալաւ օրինակ ծառայել, թէ ինչպէս պատմական անցքերն ազդու արձագանք են գըտնում սառը խաւերի մէջ (1)։

Ամէն մի աւանդութիւն, որչափ էլ հիմն լինի, իւր հեքեաթաձեւ քողի տակ թագնում է սկզբնական սերմն, որ շարժել է ժողովրդի երեւակայութիւնը, գործունէութեան հրաւիրել նորա հոգեւոր ոյժերը։ Ճշմարիտ է, գարերի ընթացքում, ենթարկելով նորանոր փոփոխումների եւ կողմանակի ազգեցութիւնների, նա աւելի եւ աւելի օտարանում է ժողովրդին։ բայց այնուամենայնիւ «ասողը» մինչեւ այժմս էլ խիստ տարբերութիւն է գնում «հեքեաթ»ի եւ «զրոյց»ի (նազըլի, մասալի) մէջ, վերջինիս ընծայելով լիովին հաւատ եւ պատմելով նորան իրեն եղելու րիւն։ Խուսաց առածը շատ պարզ արտայայտում է ժողովրդի այս տեսակէտը՝ «skazka — skladka, a pësnja — byl» (հեքեաթը շինծու է, իսկ երդն՝ եղելութիւն)։

Զկայ ազգ, որ չունենայ իւր վէպն, իւր զրոյցն, այս աւանդութեանց մէջ է նա գտնում իւր հոգեւոր բաւականութիւնն, նոցա մէջ պտրում իւր պապերի պատմութիւնն։ Փոյթ չէ, եթէ նորա հերոսները հեռու են նորանից անբողջ զարերով, անքնական իրանց յատկութիւններով, անհամապատասխան ներկայիս «էն վախտը (ժամանակը) փակեւանների վախտ էր» ասում է խորին համոզմունքով ժողովուրդը։ նոյն իսկ մեր ժամանակակից ըմբշները (փակեւանները) հետաքրքիր ապացոյց են, որ նա զեռ ըոլորովին չէ խոկը իւր կապը հնոց քաջերի հետ։

Թէ Հայերն եւս հնումն ունեցել են իրանց սեպհական դիւցազնական վէպերն՝ այդ մեզ ակներեւ է թէ Խորենացու բազմաթիւ, թէպէտ եւ հատուկուր, ցիրցան մատնացոյցներից (2) եւ թէ ներկայումս մեր

(1) Istoritscheskija pësni ob Ivanë, Grösnom, Ermaké, Skopiné Schuijskom (Gilferding, Rybnikoff, Kireevskij).

(2) Ա. Գրքի Ա. Գլխում Խորենացին յիշում է «թուելեաց երգերի» մասին, առաջ բերելով միայն մի քանի անկապ տողեր, որոնք իրքերի բովանդակութիւնն են յիշեցնում։ Բայց եւ այս անկապ հատածներն արդէն ապացոյց են, որ զեռ Խորենացու ժամանակ Հայերը «ախորժելով» պահպանել էին իրանց դիւցազնական երգերն, որոնք կեդրոնացած էին «գինաւակտ» Գողթն գաւառում։ Նկատիր եւս Վահագնի, Արտաշիր (Գիրք Բ. Գլ. Ծ. ԿԱ) մասին երգերը։ Համեմատիր եւս Փաւստու («Հայք» զիւրեանց երգս առասպելեաց վիպասանութեան սիրեցեալք . . .» (Դպր. Պ. Գլ. ԾԳ.)։

մէջ պատող երգերից եւ զրոյցներից, որոնք ամենից լաւ պատկերացը նում են մեր ժողովրդի բանաստեղծական ոգին, որ գեռ շարունակում է ծաղկել եւ պատուղներ տալ: Զանց առնել մի որ եւ է ազգի մտաւոր կեանքի ընդունակութիւնը՝ նշանակում է վայրենութեան ստոր աստիւ ճանին հասցնել նորան:

Ս.Ա. խնդիր է, թէ ո՞ր չափով Հայերը փոխ են առել օտարազնեայ զրոյցներ: Այս բանաւոր պաշարն այն աստիճան ճոխ է, որ պահանջում է նիւթի որոշ գասաւորութիւն, ըստ տեսակի եւ նշանակութեան, եւ լուրջ համեմատական ուսումնասիրութիւն: Սակայն ես կընտրեմ այս աւանդութիւններից մի որոշ խումբ, որ անմիջապէս հետաքրքրութիւն է ներկայացնում թէ իւր ընդհանուր հոչակով եւ թէ մեր վէպերի վերայ ունեցած ազդեցութեամբ:

Խօսքո իրանի դիւցազնական աւանդութեանց մասին է:

Բաւական է մի թեթեւ հայեացք նետել հին Հայաստանի աշխարհագրական քարտիզի վերայ, որպէսզի տեսնել նորա քաղաքական անբարեպատեհ գրութիւնն երկու հզօր պետութեանց մէջ. թէ արեւմաքից եւ թէ մանաւանդ արեւելքից նորա գլխին են իջել ամենածանր հարւածներ. այստեղ միմիանց էին հանդիպում երկու մեծ ոսոխների շահերն. այստեղ նոցա յաջողում էր միշտ վառ պահել նախարարների ապստամբ ոգին եւ փոխազարձ ատելութիւնն. այս գժբազդ երկիրն շարունակ մուտք էին գործում կայսեր լէզեռներն կամ կրակապաշտ դըրացիների անբաւ վաշտերն: Այս հանգամանքն մեծ արգելք էր Հայաստանի քաղաքական անման եւ հասունութեան, որ ի վերջոյ տարաւ նուրան ի կորուստ:

Բայց Յունաց եւ Պարսից ազգեցութիւնն միայն քաղաքական չէր, նա աւելի խորն էր գնում, տարածում հայ ազգի նոյն իսկ մտաւոր եւ հոգեւոր կեանքի վերայ, որ ժամանակի ընթացքում տւեց իւր պատուղներն:

Մինչդեռ արեւմաքից Հայերի վերայ ծագեց քրիստոնէութեան լոյսըն եւ ապա Յունաց գալքոցները բաց արին հայ մանկանց առաջեւ մտքի լայն ասպարէզ, սնեցին եւ հանդէս բերին մի շարք քանքարաւոր մշակներ, Պարսից գարեւոր հարեւանութիւնն աւելի եւս խորը դրոշմըւեց հայ ազգի կեանքի վերայ. նա գգալի է նախ լեզուն, թէ՛ գրաբառում, եծ թէ՛ առաւել եւս աշխարհաբառում, որ այժմս կարծես արդէն ընտանեցած է մեզանում: Միւս կողմից Արեւելքն՝ Պարսից շնորհի՛ բաց էր անում Հայերի առջեւ իւր խորհրդաւոր պարտիզի գոներն եւ ներս հրաւիրում հեքեաթների աշխարհն, ուր մարդկային երեւակայութիւնն այնպէս հրաշալի կերպով ծաղկեց արեւելեան ճոխ բնութեան գրկում: Իրանի հոչակաւոր հերոսների աւանդութիւններն, որ ոչ միայն ժողովրդի լաւեիքն էին չոյտմ, այլ ազատօրէն մուտք գործում նոյն իսկ «շահանց շահերի» արքունիքը, հեշտիւ կարող էին հրապուրել Հայե-

րի՝ Պարսից ամենամօտ դրացիների երեւակայութիւնն : Դա բնաւ գար-  
մանալի չէ : Ամեն մի ազգ իւր մանկութենում պաշտում է այն, ինչ որ  
բնականից դուրս է, մարդկային կարողութիւնից ի վեր . նա սիրով հա-  
ւատում է իւր դիւցազների յաղթութիւններին, գեւերի, հրէշների,  
ամբողջ բանակների տապալմանը նոցա գերբնական ոյժի առաջեւ : Երա  
սուր լսելիքն արագ որսում է ամեն մի վիպական նորութիւն, լինի նա  
օտար, գեթ միայն գոհացում տայ նորա միշտ լարւած երեւակայու-  
թեանն : Հայերն, անգամ քրիստոնէութեամբ, լուսաւորւած, չէին կարող  
անտարբեր մնալ գէպի այնպիսի համբաւաւոր հերոսներ, որոնք՝ անցնե-  
լով մի շարք գարեր՝ ցայսօր գեռ կենդանի են ժողովրդի խաւերում :

Պարսից գրականութեան մասնագէտներն արգէն բաւական ապա-  
ցուցել են, թէ ո՞րչափ լայն ծաւալ է ունեցել, հոչակաւոր իրանական  
վէպի ազգեցութիւնն . Պարսից ընդարձակ տէրութիւնն իւր մէջ պարու-  
նակում էր զանազան ազգութիւններ, շփւում էր տարբեր լեզու, տար-  
բեր կրօն ունեցող ցեղերի հետ, հասնելով նոյն իսկ Կովկասիան լեռնաւ-  
շղթան . այստեղից, շնորհիւ կիսավայրենի թուրք-պոլովացիների, արե-  
ւելեան զրոյցներն անցել են հարաւային Ռուսաստան եւ ժողովրդի սեպ-  
հականութիւն դառնել (1) : Հայերին այս աւանդութիւններն պէտք է ծա-  
նօթ լինէին գեռ աւելի հին ժամանակներ . մեր պատմագիրը, Խոսկելով  
Տորքի մասին, ի գէպս յիշում է Ռուսաստամին, «եթէ կամիս (ասում է Խո-  
րենացին Սահակ Բագրատունուն)», ստեմ եւ ևս յաղագս նորա (Տորքի՝  
անյաջ եւ փցուն, որպէս Պարսիկք վասն Ռոստոմայ Սագճըկի՝ հարեւը  
եւ քսան փղոց ոյժ ասեն ունել» (2) : Կասկած չկայ որ այս հերոսի անու-  
նը գեռ Խորենացու ժամանակ տարածւած էր Հայաստանում . բարե-  
պաշտ հոգեւորականը չէ ծածկում իւր ատելութիւնը գէպի հեթանոսա-  
կան «անյարմար եւ անոն» աւանդութիւններն, այլ միայն երիտասարդ  
իշխանի կամքը կատարելով, ակամայ յիշում է նոցանից մի քանիսը՝  
«զորոց ստեմք զբանս եւ զգործս, եւ այնուիկ մանաւանդ, թէ լուրն զսե-  
լիս մեր տաղակացուցաներ, այսօր ձեռամբ իմով շարագրեմ զայնուիկ» (3) :

Պարզ է, որ ժողովուրդը, հետեւելով իւր ձգաւմանն, հեռու էր այս  
ահսակէտից . նա սիրով ականջ էր զնում այս՝ թէպէտեւ օտար՝ բայց  
իւր ճաշակին, հասկացողութեանն համապատասխան կինդանի զրոյցներին :

Հարկաւ, ամեն մի արտաքուստ եկած աւանդութիւն, նախ քան  
ժողովրդի մէջ հաստատւելն, յարմարում է նորա կենցազին, բարեկերին,  
սովորութիւններին, միով բանիւ՝ աշխարհայեցողութեանն, եւ երբ ժա-  
մանակի ընթացքում դառնում է նորա սեպհականութիւն, արգէն գժար

(1) Տես Vsevolod Miller: «Ekskursy v oblastj russkich narod-  
nych bylin».

(2) Գիրք Բ. Գլ. Է.

(3) Խորենացի «ի Պարսից Առասպելեաց» Ա. Գիրքի վերջում:

չէ նորան շփոթել օտարազնեայ հերոսներին իւր աւանդական քաջերի հետ , վերագրել նոցա այն , ինչ որ յատուկ էր միայն իւր սիրած դիւցապներին :

Այս օրէնքն, լինելով ընդհանուր բոլոր ազգերի համար, հայ ժողովրդի մէջ ստացել է հետաքրքիր լուսաւորութիւն . բայց նախ տեսնենք, թէ ի՞նչ պայմանների մէջ գոյութիւն ունին բանաւոր աւանդութիւններն մեզանում :

Ինձ գէպք եղաւ 1899 թ . ձմրանը եւ 1900 թ . գարնանը ուղեւորւել նախ Ապարան (Եջմիածնայ գտաւան) եւ ապա Կողակ (Սուրմալուի գտաւան), որոնք ժողովրդական բանահիւսութեան կեզրոններ են համարւում Երեւանեան նահանգում, եւ յիրաւի, այս աղքատիկ, անշուք հայ գիւղերում, ուր կարծր, քարքարոս հողը շատ անգամ անկարող է լինում գիւղացու նոյն իսկ անհրաժեշտ կարիքներին գոհացում տալու, դեռ ծաղիկ դրութեան մէջ է երգն իւր պէս պէս տեսակներով (իւր երգերով հոչակւած է Սուրմալուի գտաւան), բերանէ բերան է շրջում զըրայցը, առակը, հեքեաթը, հանելուկը, միով բանիւ՝ այն ամենը, ինչ որ զարդարում է մեր գիւղացու չքաւոր կեանքը, նորա անբաժան ընկերն է հանդիսանում մանկութենից մինչեւ խորին ծերութիւն, ուղեկցելով նորան երկրէ երկիր եւ միիթարելով օտարութեան մէջ : Մանաւանդ տարածւած են այսակ աւանդութիւններ ժողովրդի սիրած հերոսների՝ Դաւթի եւ Մհերի՝ եւ Պարսից «փահէւանների» մասին : Իրաւ է, զարեւոր գաղթականութիւնը Տաճկա եւ Պարսկահայստանից, որ չէ ընդհաւուում եւ այժմս, եւ որին կարծես դեռ երկար տարիներ դատապարտած է հայ ժողովուրդը, խլում է նորա աւանդական գանձարանի մի մասը, հետզհետէ թուլացնում նորա յիշողութիւնը նոր հոգսերի, կեանքի նոր պայմանների մէջ, բայց չ'նայելով այս անբարեկամեհ հանդամանքներին ապարանցին եւ կողակեցին դեռ լաւ յիշում է իւր հօր, իւր պապի կամ իւր ժամանակի համբաւաւոր «նաղըլ ասողի» պատմածն, ինքն եւս աւանդելով իւր լսած զրոյցներն՝ ձևեռային պարապ ժամանակ՝ կիսալոյս «յօդայում» խմբած գիւղացիններին : Գրեթէ ամեն մի գիւղ ունի իւր «ասողը», որ չնորհիւ իւր գիտութեան առանձին յարգանք է վայելում բոլորից, իսկ աւելի հոչակաւորը՝ ամբողջ գտաւառում :

Բացի այդ, տարին մի անգամ այս կողմերն են գալիս մոկացիներ եւ մշեցիներ «քէչայ գործելու» կամ «բուրդ գգելու» եւ այս պարապ մունքի ժամանակ իրենց երկրի «նաղըլները» ասում հետաքրքիր գիւղացի ամբոխին : Այսպիսով աւանդութիւնների կապը ոչ միայն չէ թուլանում, այլ եւ նորոգւում գրեթէ ամենայն տարի գաղթականների եւ ժամանակաւոր պանդուխանների չնորհիւ :

Ահա՛ այս գտաւառներում, այս փոքրիկ գիւղերում, որոնք ապաստանած են Արագածի հարաւային լանջի վերայ եւ կամ ցիր-ցան սփուած

Արարատեան ընդարձակ հովիտում, ցարդ թարմ է մնացել հնութեան մի հարուստ պաշար, որ կրկին կենդանացնում է մեր առաջեւ դիւցազնական դարը իւր հեքեաթային գրաւիչ քողի տակ :

Պարսից դիւցազնական վէպն յայտնի է մեզանում «Խոստամի Զալ» ընդհանուր անուամբ : Չնայելով վերնագրին, աւանդութեանց բովանդակութիւնը հանդէս է բերում ոչ միայն իրանի համբաւաւոր դիւցազնի, այլ եւ միւս փահկեւանների քաջութեան գործքերը . ըստ մեծ մասին Խոտստամ անգամ չէ յիշում եւ կամ աննշան գեր է խաղում, կարծես թողելով ասպարէզն աւելի երիտասարդ հերոսներին :

Սոցանից ամենամեծ հոչակը անշուշտ վայելում է Բուրզէն : Այս հերոսի անունն իրան տեղ չէ գտել «Արքայից գրքում», իսկ այն, ինչ որ մեզ ցարդ յայտնի է պարսից զրոյցներից (1), միանգամայն տարբերում է հայկական խմբագրութիւնից, որ թէ նիւթի եւ թէ արտաքին ձեւի նկատմամբ տալիս է մեզ մի զեղեցիկ ամբողջութիւն : Այսաեղ մեր առաջեւ ունենք մի անձնաւորութիւն, բոլորովին տարբեր յատկութիւններով օժտած . նորա արտասովոր ձայնն, որի մէջն է նորա ոյժը, բացի լոկ մարմարական ոյժից, միանգամայն ջոկում է նորան փահկեւանների շարքից եւ բոլորովին առանձին, պատաւոր տեղ տալիս նորան : Ճշմարիտ է, այս յատկութիւնն վերագրում է նորա ամբողջ ցեղին, բայց ներկայ աւանդութիւններում նորա եւ ոչ մի ազգականն հանդէս չէ դալիս այս օժիտով : Իւր ճողով Բուրզէն յիշեցնում է ոուսաց Solovej (разбоиник) (Սոխակ) աւազակին եւ հայոց Զէնով Յովանին, թէպէտեւ սոցադերերը տարբեր են միանգամայն . փահկեւանի ահաւոր գոչը աւելի կորստաբեր է հանդիսանում, քան անտառում նստած աւազակի շւոցը կամ Դաւթի հօրեղբօր «բռուալը» . նորա ձայնից 12 բլուր փուլ է գալիս եւ մի ամբողջ բանակ ի փախուստ դառնում :

Բացի այդ Բուրզէն իւր մէջ կրում է եւ մի այլ յատկութիւն՝ մարտենի ծանրութիւնն, որ արեւելքում համբաւում է գրեթէ անբաժան իսկ փահկեւաննական ոյժից . Խոտստամին, Մհերին, Սվետառորին (ոուսաց վէպում) հողն այլ եւս չէ պահում . նոյն իսկ նորա անունն (յշ=Բուր-

(1) Բարզուն պարսից վէպում («Բարզունամէհ») Զոհրաբի որդին է, ծնած Տուրանում իւր հօր պանդխտութեան ժամանակ . Աֆրասիաբ թագաւորը, հրապուրւած նորա գեղեցկութեամբ, տանում է իւր Դուռը ծառայութեան եւ իրբեւ ընտիր փահկեւան ուղարկում իրանացիների դէմ . Բարզուն գերւում է եւ՝ իմանելով իւր ծագումը, մնում է ընդ միշտ իրանում : Բարզունամէհի խմբագրութիւնն անպայման կրում է Զոհրաբի ազգեցութեան հետքերը : Mohl ենթագրում է սորա կազմութիւնն Ե-Զ զարը (Préface XXV-XXVI).

զու = յաղթանդամ) արդէն պատկերացնում է իւր մէջ ժողովրդի տեսակէտն : Այսպիսով, պարսից հերոսի մէջ ամփոփուած են՝

ա) ահագին ֆիզիզական ոյժ

բ) անսովոր ձայն

գ) մարմնի ծանրութիւն՝ երեք յատկութիւններ, որոնք պիտի գըրաւէին ժողովրդի երեւակայութիւնն եւ առանձին հետաքրքրութիւնընծայէին հերոսի անձնաւորութեանը .

Պարսից զլոյցները, նախ քան հայ ժողովրդի մէջ հաստատւելն, ըստ երեւութին անցել են եւ մի այլ խմբագրութիւն՝ յրդական, որի ազգեցութիւնն նկասելի է նոյն իսկ սեպհական անուններում, ինչպէս՝ Մըջանէ Զազօ, Թղթուրէ Շէրան, Ղօփօ, Ֆախիէ եւ այլն . իրանի դիւցազները պէտք է որ լաւ ընդունելութիւն գտնէին այս կիսավայրենի ազգի մէջ, որ ցայսօր հաւատարիմ է մնացել իւր նախնեաց յիշատակին, ասպատակելով հայ գլուղեր եւ առեւանդելով հայ կանայք :

Այս աւանդութիւններն, որոնք մի ժամանակ անշուշտ առանձին էին պատմում, հայ ժողովրդի մէջ ձուլել են եւ կազմել մի ամբողջ վէպ . պատմողն սովորաբար կապում է նոցա, հաւատացած լինելով, որ բոլոր այս հերոսները կազմում են Ռուստամ-Զալի ցեղն :

Արդէն այս տեսակէտը ինքն ըստ ինքեան հետաքրքրիր է, բայց մեզ համար առաւել նշանաւոր է այն հանգոյցը, որով ժողովուրդը կապում է իւր եւ օսար դիւցազների անուններն, այն ազգեցութիւնն, որ անկասկած դրոշմել են իրանի զրոյցները մեր ժողովրդական վէպի վերայ :

Ես քնաւ գիտաւորութիւն չունիմ ներկայ խնդիրս ենթարկել այս տեղ մանրամասն քննութեան, այլ առաջ կ'ըերեմ մի քանի հետաքրքրիր համեմատութիւններ (1) :

Նախ տեսնենք, թէ ինչպէս է ինքն՝ ժողովուրդը նայում հերոսների այս տոհմի վերայ . ասողներից մէկը (Մուրադ Միհթարեան) նոցացեղը սերում է ուղղակի Միերից, որին յաջորդում է նորա որդի դիւժամարտիկ Ռուստամի Զալն : Սա արդէն ապացոյց է, որ ժողովուրդը ճըգնում է հաշտեցնել իւր յիշողութեան մէջ միմեանց հանդիպած զանազան փահլեւաններին, որոնք օժտւած են անսովոր ոյժով, ձայնով, մարմնի ծանրութեամբ եւ այլն, հայացնելով օտարներին : Միւս վարիանտում (Բարսեղ Յարութիւննան) յիշւում է իրեւ Զալի եղբայր Սասունցի Դաւիթը, որի «տասնըհինգ փթանոց զուրղը» ժառանգութեան մէջ միմեանց հանդիպած զանազան փահլեւաններին, որոնք օժտւած են անսովոր ոյժով, ձայնով, մարմնի ծանրութեամբ եւ այլն, հայացնելով օտարներին : Միւս վարիանտում (Բարսեղ Յարութիւննան) յիշւում է իրեւ Զալի եղբայր Սասունցի Դաւիթը, որի «տասնըհինգ փթանոց զուրղը» ժառանգութեան մէջ միմեանց հանդիպած զանազան փահլեւաններին, որոնք օժտւած են անսովոր ոյժով, ձայնով, մարմնի ծանրութեամբ եւ այլն, հայացնելով օտարներին :

(1) Խնդիրս աւելի մօտ կ'օշափեմ մեր ժողովրդական դիւցազնական վէպն ուսումնասիրելիս :

որ միեւնոյն դերում մենք տեսնում ենք Յովանին եւ մեր ժողովրդական վէպում (1) : Բոլոր տարբերութիւնը միայն այն է , որ նորա ահաւոր ձայնը այստեղ ոչ թէ անհատական , այլ արգէն իրրեւ ցեղական չնորհք է հանդիսանում : Վէպիս գործողութիւնն սկիզբն է առնում Ա առուն'ից , ըստ այնու եւ նորա հերոսները շարունակում են կրել «Սասմայ Մոեր» ընդհանուր մականունն :

Այսպիսով ուրիմն օտարազգի գիւցազները , չնորհիւ իրանց երկարամեայ գոյութեան հայ ժողովրդի մէջ , մի քանի տեղերում ընտելացել են նորան , կազմելով մի ցեղ նորա ազգային հերոսների հետ միասին :

Առաջ տանելով համեմատութիւնը , կ'առեսնենք , որ հայ գիւցազների վերայ գրոշմել են պարսից փառլեւանների յատկութիւններն , և նախ եւ առաջ Մհերի նկատմամբ , որի անձնաւորութիւնն եւ հերոսագործութիւններն մօտ յիշեցնում են Բուրգէին : Եւ յիրաւի , այնպիսի ընդհանուր միջագէպեր , ինչպէս՝

ա . Մհերի պատահելն պառաւի հետ , որ Բուրգէի վարիանտներում գեւի կերպարանք է ընդունում .

բ . Երկուսի եւս Սասունի սահմաններից դուրս աստանդական շրջիւն :

գ . Թշնամի քաղաքներ աւերելն

դ . Հորի մէջ միալն

ե . Զանազան թագաւորներին պաշտպան հանդիսանալն այս բոլորն անկասկած վկայում է յօգուտ մեր համեմատելի աւանդութեանց ազգակցութեանը : Առաւել եւս նմանութիւնը զգալի է դառնում , երբ համեմատենք այս երկու հերոսների ֆիզիքական ոյժի նկարագրութիւնը , կուելու ձեւերը սովորութիւններն եւ այլն :

ա . Թշնամուն կէս անելն («ճըւտելն») երկուսի եւս սովորական դասաստանն է :

բ . Գործածելի դէնքն է՝ արմատահան արած ծառն .

գ . Սովորական զրագմունքն է՝ որսորդութիւն .

դ . Հայ եւ պարսից դիւցազները չափազանց ծանր են մարմնով (2) . ծերացած Մհերը , որսալիս , խրում է հողի մէջ . Բուրգէի տակ չարգւում է աթոռը , որ փոխարինում են անկողնով .

ե . Վերջապ ս երկու հերոսն էլ ժողովրդին պատկերանում են իրրեւ անյաղթ տիտաններ , օժտւած գերբնական զօրութեամբ , որոնցից պատկառում է նոյն խոկ մահի գերանդին :

Զ՞այելով , որ երկու դիւցազն էլ նման դերերում եւ յատկութիւններով են հանդէս դարիս , սակայն այս հանգամանքն չ'պէտք է հիմովին խախտէ Մհերի վէպի ինքնուրոյնութիւնն . բաւական է ի նկատի առնել

(1) Տես իմ գրի առած «Թըլօր-Դաւիթ եւ Մհեր» , Էջմիածին 1899թ :

(2) Ռուսամ Շահնամէում կոչւում է Հան = փղի մարմին ունեցող :

ա. Նախ այս գիւցազնի անունն ար ամենայն ճշտութեամբ եւ անփոփոխ հանդէս է գալիս մեր գիւցազնական աւանդութիւններում :

բ. Դաւիթից յետոյ Մհերը ժողովրդի ամենասիրելի հերոսն է հանդիսանում. շատ վարիանուներում նորան գեռ չըջապատում են Սասունի քաջերն :

գ. Մհերի կոլուը թեւաւոր Աստղիկ երդնկացու հետ, որ ըստ իս կաղմում է այս աւանդութեանց հիմնաւոր եւ հնագոյն մասը, բոլորվին սուանձին աեղ է տալիս նոցա մեր վէպերի շարքում (1) :

դ. Վերջապէս ժողովուրդը մինչև այժմն էլ հաւատացած է, որ Մհեր Աստուծոյ հրամանով փակւած է հոչակառոր Վանայ քարի մէջ եւ մի օր պէտք է դուրս գայ աշխարհն աւերելու :

Կարեւոր եմ համարում նկատել այստեղ, որ Մհեր բաւական մօտ յիշեցնում է մեզ Արտաւազդին, Արտաշիսի որդուն .

ա. Որպէս Դաւիթը Մհերին, Արտաշէս անիծում է իւր որդուն :

բ. Մհեր եւ Արտաւազդ դժգոհ են իրանց գրութիւնից հայերի մահից յետ :

գ. Երկուսն եւս խօսում են նոցա հետ եւ պատասխան ստանում զերեզմանից :

դ. Անհետանում այրի մէջ, ուր ցայսօր մնում են ողջանդամ (Խորենացի Գիրք Բ. Գլ. կԱ.) :

Նմանութիւնն ակներեւ է. անկասկած Մհերի ժիպարը կենդանի էր զեռ Խորենացու ժամանակ «պառաւանց զրոյցներում»՝ անունն այստեղ դեռ չի խաղում. խնդիրը այն ազգու տպաւորութեան մասին է, որ այս հնագոյն գիւցազն ընդ միշտ զրոշմել է հայ ժողովրդի երեւակայութեան վերայ :

(1) Մհեր իւր հօր մահան վրէժն է առնում, աւերելով Զմեչկիկ Սուլթանի քաղաքները, բալորը նորա ահից փախչում են : Մի մեզ նա դանում է միայն ծերունի Փիրմուսին նորա զաման՝ Դեղծոնի հետ, որ նա պսակում է Խոր-Մանուկի հետ, իսկ ինքն առնաւմ Գոհար-Խանում մին : Գոհար աստղից գուշակում է, որ միծ վտանգ է սպանում նորա ցեղակիցներից մէկին : Մհեր կնոջ հետ շտապում է Փիրմուսի մօտ : Առաւատեան գալիս է Աստղիկ երդնկացին, «Դեղծոնի նշանածը», եւ սկսում իւր կախւը Մհերի հետ, հարւածենով նորան վերեւից : Գոհար, տեսնելով իւր ամուսնու նեղ դրութիւնն, խնդրում է Աստղիկին խնայել իւր անփորձ հակառակորդին՝

— Սատղիկ երդնկացի, Մհեր խամ տղայ է, շատ մը' զօսի Մհերին, հըլա իսկի կոխ չ'էրի, նոր կոխ կ'էնի : — Սիւտակ ծծեր զուս թալից Գոհար խանում, ըսկց . — Քըզի իզա սիւտակ ծծերու մէջ կ'պահիմ, Մհերին շատ մը' զօսի :

Սատղիկ երդնկացին օր տեսակ ծծեր, կայնաւ, օր կայնաւ, Մհեր արկեւանց գուրզ զարկեց, օր զարկեց, առաւ սիրտ, պառեկից գուս տեսց : («Սամայ ծոեր» Գարեգին Արթաւագ . էջ 56) : Երկու անտիպ վարիաններ, որ ձեռքիս տակ ունեմ, պարունակում են իրանց մէջ նոյն միջազէպը :

Աստեղամարտ Մհերն ինձ յիշեցնում է միւս կողմից բարելական յայտնի հերոս ի գուռ բարին (= Ներբովդին) . առաջ եմ բերում վէպիս համառօտ բովանդակութիւնն :

Երբ Ելամացիք նամում են Երեխ քաղաքը , իզդուբար (Մարադից) կիսաստած կա-բանիի օգնութեամբ սպանում է թշնամեաց Խումբարա թագաւորին եւ փրկում քաղաքն : Հերոսի վերայ սիրահարում է ի շատ ար գիցուհին (1) . բայց հերոսն , որպէս զի չենթարկւի իւր նախորդների՝ իշտարի սիրականների՝ տխուր վիճակին . մերժում է իւր փոխագարձ սէրն : Անպատած դիցուհին խնդրում է իւր հայր Անունին ըստեղծել «երինից աստղ» , որ պիտի ոչնչացնէ իզդուբարին . բայց գիշեցազն այս անգամ եւս յաղթող է հանդիսանում իւր հաւատարիմ ընկերոջ օգնութեամբ :

Այստեղից սկսում է մի մեծ պակասորդ : իզդուբարին ապա մենք գտնում ենք հիւանդ , իսկ կա-բանին՝ մեռած . իւր ընկերոջն կենդանացընելու , իսկ իրան առողջացնելու համար նա ստիպւած է որոնել իւր պապ Պիր-Նապիշտին , որին մահն երբէք չի վստահանում մերձենալ : Երկար թափառելուց յետոյ նա վերջապէս համում է Պիրի բնակարանն եւ նորա միջոցաւ առողջանում : Ծերունին պատմում է ջրհեղեղի զրոյցըն , նաև շինելն եւ իւր փրկւելն ընդհանուր կորստից : Ապա առողջացած գիւցազնը վերադառնում է Երեխ եւ ստանում իւր ընկեր կա-բանին (2) :

Այս ամբողջ զրոյցն պատկերացնում է իւր մէջ Մհերի միջադէպը թեւաւոր Աստղիկի եւ ծերունի Փիրմուսի հետ . անկասկած , նա պատկանում է ալեւոր հնութեան , որի մթնոլորտը թափանցել դեռ անզօր է հանդիսանում գիտութիւնն :

Եթէ բաժանենք Մհերի աւանդութիւններն իրանց հիմնաւոր մասերի , կ'տեսնենք , որ սոքա բաղկացած են հերոսի մի շարք , երբեմն անկապ . արկածներից այս-այն երկրներում շրջելիս : Նոցանում բացակայէ այն ըլդիմանուր զաղախարն , որ յայտնապէս աչքի է խփում Դաւիթի զրոյցներում եւ նոցա ահազին առաւելութիւնն կազմում : Անկասկած , Մհերի վեպական աւանդութիւններն ժամանակի ընթացքու մ քայլարել են եւ մեզ հասել միայն չնչին քանակութեամբ , այն եւս բաւական այլայլւած :

Մեր խօսքն այստեղ կարող է լինել , հետեւապէս , միայն այն զօրեղ ազեցուրեան մասին , որ պարսից եւ բարելական վէպերն զրոշմել են

(1) Իշտար Բարելոնի գիցուհին է , որ համապատասխան է Venere մոլորակին . հաւանական է , որ այս անունից է առաջել (ի նկատի առնելով բարելացիների աստեղապիտութեան հոչակը) հնդ-եւրոպական «աստղ» (աստղ , star , astre , stella) բառն :

(2) Ամբողջ վէպը բաղկացած է 12 տախտակներից եւ պատկանում է Ասուրբանիպաղի (668-626) գրադարանին . գտնւած է 1854 թ . Ենիշէյում (Hormuzd Rassam) :

Մհերի աւանդութեանց վերայ, խորը թաղելով նորա սկզբնական սերմն : Բնական է, որ նոյն իսկ մեր պատմական գրոյցներն, ինչպէս Դաւթինը, ազատ չեն մնացել հարեւանի ազգեցութիւնից . այնպիսի մի խոշոր անձնաւորութիւն , ինչպէս Ռուստամ , պատկանում են զանազան ազգերի եւ անվերջ գարերի . հարկաւ, նորա անունն կարող էր մոռացւած լինել եւ կամ նոր հերոսներով փոխարինւած , բայց նորա գիւցազնական տիպարն անշուշտ ապրում էր հայ ժողովրդի մէջ եւ ծառայում նորեկ քաջերի համար պատրաստի օրինակ : Նորա երկիրածութիւնն , անշահասիրութիւնն , ազնւութիւնն , անյաղթ ոյժի հետ միացած, պէտք է գրաւէին ոչ միայն պարսից , այլ եւ զրացի ազգերի համակրանքն : Հայ գիւցազնական վէպն ամրող զապէս կրում է պարսից ազգեցութեան հետքերն . նոյն են կուի ձեւերն , զէնքերն , ծառը արմատահան անելն, հորերի մէջ մնալն, գեւերի հետ ճակատելն, հօր եւ որդու կոխւն եւ այլըն եւ այլն :

Բայց ի նկատի առնելով իրանական վէպի լայնատարած հոչակը, դիւրին է չափազանցութեան մէջ մոլորեկ : Որչափ էլ զօրեղ լինի ազգերի փոխարած կուլտուրական ազգեցութիւնն , վերջինս, յայտնի պայմաններում, որոշ սահմաններից չի անցնում . ամեն մի ազգ ունի իւր մտածելու եղանակն, իւր . միայն նորան յատուկ ստեղծող ոգին , իւր աշխարհայեցողութիւնն . ժամանակն անզօր է հանդիսանում բնաջինջ առնել այս գերիշխող ոգին : Քանի որ մի ազգ դեռ գոյութիւն ունի : Վերոյիշեալ պարսից ազգեցութիւնն ընդհանրապէս զգալի է արտաքին մանրամանութիւններում եւ կամ պատմական միջադէպերում, որ զարեր ի վեր կուտակւել են մեզանում : Զայտք է մոռանալ, որ

ա . հայ գիւցազնական վէպն ամրող չապէս սերտ կապւած է որոշ Տէղի հետ :

բ . Սասնոյ պատմութիւնն , նորա վերջին յուսահատ կոխւն եկւոր թշնամիների հետ կազմում է այս զրոյցների գլխաւոր համգոյցն եւ ամրողացնում նոցա :

գ . Վերջապէս, վէպիս մեծագոյն հերոսն՝ Դաւթիթ Սասունցին կրում է իւր մէջ այնպիսի տարբեր բնաւորութիւն , որից զուրկ են պարսից փահլեւաններն, նորա ամրող անձնաւորութիւնն այն ասաւիճան ծուլել է ժողովրդի հետ, որ ամենայն իրաւամբ նորան է պատկանում հայ ազգային հերոսի համբաւն :

Բ. «ԱՐՔԱՅԻՑ ԳՐՔԻ» ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՄՆԱԿՈՒՄԸ

ի նկատի առնելով այն լայնածաւալ հռչակը, որ իրանի հերոսները տարածել են անդամ օտար ազգերի մէջ, աւելորդ չեմ համարում առաջ բերել այստեղ սոյն աւանդութեանց գրականական մշակման պատմութիւնն :

Դժար է որոշել, թէ ո՞ր ժամանակ են կազմել այս զրոյցներն, ինչպէս զժար է որոշել որ եւ է հեքեաթի հեղինակին. մի քանի անուններ, ինչպէս Ռուսամինը, անկասկած պատկանում են խորին հնութեանը եւ գարեր ի վեր կենդանի մնացել ժողովրդի մէջ չնորհիւ իրանց գերբնական զօրութեան : Միայն ժամանակի ընթացքում, յայտնի անցքերի ազդեցութեան ներքոյ, նոքա միացել են պատմական անձնաւորութիւնների հետ եւ կազմել դիւցազներդութեան նոր շրջան :

Պարսից Տուրանի գէմ մզած պատերազմներն եւ տարած յաղթութիւններն արդէն ի հնումն ներկայացնում էին հարուստ եւ արժանի նիւթ վիպասանութեան համար : Թէ քաղաքական կեանքի խոչոր անցքերըն եւ թէ նոցանում հռչակւած գործիչներն միշտ վառ են պահում ժողովրդի սառղծող ոգին, նոր պաշար մասակարարում նորան . անցնելով նորա երեւակայութեան գործունէութիւնից, նոքա կրկին կենդանանում են եւ կերպարանափոխուում՝ պատմական անցքն առասպելանում է, գործիչն՝ դիւցազնանում : Ապա հանդէս են դալիս եւ միանում նորերի հետ ժողովրդի հին հերոսներն, շարունակելով գեռ ճակատել դեւերի եւ այլ հրէշների հետ :

Զարմանալի չէ, որ պարսից զրոյցները ախորժելի էին ոչ միայն ժողովրդի ստոր խաւերին, այլ շարժում նոյն իսկ թագակիրների հետաքրքրութիւնն, որոնք սիրով ծահօթանում էին իրանց նախորդների փառաւոր անցեալի հետ : Բայց կապել այս աւանդութիւններն միմեանց հետ, կազմել նոցանից մի որ եւ է ամբողջութիւն անհնարին էր քանի որ նոքա ցրւած էին պարսից ընդարձակ տէրութեան զանազան կողմերում . պէտք էր մի հեղինակաւոր նախաճեռնող, որ կարող լինէր իրա գործել այս դժար իմնգիրը . եւ ահա Խոսրով Անուշիրւան (531-578) հրաման է արձակում հաւաքել իւր տէրութեան մէջ շրջող բանաւոր աւանդութիւններն եւ պահել արքայական գրագարանում : Սա եղաւ առաջին փորձն, որին հետեւեցին նորա յաջորդները :

Յազկերտ Գ.-ի (632-651), սա վերջին Սասանականն էր) հրամանաւգեհնկան (1) Դանիշվերը հրաւիրւեցաւ կարգի բերել Անուշիրւանի ժողո-

(1) Դեհկանները կազմում էին պարսից բարձրագոյն կալւածատէր ազատանիների դասակարգը, որոնք իրանց սկրում էին հնագոյն տռնմերից . հարկաւ, նոքա անտարբեր չէին կարող լինել դէպի հայրենի աւանդութիւններն :

վածուն եւ լրացնել պակասորդը մովզեաների (1) օգնութեամբ : Ֆիրդուսին այսպէս է նկարագրում «Արքայից գրքի» կազմութիւնն :

«Հնուց ի վեր կար մի զիրք , որ պարունակում էր իւր մէջ բաղաժամաթիւ պատմութիւններ . իւրաքանչիւր մովզեան ունէր այս գրքից մի մի մաս եւ ամեն մի զարգացած մարդ պահում էր իւր մօտ սորանից մի հաստած : Դեհկանների տանից մի քաջանձնեայ եւ հզօր , իմաստաէր եւ լուսաւոր փաշլեւան , որին հաճոյ էր ուսումնասիրել հին դարերն եւ ժողովել հնոց զրոյցներն , հրամայեց զալ գումարել իւր մօտ ամեն մի պատահից մի ծեր մովզեան , որոնք իրանց մօտ ունէին այս գրքի «մասերը : Ծերունիները մի առ մի պատմեցին նորա առաջեւ հոչակաւոր «թագաւորների եւ պատերազմների մասին իրանց դիտցած աւանդութիւններն : Նա լսեց նոցա պատմածը եւ կազմեց մի արժանայիշատակ «գիրք . թէ մեծերը եւ թէ փոքրերը փառաբանում են նորա կատարած «գործը» (2) :

Դանիշվեր զրեց իւր գիրքը , ժամանակի պահանջին համաձայն , պեհեւելի լեզուով , (3) որ պարունակում էր իւր մէջ պարսից պատմութիւնը կայումորզից մինչեւ Խոսրով Պարսիզ եւ կրում «Խոդայի Նամէհ» (Արքայից գիրք) վերնագիրը :

Արքացոց արշաւանքից յետ Խոտայի Նամէն տեսնում ենք Արգալահն-իրն-ալ-Մոկաֆֆայի ձեռքում , որ ի թիւս բազմաթիւ զրուածքների թարգմանել աւեց արաբերէնի եւ Դանիշվերի գիրքը «Պատմութիւն արքայից» վերնագրով : Այս թարգմանութիւնն մեզ չէ հասել :

Սրաբացոց իշխանութիւնը Պարսկաստանում , որքան էլ որ զօրեղ լինէր , ոչ միայն չմեռցրեց ազգային վիպասանութեան ոգին , այլ եւ պատճառ զառաւ նորա վերածնման : Հազիւ Խալիֆատը ոկտեց թուլութեան նշաններ ցոյց տալ , պարսից տարրը կրկին զլուխ բարձրացրեց եւ սկսեց մի նոր կար օսարի իշխանութեան դէմ : Արեւելեան գաւառների կառավարիչները , օգտեւով իրանց հեռաւորութիւնից , աւելի եւ աւելի անկախ գիրք բռնկցին զէպի Բաղզատի լիազօր աէրը , պարսից իշխանները ամեն ջանք գործ էին դնում կեանքի հրաւիրելու ազգային աւանդութիւնները , նոցանում որոնելով ամուր յենակէտ արաբացոց քաղաքական ազգեցութեան գէմ (4) . կարճ միջոցում նոցա արքունիքը լը-

(1) Այս անունն , որ յիշւում է եւ մեր մատենագրերում , յատկացրած էր պարսից հոգեւոր դասին :

(2) Mohl , «Le livre des rois» . Préface VII-VIII .

(3) Պեհեւելի լեզուն կազմել է Միջազետքում սեմիտական եւ պարսից լեզուների խանութքից : Արքացոց արշաւանքի ժամանակ նա արդէն տիրապետում էր արեւելեան Պարսկաստանում իրքիւ պաշտօնական լեզու , մինչդեռ արեւելեան մասնում չարունակում էին խօսել զուտ պարսկերէն :

(4) Nöldeke միանդամայն ընդգէմ է այս կարծիքին («Schahname» Grundriss der iranischen philologie 1896 II B. I Lief. էջ 450 .

ցւեցաւ բազմաթիւ պարսիկ բանաստեղծներով եւ գիտնականներով, որոնք այստեղ գտնում էին սիրալիք ընդունելութիւն եւ լուսաւոր հովանաւորութիւն : Մանաւանդ հոչակւեցաւ, իբրև մնկենատ, Յակոբ Լէյխի որդին, Սոփարի ցեղի հիմնադիրը . հասարակ զինւորից դառնալով Պարսկաստանի տէր, Յակոբ հրամայեց իւր վէզիր Աբու Մանսուրին թարգմանել տալ պարսկերէնի այն, ինչ որ Դանիշվեր գրած էր պեհեւի լեզով, սորան կցելով եւ զանազան զրոյցներ, որ պահպանել էին Խոսրով Պարվիզի եւ Յազկերտի ժամանակներից : Աբու Մանսուրը, իւր պետի հրամանը կատարելով, հրաւիրեց իւր ժամանակի ընտիր ոյժերը, որոնք «Արքայից զբում» ամփոփեցին բոլոր իրանց ձեռքի տակ ունեցած գրաւոր եւ բանաւոր պաշարն :

297/909 թ. • Սոփարիները գահընկեց եղան եւ նոցա փոխարինեցին Սամանիները (Սասանեան ցեղից) : Սոքա նոյն եռանդով շարունակեցին իրանց նախորդների գործը . յայտնի քերթող Դակիկին (1), ձեռնարկեց, ոտանաւորով բանահիւսել Դանիշվերի զիրքն, որ թարգմանւած էր Յակոբի հրամանով . բայց հազիւ նա դրած էր 2000 տող, ինչպէս ստրուկի մահացու հարւածը վերջ դրեց նորա գործունէութեանը :

Սամանիների անկումից յետոյ Պարսկաստանը անցնում է Ղազնիւիների ձեռքը : Այս հարստութեան երկրորդ ներկայացուցիչը՝ Մահմուդ Շահը (997-1030) ամեն ջանք գործ էր գնում իւր քաղաքական դրութիւնը ամրացնելու . նորա ժամանակ պարսից լեզուն աւելի լայն ծաւալ ստացաւ եւ պաշտօնական դարձաւ . նոյն իսկ նորա Դրանը : Նորա արքունիքը ներկայացնում էր կատարեալ ձեմարան, ուր ընտիր քերթողները կարգում էին իրանց ուսանաւորները եւ մրցում միմեմանց հետ ժագաւորի ներկայութեամբ : Ցանկանալով կազմել մի աւելի հարուստ ժողովածու , Մահմուդ հրամայում է հաւաքել իւր տէրութեան մէջ թէ գրաւոր եւ թէ անգիր տեղեկութիւններ , որոնք կարող էին հին պարսից պատմութեան նիւթ մատակարարել : Պաշարը արդէն հարուստ էր, մնում էր միայն մի տաղանդաւոր որ գրիչ, որ անշունչ նիւթի հոգի ներշնչէր : Այս դիտաւորութեամբ Սուլթանը մրցանակ նշանակեց ժամանակաւից յայտնի քերթողներին : Սոցանից մէկը, Սնզարին, յայտնեց Մահմուդին, որ նա իրան կոչւած չէ համարում այս դժար խնդիրը իրագործելու, բայց նա ունի մի ընկեր , որի բարձր տաղանդը միանգամայն համապատասխան է այս վեհ գործին (2) :

Այս քերթողը Աբու 'լ Կասիմ Ֆիրդուսին էր :

(1) Այս կեղծանունով բանաստեղծն ծածկում էր իւր իսկականն՝ Կունիւթա Աբու Մանսուր :

(2) Mohl, Préface, p. XVII-XX.

## Գ ՑԻՑՊԱԼԻԱՅԻ

Ցիցպուսին ծննել է 935 (ըստ այլոց 936-ին) (1) Շագաբում, Թուռքաղաքի շրջակայքում: Նորա հայրը (Մաօլանայ Ահմէդ, զենկանների ցեղից) սւած պիտի լինէր որդուն իւր ժամանակի բարձր կրթութիւն, որովհետեւ Ցիցպուսին քաջ ծանօթի էր ոչ միայն արարելէն, այլ եւ պեհելուի լնգուների հետ, որ արևելեան Պարսկաստանում հազւագիւտ էր համարում: Դեռ երիտասարդ հասակում նա արդէն ձեռնարկել էր վեպական թարգմանութիւնների եւ՝ երր Դակիկի մանւան գոյմը ստացաւ, ցանկացաւ փորձել իւր ոյժերը այն ահագին պաշարի վերայ, որ գնունոր էր սկսել մշակել հանգույցնեալ քերթողը:

Նա գրում էր սկզբում ծածուկ, հեռացած աշխարհի աղմկից բայց չուտով նորա վէպի հատւածները, գնու լոյս չ'անսած, արդէն յայտնի եղան ամեն մի զարգացած պարսկի, ինքն Արու Մանսուր, նահանգի կասավարիչը, կոչեց նորան իւր մօտ, հրամայեց կարգալ իւր ներկայութեամբ մի քանի կտոր եւ՝ հրճած նորա տաղանդով, խոստացաւ իւր հովանաբորութիւնն:

Թէ ինչ պատճառներ սափեցին Ցիցպուսին թողնել իւր միայնակ կեանքն եւ քաղաք անզափոխի լի Սուլթան Մահմուդի մօտ, կարծիքները աարբեր են. յամենայն գէպս նա հասաւ իւր զլիսաւը նպատակին այժմ նորա ձեռքի տակ. էր մի ահագին պաշար, որ այնպէս եռանդով ժողոված էր Մահմուդը: Սուլթանը աւեց նորան առանձին ապարանքներ իւր արքունիքին կից, որը բաժանում էր միայն պարափլով: Եթնութիւնն ինքըն արդէն ներկայացնում էր մի բանստաեղծական աշխարհ, նորա պատերը զարդարած էին զանազան նկարներով, որոնք պատկերացնում էին Պարսից եւ Տուրանի ներսոներին, երիվարներ, փղեր, վագրներ եւ այլն: Մահմուդը սիրում էր շատ անզամ կարգալ տալ իւր ներկայութեամբ քերթողին իւր վէպն, որին հետեւում էին երաժշտութիւն եւ պարեր. նա միշտ խոստովանում էր, թէ նոյն պատմութիւնները, որ նա առաջուց լսել կամ կարգացել է, Ցիցպուսի գրչի տակ բոլորովին նոր կեանք էին ստանում, քաջութեան եւ բարեկաշտութեան հրաւիրում լսողին: Անպայման քանքարաւոր բանաստեղծը հնոց աւանդու-

(1) Mohl Անթագրում է նորա ծննդեան տարին 329թ: Ամենահին աեզեկութիւններ քերթողի կենաց մասին քաղում ենք Ահմադ-իմն-Օմարալ-Արուզից, որ մօտ 100 տարի նորա մահից յևս այցելեց նորա գերեզմանը թուս քաղաքում եւ անշուշտ օգտաւց տէղական աւանդութիւններից: Բացի այդ իրեւ ազբիւրներ ծառայում են այ Դաւիթաշահ թ) Զամիդ (լ. Առաք-Ալի-Ատաշկատէ (Տես Nöldeke, «Անհնամէհ» էջ 154):

թիւններին ներշնչում էր իւր ոդին եւ մեղմացնում նոցա սկզբնական կոպառներինը (1) :

Ֆիրզուսիի յանկարծակի հոչակն եւ սուլթանի մտերմութիւնը շարժեցին պալատականների նախանձը, որոնք ամեն հնար զործ էին զնում սեւացնելու նորան սուլթանի աշխերում. մանաւանդ նա ատելի զարձաւ Հասան Մէջմէնդի'ին, Մահմուդի վէղիրին (2). շատերը պնդում էին անգամ, որ նորա հոչակը ստեղծել է ոչ թէ նորա տաղանդը, այլ հետաքրքիր նի թը: Սորա վերայ աւելացաւ մի նոր հարւած եւս, Յօ ամեայ ծերունին կորցրեց իւր միակ որդուն առոյդ հասակում (37 ամեայ): Չ'նայելով այս դժբախտ հանդամանքներին, շրջապատած բանսարկութշնամիներով, նա ամենայն եռանդով զեռ շարունակում էր իւր սկսած գործը, սպասելով հարուստ վարձատրութեան, որ նորան խոստացել էր սուլթանն :

Բայց դժբախտ ծերունուն չէր վիճակւել հանդիսատ վախճան ունենալ:

Անցան 12 տարի. եւ Մահմուդը հրամայեց ուղարկել քերթողին մի փղաբեռ ուվիթ: Սորա դէմ բողոքեց Հասանը, պարսաւելով իւր տիրոջ առատաձեռնութիւնն. Ֆիրզուսիին ուղարկեցաւ միայն 60,000 հատ արծաթ նորա ընկեր Այազի ձեռամբ: Աւանդութիւնն պատմում է, որ Ֆիրզուսիին, իրան անպատած զգայով, մի մասն տալիս է բաղանիքի տիրոջըն (նա այդ ժամանակ բաղանիքումն էր), միւս մասն ֆուկայ (դարեջուր) ծախողին (3), իսկ երրորդն՝ Այազին, խնդրելով սորան կրկին ներկայանալ սուլթանին եւ յայսնել այս անախորժ թիւրիմացութեան մասին: Հասան շտապեց համոզել Մահմուդին, ասելով, որ Ֆիրզուսին կարմաթների (4) աղանդին է պատկանում. նոյն օրն յայսնի եղաւ քերթողին, որ վաղը սուլթանը նորան, իբրև կարմաթի, փղի ոտերի տակ է նետելու: Անհանգիստ գչերից յետոյ Ֆիրզուսին հետեւեալ առաւօտ սպասեց պարտիզում սուլթանի դուրս գալուն, ընկաւ նորա ուերն, աղերսելով ականջ չ'դնել իւր հակառակորդների բանսարկութեանց, բայց Մահմուդն մնաց խուլ նորա աղանասց:

Ցուսահաա ծերունին շտապեց տուն, հաւաքեց մի քանի հազար տող ոտանաւոր, որ զեռ չէին արտագրւած ուրիշներից, եւ ամբողջ ապէս այրեց. ապա կոչեց Այազին եւ տուց մի կնքած ծրար, խնդրելով 20 օրից յետ սուլթանին հասուցանել, իսկ ինքն ծպտեալ գէրվիչի շորերով հեռացաւ քաղաքից (5):

(1) Mohl, Préface XXVII-XXVIII.

(2) Էստ այլոց, Հասան, հակառակն, քերթողի պաշտպանն էր:

(3) Այս աւանդութիւնն անկասկած հիմնում Ֆ. երգիծաբանութեան վերաբայ:

(4) Սոքա մեկնում էին Պորանը այլաբանօրէն:

(5) Աւանդութիւնն աւելացնում է, որ Ֆիրզուսին, նախ քան քա-

Այսպէս ճշտութեամբ կտօտարեց իւր ընկերոջ պատէ էրն, ամենին ին կասկած չ'տանիելով թղթի բովանդակութեան մասին. սա մի կծու երգիւծաբնութիւնն էր, որով վշտացած քերթողն յանդիմանում էր Մահմուգի ապկերախտութիւնն. «մինչդեռ ես շարունակ 30 տարի աշխատում էի Ալբայից զրքի» բանահիւսութեան վերայ յուսալով, որ իմ տէրը ինձ առատ կ'վարձատրէ եւ մաժամնակի լլուխը կ'անցկացնէ, նա տւեց ինձ միայն մի բաժակ գարեջրի զին»: Գրգուած ծերունին անւանում է Մահմուգին անհաւատ, անորէն, արքայական բնաւորութիւնից զուրկ, արժանի գեհենի կրակին:

Ապա Ֆիրդուսուն մենք տեսնում ենք Կաբուսի (Մազանդարանի տիրոջ) մօտ. Կաբուս նորան ընդունեց սիրով, բայց իմանալով նորա փախստեան պատճառը, քաղաքական հանդամանքներից ստիպւած խնդրեց իւր հիրին ուրիշ հովանաւոր իրան պարել:

Այսակից Ֆիրդուսին եկաւ Բաղգաղ եւ շնորհիւ մի հարուստ վաճառականի ներկայացաւ վեպիրին եւ ապա Կագբ Բիլլահ խալիֆին, որի մօտ գտաւ ժամանակաւոր հիւրենիալութիւն. այստեղ նա զրեց իւր յայտնի «Խոսուֆ եւ Զուլէյխան», այս անդամ նիւթ ընտրելով, խալիֆին հաճոյանալու համար, Պարանին մօտ ասարկայ:

Զայրացած Մահմուգը գեռ շարունակում էր ամեն տեղ որոնել յանդառակն քերթողին, իմանալով նորան թագստեան տեղը, նա կտրուկ կերպով պահանջեց խալիֆից փախստականին. Ֆիրդուսին շտապեց մեկնել Անվալ (որի կառավարչին նա նուիրեց իւր նոր զէպը), այստեղից եկաւ կուհիստան, որի սէրը՝ Նազիր Լէկ՝ ինքն անձամբ ընդառաջ եկաւ և միծ շքով ընդունեց նորան: Լինելով սուլթանի մօտ բարեկամը, նա տւեց Ֆիրդուսուն 400,000 արծաթ, ազաշելով այլ եւս ոչ զրել, ոչ խօսել իւր տիրոջ դէմ: Ապա նա զրեց Մահմուգին մի նամակ, արդարացնելով Ֆիրդուսու կծու տողերը նորա կրած տառապանքներով եւ սուլթանի անարդար վարժունքով, եւ խնդրում էր մոռանալ իւր բարկութիւնը: Այս զէպից օգտահցին քերթողի բարեկամներն եւ բաց արին սուլթանի առաջեւ ողալատականների խարդաւանքն եւ չար նախանձը զէպի իւր վաղեմի սիրելին: Մահմուգը հրամայեց մահի գառապարտել Հասանին:

Վերջապէս երկար անհանդիսա թափառելուց յետոյ միրգուսին վերադարձաւ իւր հայրէնի քաղաքն: Մի օր շուկայում զբունելիս նորա ականջին հասաւ իւր երդիծարանութեան հետեւեալ տեղերն, որ երգում էր մի երեխայ:

զաքից հեռանալն, Պատնինի մզկիթի պատի վերայ, որտեղ սովորաբար կանգնում էր Մահմուգը, զրեց իւր ձեռամբ հետեւեալ տողերն.

«Զարուիխանի տէր Մահմուգի բաղգաւոր դուռը նման է ծովի, եւ ո՛րպիսի ծովի: որի ափը չի երեւում: եթէ ես ջրի տակն իմ լողում, առանց այնակ մարդարիաններ գանելու, սա իմ աստղի, ոչ թէ ծովի, «սխալանքն է»:


«Եթէ թագաւորի հայրը լինէք թագաւոր, (1)

աեռա որդին գլուխս ոսկի թագով պիտի պոսկիէք»:

ևա արձակեց ճիչ եւ ուշագնաց եղաւ. հազիւ տուն տարան նորան, արդէն հոգին աւանդեց 83 ամեայ ծերունին:

Այս տիտուր բոսկն աւելի եւս խորն տպաւորելու համար աւանդութիւնն աւելացնում է հետեւ եալն. նոյն այս ժամանակ Մահմադ համաձայն իւր խոստման, ուղարկում է 100,000 ոսկի եւ թանկադին զգեստ «Շահնամէի» հեղինակին. բայց մինչ պատւախումբը ներս էր մանում քաղաքի մի դռնից, միւսից զուրս էին տանում ֆիրդուսու անշունչ մարմինը, որ եւ ամիսոփեցին մի պարտիզում:

Հանդուցեալի զուստրը հրաժարեց գանձերից, իսկ նորա քոյլն այդ զումարով շինել աւեց Թուս գետի վերայ մի քարեայ ամբարտակ (digue), որի մնացորդները մինչեւ այժմս զեռ նկատելի են:



## Դ. ՇԱՀՆԱՄԻՒ ՀԱՄԱՌՕՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆՆԵ

Ֆիրդուսին սկսում է իւր վէպն պարսից հնագոյն արքաներից, որոնցից առաջին տեղը բոնում է Կայուռ մորգ, ապա նորան հետեւաբար յաջորդում են Հուշենգ, զիւամարտիկ. Տաղ մուրազ եւ Զ ա մ-շ ի զ: Վիշապագլուխ Զ ո հ ա կ ի անկումը Հ ր ո ւ գ ե ն ի ձեռքից պատկանում է Քերթողի ամենաշնորհալի տողերին: Հրուցենի Տ ո ւ ր եւ Ս ա լ մ որդիքը սպանում են իրանց հարազատ եղբայր Ե ր ա չ ի ն, որից առաջ է գալիս Իրանի եւ Տուրանի մեջ թշնամութիւն: Երաչի մահան վրէժն առնում է նորա որդի Մ ա ն ո ւ չ ի ր ը: Սորա ժամանակ հանգէս է դալիս Ս ա մ ը: ապա նորա որդի Զ ա լ ը, որ սիրահարում է Ծ ո թ ա բ է ի վերայ եւ պատկւում նորա հետ, սորա ժամանակ է սոտնում իւր առաջին հոչակը Ռուստամ: Մանուչիրի յաջորդ Ն ա ւ գ ա ր ի սպանումն Ա ֆ ր ա ս ի ա ր ի (Տուրանի թագաւորի) ձեռքից կրկին աեղիք է տալիս Տուրանի հետ պատերազմի:

Կ ա ռ ս ի ժամանակ Ծ ո ւ ս ս ա մ կատարում է իւր ամենամեծ շահատակութիւններն: Նորա սիրահարական արկածը Սեմենզանի արքայագստեր հետ, Զոհրաբի ծնունդն, հօր հետ տարաբախս պատահելն եւ մահը նմանապէս պատկանում են այս չըջանին:

Կտոս, գահ բարձրանալով, հակառակ Զալի նախազգուշութեանց, արշաւում է Մաղանգարանի վերայ, որ հոչակւած էր իւր գեղեցիու-

(1) Ակնարկ, որ Մահմուդի հայրը ծննդեամբ ստրուկ էր Ն ո ւ հ Ամանիի ժամանակ:

թեամբ : Ապիտակ Դեւը զերում է թագաւորին և բերում Մազանզարանի աիրոջ մօտ , որ հրամայում է կապանքների մէջ գնել նորան : Ռուստամ շտապում է օգնութեան . մանելով Մազանզարան , նա գործում է մի շարք հերոսագործութիւններ (1) , սպանելով վիշտապին , կախարդ կնոջը , Առժանիկ Դեւին և զերջապիս Սպիտակ Դեւին , որ նորա ամենափառաւոր գործն է համարւում : — Միւս անգամ Կառո զերում է Համարերնինի թագաւորից և զարձեալ ազատութիւն գտնում իւր հաւասարիմ փահեւանի շնորհիւ : — Արւուուչ Կառոի որդին , իւր հօր հետ ունեցած անբաւականութեան պատճառով ապաւինում է Աղբասիարի մօտ , որ նորան սուրանել է տալիս : Այս զէպքից նորից ծագած պատերազմը յաղթանակով վերջացնում է Կէյ Խորսով , Միաւուչի որդին , որին յաջողում է փախչել Տուրանից : Աֆրասիարին բանում ևն և իւր թագաւորեան տեղում խողխողում : Յէ ժանի հետ Մենի ժէի (2) սիրահարայան միջազէպը մի փոքր զարդարում է այս արխնանեղ պատերազմների միանւագ պատկերն :

Լոհուուպի հետ զահ է բարձրանում կողմանի արխնը : Վըշտասպ (Փուշտասպ) , գմզոն իւր հօր խիստ վարմունքից , փախչում է «կայսեր քաղաքը» : որտեղ երկար ժամանակ թափառում է մասունիշակադ կերծանունով : Հերոսի վերայ սիրահարւում է արքայագուստը Կիտաբուն և պատելում նորա հետ : Վշտասպ հնազանգեցնում է կայսեր հարկատու ազգերն և իւր քաջութեամբ զրաւում բոլորի յարգանքը : Կայսրը հարկ է պահանջում կոհրասպից . Զերիք (Աշտապի եղբայրը) զօրքով զիմում է Յունաց վերայ և պատրաստում ճակատելու . կայսրը ուղարկում է հերոսին թշնամու գէմ . որին խոկոյն ճանաչում ևն զօրքերն և ոտի կանգնում . խոկ Զերիք տալիս է նորան արքայական թագն , նստացնում հօր գահի վերայ և բերում իրան կնոջ հետ . Լոհրասպ հրաժարւում է թագաւորելուց և հեռանում Բալիս :

(1) Այս երկիրն , որի անունն հանգէս է գոլիս և Աւեստայում , (Mázainya Daéva) , իւր լեռներով և անտառներով հեշտի կարող էր պարսիկներին ջար ողիների » հայրենիք թւել : Հաւանական է , որ սա համազատախան է մեր ժողովրդական զրայցների «Գեւստունին» :

(2) Յէ ժանի անունը պատւաւոր անդ է բնում պարսից զիւշաղնական վէպում . Թիրզուսին անւանում է նորան Գիլ փահեւանի որդին եւ . Պոտարզի թոռն , որ Կէյ Խոսրովի հրամանով սպանում է բազմաթիւ վարազներ Իրանի ասհմանազլիստը . նորա վերա սիրահարւում է զեղեցկուհի Մենիմէն , Աֆրասիարի զուստը , և պահում իւր մօտ . անպատաճ հայրք քցել է տալիս հերոսին հօրի մէջ , խոկ զատերն արտաքսում տանից : Մենիմէն , չկամենալով բաժանել իւր սիրելիից . նստում է հօրի մօտ և ողորմութիւն հաւաքում նորա համար . Ռուստամ վաճառականի զգեստով գալիս է Տուրան , զանում Յէժանին և տուն բերում Մենիմէնի հետ : — Այս հերոսի անունն տարածւած է և կովկասի ցեղերի մէջ՝ Ավանեսների (Յէժան) , Օսեաների (Յէղան) , յիշւում է և մեր ժողովրդական վէպում («Քերի Յէջան») :

Վաշտասպի ժամանակ Զբագլած բերում է իւր կրօնը՝ բարեպաշտ արքան ուղարկում է իսֆեն զիարին (որին խոսացել է իւր զահը) ամեն տեղ տարածելու այդ կրօնը՝ հերոսին բամբառում հն հօր մօտ, իբր նա մտածում է զահը նորանից խլելու, բարկացած վըշտասպ հրամացում է որդուն երկաթի կազանքների մեջ զնել և պահել ամրոցում։ Նոր կրօնը պատճռում է զառնում ջուրանի և իրանի մէջ պատերազմի։ Արջասպ յարձակում է Բալխի վերայ, սպանում Լոհրասպին, նոյն իսկ իրանի տիրոջը սասափի նեղում։ յուսոհատ արքան ուղարկում է մի ոմն Զամասպի օդնութեան կոչելու իւր որդուն։ Զամասպ պատմում է հերոսին Լոհրասպի մահը, նորա քոյրերի զերութիւնը և այն վտանգը, որ սպանում է նորա հօրը, իսֆենդիար մնում է խուլ նորա բոլոր աղաչանաց ։ Բայց երբ նա լսում է, որ իւր եղբայր Ֆերիզվեր մահամերձ վիրաւոր է, հրամացում է հանել իւր երկաթները և շտապում ճակատամարտ։ Սպանելով Արջասպին և արտաքսելով թշնամոն երկրից, իսֆենդիար յիշեցնում է հօրը նորա խոստման մասին։ Վշտասպ երգում է նորան տալ իւր զահը, եթէ նա ողջանզամ զերի բերէ գոռոզ Ռուստամին։ Հերոսը ակամայ ճանապարհ է ընկնում, լաւ իմանուլով։ ում հետ գործ ունի։ Իզուր ծերունի փահեւանը զգուշացնում է երիտասարդ հակառակորդին՝ յիտ կենալ անհաւասար կուից, մի առ մի թրւելով իւր կատարած գործերը, իսֆենդիար պահանջում է անձնատուր և կուլ տալ իրան ձեռ ու ոտ կապած տանել թաղաւորի մօս։ Կուլ անխուսափելի է զառնում, իրանի երկու հոչակաւոր փահլեւանների ճակատը տեսում է մի քանի օր։ Ռուստամ, սաստիկ նեղուած, խնդրում է հօրից խորհուրդ։ Զալ զիմում է Զմրուխտ (Սիմուրդ) (1) թռչունի օդնութեանը, որ շտապով զալիս է «ծովի ափից», բուժուց հերոսի և Խախչի վերքերը և սովորացնում նորան արքայազն փահեւանին սպանելու միակ միջոցն՝ կախարդական նեաերի շնորհիւ։ Ռուստամ սպանում է իսֆենդիարին, հարւածելով նորա աչքը, բայց և ինքն շուտով ընկնում է իւր խորթ եղբօր ձեռից (2)։

(1) Սիմուրդ՝ իրանի հնագոյն հեթանոսական կրօնի պաշտելի թըռչունն է, որ հովանաւորում է Զալի ցեղին։

(2) Հետաքրքիր է, ինչ հանգամանքներում է մենոնում այս անյազի հերոսը։ Զալին նորա սարկուհին ծնում է մի որդի «լուսնից տերի փայտոն»։ Զալ կոչում է աստղագէտներին, որոնք յայտնում են թէ «Եա (նորածինը) ոչնչացնելու»։ Սամի ցեղն և վիշտ տարածելու ամրող Աէյիստանում։ Զալն ուղարկում է Հեղադին Կաթուլի թաղաւորի մօս մնուցանելու, որ սպա պասկում է նորան իւր զաներ հետ։

Հեղադին հանգիստ չի տալիս Ռուստամի համբան։ խորհուրդ անելով իւր խնամակալի հետ և զանելով նորան համախոն իւր չար զիստառութեանց, նա յանկարծ մի օր, իբրեւ թէ անպատած թաղաւորից, հեռանում է նորա մօսից և վերագաւնում իւր հօր քաղաքը։ Ռուստամ, բայկացած, զօրք է հաւաքում եղբօր վրէժը արևամբ զնեւ։


Դարեհի պատմութիւնն ամբողջապէս հիմնած է Pseudokallis-then'ի վերայ . չ'նոյնելով, որ Խականդար (Աղէքսանդր Մեծն) պարսիկներին «չար իշխան» պէտք է թւէր, որ նւաճեց ամբողջ Իրանը և Խլեց նորա պատմութիւնն, բայց Ֆիրզուսին չէ թագցնում իւր համակրութիւնն դէպի ազնիւ աշխարհակալն : Արտաշիրից սկսում է պատմական մասն, բայց դեռ լի բազմաթիւ առասպելներով . սորան հևտեւում են մի չարք թագակիրներ, որոնց վերայ երրեմն երկար կանդ է առնում քերթողն (Շապուհ Ա, Շազկերտ Բ, Չար, Վասմ Պոր, Խորով Պարզիզ, Կորսագ, Յազկերտ Գ. ) : Խորով Պարզիզի ժամանակ հանգէս է գալիս ապօտամբ Վուամ Չոր ի ն, իրքիւ առասպելական հերոս, որ հոչակւում է իւր շահատակութիւններով . նա մեծ է մարմնով և սաստիկ ու մեղ, բայց չսփազանց հպարտանալու պատճառաւ . ընկնում է մահի զերանդիի տակ (ինչպէս ոռուսաց Ովեասոգորն) :

Քաղիսիայում տեղի ունեցած անբախա ճակատամարտն. Յազկերտ Գ. -ի փախուստը եւ մահը կազմում են վէպի վերջաբանը :

Բերլին 1901, 10 Յուլիսի :

---

Յ. Գ. — Այսուհեղ զետեղում ենք մի քանի հայ-պարսկական բառներ որոնք զանուում են Շահնամէում : Ի հարկէ զուրս ենք թողնում այն բառերը որոնք արգէն յայտնի են . — 1) Խանիդին = խնդ-ալ . 2) Խուրդան = կուր (կերա-կուր) . 3) Դայեան = (սանսու) գայեա-կ . 4) Սուզ=սուզ . 5) Սուզաւար=(տիսուր) սպային, սպաւոր . 6) Մարդ = մարդ . 7) Նիշանտան = նոտիլ :



---

լու համար . Շեղագ նկատում է, որ մեծ բազմութեան կարիք չկայ, հերոսի անունն միայն բաւական է, սարսափ տարածելու կարուի վերայ, նուստամ, համոզելով . 100 հեծելազօրով գնում է Շեղագի հետ կարուլ : Թագաւորն զիխարաց եւ սոտքորիկ ընդառաջ է զայիս եւ ազաշում խընայել նորան . Խուստամ ներում է : Հրապուրւած կարուի տիրոջ պատմութիւնից, հերոսն ցանկանում է անպատճառ այցելել այն որսի տեղն, որ հոչակւած է իւր զեղեցկութեամբ : Որսալիս, նորա մարզիկն յըրում են . Խախչն, զգալով գարանն, յանկարծ կանդ է առնում . բարկացած Խուստամը մարակում է նժոյզը եւ զըրուում նորա հետ միասին փոսի մէջ, որ լի էր զանազան սուր զէնքիրով : Կիսաման հերոսն խընդրում է եղօրն նորան տալ իւր աղեղն եւ երկու նետ, որպէս զի առինքի ձարակ չ'գառնայ . Շեղագ ու բախ ուրախ կատարում է նորա խնդիրը . Խուստամ ներտահար է անում նորան եւ ինքն եւս հոգին աւանդում : Իւր հօր արինալի վրէժն առնում է Թարամուրզ :

Ն Ե Ւ Ե Յ

— Հ Ա Յ Ա Խ Ա Խ —

Բ ա բ ս ե զ ։ Յ ա բ ո ւ թ ի ւ ն ե ա ն ։ (Ապարանի Թաքարլի գիւղից)  
55 տարեկան, բարձրահասակ, սպիտակամօրուք ծերունի է։ արհեստով՝  
հողագործ։ Պատմում է բաւական վարժ, առանց երկար կանգ առնելու,  
տեղ տեղ ոգեւորւած, լինելով այս փոքրիկ գիւղի (2) տուն) միակ «ըսու-  
զը» հարկաւ նա միշտ թարմ է պահում իւր յիշողութիւնն։ Նորա պատ-  
մելու եղանակն մեծ առաւելութիւն ունի միւս ապարանցիների վերայ-  
որոնց ոճն արհասարակ բաւական կոչտուկոպիտ է։ Բուրզէի զրոյցն նա  
լսել է հարեւան Դարաբուլադ գիւղի բնակչից։

## Բ Ո Ւ Ր Զ Է

Ա.

Աւալ Ժամանակ Սասումայ քաղաք Զալ թաղաւոր կ'տիրէր։ Էդ  
թագաւոր էնպէս զօրբայ էր, օր մինչեւ անգամ զշերն էր, ձկներն էլ  
վերդի (1) կ'տային։ Զալ թագաւորին կէր մէկ ազրէր, անուն Դաւիթ։  
Փոլադի Դարբանդից (2) Դաւթից սաւայի (3) մարդ չէր կանէր բերէր  
խարջ (1)։

Դաւիթ ունէր մէկ տղայ, անունը Բուրզէ։ Էղաւ օր Դաւիթ յրն-  
կաւ մեռաւ, Փոլադի Դարբանդ մնաց թարխան (4)։

Մէկ օր Զալ թագաւոր զնացեր էր զալլաք-խանէն (5) թրաշ կըլ-  
նէր, տեսաւ օր Բուրզէն հօրօղօր Յովանի փէշից բռնած ման էր գալի։  
Զալ թագաւորի օր աչք Բուրզուն առաւ, էնպէս մէկ ա՛խմ քաշեց, օր  
դու պրծար, Բուրզէն ըսաւ։

— Թա՛գաւոր, իմ կենաց Ժամանակ դու ընչի՞ պիտի ա՛խ քաշես։  
Ասաց — Ո՛րդի, աչքս առաւ քեզի, խէրդ յընկաւ միտս։ Փոլադի  
Դարբանդ իրեք հարուր վաթսունը վեց տուն այ, քո հօրից սաւայի մէ-  
կը չէր կանի վերդի առնէր։ Հիմի օր քեզի ահսայ, ցաւս ընձի յարա-  
րատ աւեց (6)։

(1) Հարկ։ — (2) Փոլադ (պարսկ.) = պողպատ։ Դարբանդ (պարսկ.)  
= փակտած, արգելւած։ — (3) Բացի։ — (4) Աղաս։ — (5) Սափրատուն։  
— (6) Զգոլի եղաւ։

Բուրգէն ասաց՝ — Զունքի էդպէս այ, ես գնացի Փոլադի Դարբանդի խարջ բերեցի :

Ասաց — Ո՛րդի, զու հլա (1) տղայ ես, զու չես կարայ բերէ :

Ասաց — Թա՛քաւոր, պար էրթամ, թէ չէրթամ, պար չաթլամիշ էդպէմ (2) :

Թագաւոր դանչել տւեց դարգւանչուն (3) : Առան էկան :

— Գնա՛, ասաց, զուոը բա՛ց, Դաւթի զուրդ նեղսեւ այ, տո՛ւ տղին տեսնինք կանա՞յ յիրար տայ (4) :

Ամա զուրդն ատանըհնդ փութ փողպատից շինած էր :

Օր զուրդ տւեցին տղին, էնպէս վերցուց, օր նշխած խնձօրի դայտայ (5) :

Զալ թագաւոր կանչեց Դաւթի գեամըչուն (6), չունքի Սասումայքանքի Փոլադայ Դարբանդի արանքը ովկիանոս ծով կար : Թագաւոր ըստ գեամըչուն :

— Գեա՛մըչի, պատրաստութիւն տես, օր Բուրգուն տանիս Փոլադայ Դարբանդ :

## Բ.

Մենք խարար ո՞րտեղից տանք՝  
Փոլադի Դարբանդից :

Փոլադայ Դարբանդու կար մէկ փահլեւան (7) դեւ : Էս Դեւն էլ զըշեր ցերեկ դարի վրէն կայնէր էր ու սէյր կէնէր (8) գեամուն, միտք կէնէր՝ քանի օր էս գեամին չէ էկէ զրա Փոլադայ Դարբանդ, աշխարքի մէջ կայ խէր-խազաղութիւն : Երոր թէ էկաւ, ալակոծում կընկնի աշխարք, եա կաւիրւի եա կը շիքւի :

Մէկէլ տեսաւ օր գեամին տեղէն յիրար էկաւ (9) ու կուգայ դիրայ Փոլադայ Դարբանդին : Դեւն ասաց՝

— Էսի Սասմայ ծոերուց այ էկաւ :

Դեւ սէնրբազ էր (10) : զնաց ծովի վրայ յառէջ : Գեամըչին ըստ՝

— Բուրգէ, Էս գալողն փահլէւան դեւն է :

Բուրգէն ասաց՝

— Գեա՛մըչի, Ասծու խալալը ընծի խարամ ըլնի : գեամին էնպէս քշես, օր դեւի ճակարի մէջ տեղէն ընցուս : Օր էնպէս չ'քշես, յառաջի զուրգը վըր քու զլխուն կը զանևս :

Գեա իըչուն էնպէս երկիւղ կոխեց, օր գեամըչու մոռթ ճըղուեր

(1) Դեւ : — (2) Ճաքիմ : — (3) Դառնապան (պարսկ.) : — (4) Շարժէ : — (5) Պէս : — (6) Նաւապես : — (7) Տե՛ս բառիս մեկնութիւնն իմ «Թըլօր Դաւթում»-Առաջարան : — (8) Կ'նայէր : — (9) Շարժւեցաւ : — (10) Հընարագէտ :

էր, արունը գըլզըր զբլգըր մաթից կ'թափէր : Դեսմըշին գեամու դիւզ-  
գիւններ ժողվեց, օր պտի գեամին գեւի ճակտի մէջտեղով ընցնէր :  
Մուխանաթ (1) գեւ ուրիշ զրազ տուեց . Բուրզէն մէ զուրզ գեւի զիսու  
վրէն զարկեց ու գլօխ հարալամիշ էլաւ, զեւի յուշ զնաց : Բուրզէն ձև  
քցեց գեւի յանկած, վերոց դրեց մէջ գեամոն : Աւ քշեցին Փոլագայ  
Դարբանդուց զուս յէլան :

Էն ժամանակ մուխանաթութիւն չկար :

Դեւն յէլաւ էրկու սիպտակ ժանդառի չազըր զուրմիշ էրէց ծովի  
զրազ՝ մէկ իրան համար, մէկ Բուրզու . ապրիշումէ եռորդան, զոշակ (2),  
զուշտուկի (3) բարձեր, խորասանայ քէչայ, չայի փունջ, եմակ-իչմախ (3),  
թութուն-չըրտուխ սարքեց : Կերան, խման, թեք յընկան քնան մինչեւ  
իրեք աւոր ժամանակ :

Իրեք օրն օր թըլմաւ, յէլան կայնան կոխւ : Դեւն ասաց՝

— Բու' րզէ, նորաթով (4) կոխւ էնենք :

Բուրզէն ասաց՝ — էնենք :

Դեւն ասաց՝ — Յառաջի նորաթ քո՞նն այ թէ իմն այ :

Բուրզէն ասաց՝

— Առաջի նորաթ տուի քեղի, չունքի զու անուանի վահլէվան ևս :

Մէջդան բացին . իրեք անդամ Դեւ գրզով զարկեց Բուրզուն, իրեք  
զուրզն էլ Բուրզէն ձեռով բոնեց : Բուրզուն էնպէս մէկ հէրսմ կոխեց օր  
բոսաց՝ — Պահա՛, նորաթ էս անդամ իմն այ :

Ու զարկեց Դեւին : Զարկել պաշտան Դեւի գլօխ եարալամիշ էղաւ :  
Դեւ թուաւ բանձրցաւ, մէկ խանչալ զարկեց Բուրզուն, էս կողքից  
մինչեւ. էս կողք եարալամիշ էրեց : Դեւ փախաւ, Բուրզէն տուեց յետեւ,  
շարեց քցեց Սողանլուայ մէշէն : Դեւ իրա եարի կսկծուն գլօխ կոխեց  
բոս (5) ծառի ջարէն (6). Բուրզէն իրա քամու հետ ընցաւ :

Օխա օր զիշեր ցերեկ զնաց և կամաւ. Օժմանդազի թագաւորի սինու.  
մէկ յազրբի վրայ կայնաւ . յազրբից ջուր խմեց, եարէն պազաւ, յըն-  
կաւ երեսի վրայ : Զուր փորի ակով կընցնէր ու կերթէր :

Օժմանդազի թագաւորի վազիր, վաքիր, խան, բագ, մուֆախ, սու-  
թան կուգան աւզուշի : Վազիր տեսաւ օր ջուր կուզայ՝ արուն կուզայ .  
ասաց՝

— Մէկ քշէք տեսնենք էս ի՞նչ արուն այ էս ջրի հետ կուզայ :

Գնացին տեսան օր մէկ տղայ բինիթ բերնու վրէն յընկուկ այ . թի-  
կընքի լէնք մէկ գեալ այ . Ասաց՝

— Շիտկէք տեսնենք էս ի՞նչ մորդ այ :

Ու տաս խոզի թափան վրէն անջաղ անջաղ օր չրջին քամակի վրայ :

Վազիր տեսաւ օր էստուր յուշը զիսից զացեր այ, ասաց՝

(1) Ալարդախ : — (2) Թոչունի փետուրից : — (3) Ուտելիք խմելիք :

— (4) Հերթով : — (5) Փասած : — (6) Ճեղք :

(\*) Շեղատառ ո՞ն կարգալ՝ վր : Ես .

— իմ հապիկէն (1) բերէ՛ք :

Ու հապիկէն բերին . շիշմ կար մէջ . շշի խցանը ճիւթեց շշի բերնի մէջ : Վազիրն էլ հէքիմ այ . դեղ քուց բութ, տուեց եարին . էն սհաթին Բուրգէն օյաղցաւ (2) նստաւ ու բռուց՝

— Տուէ՛ք իմ խարջ :

Օր բռուց՝ առուէք իմ խարջ, նաֆաս (3) առաւ մարդկանց, գնացին զիսպան ծառերին, մեռան, վազիր քամակից ասաց՝

— Ի՞նչ խարջ այ կուզես :

Ասաց՝ — Էս ո՞րանդն այ :

Ասաց՝ — Օձմանդաղի թագաւորի սինոսն այ :

Ասաց՝ — Զունքի էնպէս այ, ևս մեզայ Ասծու, ևս դիտամ, թէ Փուազի Դարրանդն այ :

Վազիրն ասաց՝

— Հա՛յ հա՛յ, Փուազի Դարրանդ օխաւ աւուր ճանապարհ մեզանից հեռու այ :

Վազիր մտածաւ, օր էս փահլէվան շատ դոչաղ փահլէվան այ : Ասաց՝

— Անունդ ի՞նչ այ :

— Բուրգէ :

— Կ'խնդրեմ ընձի զօնախս էլնհս յէսօր :

— Լաւ, կեղնիմ :

ին սհաթին յետակ (4) բերին, Բուրգէն հեծաւ . էն վախս օր հեծաւ, էնպէս զօրեղ մարդ էր, կաթ կաթ չուր ձիու պորտից կերթէր : Գնացին աւզուշ էնելու վազիրի հետ :

Բուրգու հերս բռնեց, ձեռ թալեց մէկ գիւլլի գագա՞ն (5) քաշեց քօքից դուս հանեց . օխար քօք կար վրէն, ամեն քօքի վրայ կար օխար փութ խող . դրեց թեւի վրէն ու քշեցին :

Գնացին Օձմանդաղի թագաւորի քաղաք : Վազիր մտածեց՝ օր տանիւմ մեր թագաւորին շանց տամ, վայ թէ թագաւոր երկուղ անայ ըստուց . թէ շանց չխտամ, ուրիշ օր լսի, ընձնից զանգատ էնայ թէ՝ Վազիր, մէկ փահլէվան իր գտէ, ընչի՞ ընձի չասիր, ևս էլ թամաշայ էնի :

Յետոյ վազիր մտածաւ՝ կերթամ թագաւորի պալատի տկով կընցնիմ ու կը մտնիմ պալատ, թէ՝ Թա՛քաւոր, մէկ մարդմ եմ գտէ, երկուղալի այ, չվախինաս . թէ չես ուզէ, կ'տանիւմ, իմ զօնախն այ :

Գնաց մտաւ թագաւորի պալատ, ասաց՝

— Թա՛քաւոր, մէկ շատ դոչաղ մարդմ եմ գտէ :

Թագաւոր ասաց՝

— Պա՛քիր, բեւ տեսնենք ինչդ մարդ այ :

(1) Պարկ : — (2) Սթափեց : — (3) Շունչ : — (4) Աղատ Ճի : — (5) Մհծ Ճառ : Այսական ա՛լ կարգալ կոկորդից :

Ասաց՝ — Յու՛րզէ, իջի ձիուց, էթանք թագաւորի օթախ :

Խսկոյն յիջաւ ձիուց ու գնացին օթախ, թագաւոր աթոռ չանց տըւեց թէ՝ — Նստի՛ աթոռի վրայ :

Ու երօր նստաւ, աթոռ տակ ջարդաւ : Բերին քցին ապրըշումէ եորդան դոշակ, ղուշտուկի բարձեր, խորըսանայ քէջէք : Ու յընկաւ վրէն նստաւ :

Խաց, խորակ, չայ, փունջ, զինի, արալ րերեցին կերցրեցին ու խմցրին մինչեւ լուսացաւ : Խուսանալու ժամանակ՝ Բուրզէն կանչեց վազերին, ասաց՝

— Վա՛զիր, էրթանք աւղուշի :

Ու գնացին աւղուշ :

Գ.

ՄԵՆՔ ԽԱՐԱՐ ո՞ՐԹԵՂԷՆ ՄԱՆՔ՝

Դարագաղու թագաւորից :

Օծմանդաղի թագաւոր Դարագաղու թագաւորին վերգի կ'աէր :

Աշնան ժամանակի էրկու եասառու ճամբեց թէ՝ մեր խարջի վախան այ, գնացէ՛ք Օծմանդաղի թագաւորից մեր աշնան խարջն առէք էկէ՛ք :

Ու խեծան ձիանք գնացին :

Գնացին Օծմանդաղի թագաւորի մօտ թէ՝

— Թա՛գաւոր, պատրաստա՛ մեր թագաւորի խարջ, մենք տանինք : Թագաւոր ասաց՝

— Մէ քիչմ սարը էրէք (1), մինչի վազիրը գայ աւղուշից, խազնի բալնիք վազիրի կուշտն այ, ձեր խարջ տամ, տարէք :

Խսկոյն տեսան օր դարդեհնի շրջկոց յէլաւ, մէկ մարդմ էկաւ իրատեղի վրէն նստաւ :

Եասառուներ ըսին՝

— Թա՛գաւոր, կարելի այ, մեր խարջ պատրաստա՛, վազիրն էկաւ : Բուրզէն գոռաց՝

— Ի՞նչ խարջ :

Ըսին՝ — Ա՛զեր, քեզ զեռըայ (2) ի՞նչ կայ :

Ասաց՝ — էրթանք դուս, ձեր խարջ տամ :

Զեր թալեց թեւերից բոնեց, քաշեց հանեց դուս : Երեսուն էրկու տամաք քաշեց յամեն մէկին, ճիսեց ճակատներ, ասաց՝

— Հսկ աշնան խարջն այ, տարէ՛ք գարնան էլ կուզաք կ'ատանիք : Ու էդ մարդիք եարալու դպա Դարագաղու թագաւոր դնացին :

(1) Համբերէ՛ք : — (2) Քեզ վերաբերեալ :

Դարագաղութ թագաւոր տեսաւ՝ իրան եասառուները էկան, ատըլինեւրը իրանց ճակատ շարուկ, բերան իրանց արքնուու:

Ասոյ՝

— Եղ ի՞նչ բան այ էլէ ձեզի:

Եասառուներ ըսին՝

— Տունդ քար քանդ ըլնի, թագաւորութին արժան այ Օծմանգաղի թագաւորի փահէվնին, որ կամենայ՝ էս սհաթին երկինք գետին կ'քանդայ. քո թագաւորութին զուր այ:

Ամա արի գու Դարագաղի թագաւորին մէկ հատ զոչաղ փահէվան կէր, անունը Դամթը ա թ ը ա ն:

Թագաւոր վերցուց վազիր վաքիւ գնաց Դաթրան փահէվնի մօսու խնդրուաւ փահէվնից, թէ՝

— Գիտես, ի՞մ թագաւորութին քեզի այ, Օծմանգաղի թագաւորի քաղցի մէջ մէկ հատ փահէվան այ փէյդայ էլէ (1) ու մեր ձիւրոներին եարլամիշ էրէ, շինէ այիրլու (2), ճամրէ էկան: Էլ ընչի խամար ևմ ես քեզի պահէ, օր նեղ օր ընձի պէտք չ'գաս. կ'խնդրեմ օր էրթաս, օխատարուայ խարջ, աղջիկն էլ բարաբար առնես ու գաս:

## Դ.

Մենք խարար ո՞ր բաեղէն տանք՝

Օծմանգաղի թագաւորի մօսէն:

Օծմանգաղի թագաւոր ասաց թէ՝

— Վա՛զիր, քու տունը քանդուի, էղ ի՞նչ օյին էր բերիր մեր զլօս. հիմայ Դաթրան փահէվան կուգայ, ի՞նչ պատասխան տանք Դաթրան փահէվնին: Կանա՞ս, ասաց, իմ աղջիկ ուզես Բուրզէու համար որ սրացաւանք ըլնի Դաթրան փահէվնի դալուն, մեզի պախպանայ: Եթէ սրացաւանք չըլնի, կ'թողայ կերթայ՝ Դաթրան կուգայ մեղի բռուոր կ'սպանայ:

Վաշիրն ասաց՝

— Թա՛զաւոր կայնի տեսնանք կարա՞մ ուղեմ թէ չէ:

Ամա զու մի ասէ՝ թագաւորի աղջիկ քաղցից էրկու վերստ հեռու մէկ օթախ շինէ, մէջը կը մինէր: Վաշիրն յէլաւ գնաց գլաւ աղջիկ ասաց՝

— Թա՛զաւորի աղջիկ, յէլի բա՛ժնայ խայլին (3) դի՛ր ու կայնի դէմ, չաքան - զուզանը (4) տեղ բեր, որ Բուրզէն բերեմ քեզի խաւնի, քեզի տամ Բուրզէին:

(1) Յայտնուել: — (2) Այլանգակ: — (3) Մեծ հայելի ամբողջ հասկալը տեսնելու համար: — (4) Զարգարանք:

իսկ էն սհաթին թագաւորի աղջիայ բերնի ջռւր զունդ զունդ  
թափաւ ու յէլաւ կայնաւ բայնայ հայլու յառէջ ասաւօտէ մինչի յիշի-  
կուն անջաղ օր չաքանդուղան անդ բերեց յէլաւ կայնաւ զուռ կի-  
րիչիեր Բուրդէու ճամբէն :

Վազիրն զնաց Բուրդէուն ասաց թէ՝

— Բուրդէ էրթանք թագաւորի աղջիկ ահ'ո կը խաւնի՞ս՝ ու-  
զենք քեզի հա բար :

Ու խկոյն Բուրդէն ու վազիր զացին հալա զեռ էրկու վերսա հե-  
ռու էր Բուրդէն ասաց՝

— է՛յ հա՛ այ թագաւորի աղջիկ :

Ասաց՝ — էն այ :

Ասաց՝ — կանիմ, դարձի՛ :

Դարձան էկան քաղաք :

Թագաւոր ասաց՝

— Վա՛զիր, ի՞նչ էրիր ուղի՞ր աղջիկ թէ չէ՝ չէ :

Ասաց՝ — Թա՛զաւոր, էրկու վերսա հեռու էր՝ ասաց՝ կանիմ, չեմ  
դիտայ՝ կանիմ թէ չ'ա՛ռնի :

Ու խեծան ձիանք Բուրդէն ու վազիր զացին աւղու չի :

Ե.

Մենք խարար ո՞րտեղէն սահնք՝

Դարդաղի թագաւորի Ղաթրան փահլէվնից :

Յերեցին մէկ հաս փայթօն, քսան խինդ ձի լծուած, քառասուն  
խոդի յընկան Ղաթրան փահլէվնի զօլթուղներուց ու բերին փայթօնի  
մէջ զրին, յընկան ճամբէն : Սազով, սողբաթով (1), թագաւորով, վա-  
զիրով տարան քաղաքից դռւս խանին :

Թագաւոր խնդրուաւ թէ՝

— Դա՛ թրան փահլէվան, կը խնդրեմ օխտ աարուան խարջ, աղջիկն  
էլ հետ բարորոր վերցուս ու դաս :

Թագաւոր դարձաւ, էս մարդ զնաց :

Շատ քիչ Ասունած խարար ըլնի, խասաւ Օծմանդաղի թագաւորի  
քաղաք :

Խարար զնաց Օծմանդաղի թագաւորին թէ՝

— Ի՞նչ կենես, քու առանց քանդուի, Ղաթրան փահլէվան էկաւ,  
մնդ սազ կ'չարդայ :

Ու երկու զից Օծմանդաղայ թագաւոր զնաց յառէջ, ձեռ կապեց ու  
խընդրուաւ, ասաց՝

(1) Պատրաստութիւններով :

— Դամթրան փահլէվան, զու դիսես օր ևս հարուր տարի՛ ձեզի  
վերպի տող եմ: Հիմայ մէկ փահլէվան այ փէյքայ Եղէ իմ քաղրի մէջ՝  
ինչ արտը՝ Են արտաւ, ես մեզանոր չեմ Եղ բանի համար:

Դամթրան փահլէվան հերսոսաւ, մոտ թափ տռեց վերլոյ, ասաց՝

— Քեզ Ել քու փահլէվանն Ել լաւ մարդ կ' ինեմ:

Են սհաթին գողացին թագաւորի չոքեր թէ՛ աջայիր պափ բնձի  
սպանայ թէ չէ:

Ու գնացին թագաւորի պալատ ներս մասն, քառոսւն հոգի լլ' և  
կան Դամթրան փահլէվնի բնթի տէներ, վերցրին տարան օթախի մէջ՝  
ասլրշումէ հորզան առչակ, զուշտուկի բարձեր, խորըսանայ քէ չէք քը-  
ցին, նըտառցին վլոէն:

Դամթրան փահլէվան ասաց՝

— Դէ՛, թա՛զաւոր, խարջ պատրաստա՛:

Թագաւոր ասաց՝

— Կը խնդրեմ, Դամթրան փահլէվան, կը համբերիս մինչեւ վազի-  
րը դայ, խաղնի բաշնոներ վազերի կոռչան այ տամ՝ քո խարջ տար:  
Հետո զընդունի մէկ ել տեսան դարկեանի շրբնկացը յէլաւ:

Հուրզէն էկաւ, իրա տեղի վրէն նստաւ: Դամթրան փահլէվան մասձեց՝  
չըլնի՞ էս ըլնի ըստոնց փահլէվան:

Ասաց՝ — Դէ՛, թա՛զաւոր, խա՛րջ:

Որ խարջի անուն լսաւ Յուրզէն, հերսոսաւ, բեչեր դոմիի կոտշի  
պէս կայնան, ասաց՝

— Իօնչ խարջ այ գուզես:

Ասաց՝ — Քէ գեորայ ի՞նչ կայ:

Սաել բանին հասան յիրար օթախի մէջ: Ել աթոռ չը մնաց, շու-  
շայ չը մնաց՝ բոլոր կոտորեցին կուռու մէջ: Յետոյ Ել Յուրզէն շատ հեր-  
սոսաւ, մէկ բոռաց — օթախի փետեր էնալէս թառն, որ մէկ մսխալ խող  
գլխարվեր չեկաւ:

Տեսաւ որ՝ Դամթրան փահլէվան Յուրզէու յընթէ տակ թուլցաւ.  
մտաւ Բուրզէն Դամթրան փահլէվնի տակ, զարկեց գետին, գլոխը կըտ-  
րեց ու հերսոս դուս յէլաւ: Տեսաւ օր՝ Փայթոնչին փախէ քաղքից հե-  
ռու կայնէ:

Բոռաց՝ յարի՛, շան որդի:

Էկաւ Փայթօն կայնաւ օթախի դուռ: Զիս թալեց Դամթրան փահ-  
լէվնի ոտից բռնեց, քցեց Փայթօնի մէջ, ասաց՝

— Էսի օխտ աարուայ խարջ:

Կտրած զլօխն էլ վրայ քցեց, ասաց՝

— Էս էլ թագաւորի աղչիկ:

Ֆայթօնչին առաւ փախաւ դպա իրանց քաղաք:

Որ հասաւ Դարադաղու թագաւորի քաղաք, իսկ էն սհաթին թա-

գաւոր յելաւ սազով, դհոլով, զուռնով էլաւ Դաթրան փահլէվնի յառէջ։  
տեսաւ որ՝ Դաթրան փահլէվնի ջանդակ այ ֆայթօնի մէջ։

Ֆայթոնչուն ասաց՝

— Էղ ի՞նչ բան այ :

— Ի՞նչ բան, ասաց, յաղցուաւ, Բուրզէն էլ սպանեց :

Թագաւոր խանչեց վազիր, վաքիր խան, բագ, բոլոր բերեց կայնըցրեց, ասաց՝

— Մեր թագաւորութեն խաթի մէջ էլաւ մէ անդամ։ Հուր մէկայնչ օր կանէինք՝ Դաթրան փահլէվնի քամակով կանէինք։

Վազիրներ ասացին թէ՝

— Թա' գաւոր, քեզի զօր ունիս, թոփ էրա՛ քու զօրքեր, էրթանք Օծմանդաղայ թագաւորի վրայ։

## Զ.

Մենք խաբար ո՞րտեղէն տանք՝

Փոլադի Դարբանդուց։

Փոլադի Դարբանդու թագաւոր մատածաւ տեսաւ օր՝ յէսօր քառսուն օր կայ իրա փահլէվան դեւ չէ էրեւացէ։ Ղանչեց վազիրներ ու ասաց՝

— Յու՞ր այ մեր փահլէվան դեւ։ Բալքի էղաւ օր Սասմայ փահլէվաններուց մէկն էկաւ, մենք ի՞նչ պատասխան տանք։

Բոլոր յերգում կերան թէ՝

— Թա' գաւոր, քու դլօխ շատ լլնի, մենք խաբար չունինք փահլէվան դեւի մօտէն։

Ասաց՝ ըրա ո՞րն այ խաբար։

Ասին՝ — Մ ը ջ ա ն ա յ ջ ա զ օ ն (։)

Էս էլ դեւի կնիկն էր։

Թագաւոր ասաց՝

— Մըջանայ Ջազօ, յո՞ւր այ մեր փահլէվան-Դեւ։

Ասաց — Նո՞ր կը խարցուս փահլէվան դեւին։ հէ՞ն այ Առզանուայ մէջէն գլօխ կոխէ բոթ ծառ, ուսեր այ գլօխ, բոթ ծառից զուս չի գայ։

Թագաւոր յէլաւ տասնընինք բալթաչի (1) զրկեց, ասաց՝

— Գնացէ՛ք ծառ ճղէք, գլօխ հանէք ու զեւ առէք էկէք։

Գացին ծառ ճղին ու աւան էկան դեւին։

Թագաւոր ասաց՝

— Փա՛հլէվան, էղ ի՞նչ օյին լլէ քո դլօխ։

(\*) Բարսեղի ասելով, դեւի կինը «շատ յիմաստուն սէհրբազ էր, եղունգ կիրիշկէր» ամմն բան՝ կիմանար»։ — (1) Կային ունեցող։

Դեւն ասաց՝

— Սասումայ մէկ փահլէվան էկաւ : կոխի արեցինք, զարկեց իմ դուխ ճղեց, ևս էլ տուի ընդուր եարալամիշ էրի : ևս փախայ, էն լարեց չուր Առղանլուայ մէջն : ևս իմ եարի կոկծուն իմ գլօխ կոխի բոթ ծառ, էնի ընցաւ, էլ չեմ դիմէ դո՞ր այ թէ զոր չէ (1) :

Թագաւոր ասաց՝

— Իրա ո՞րն այ խարար, էն մարդ ո՞րտեղ պախ ըլնի :

Ասին — Թա՛րաւոր, Մրջանայ Զաղօն այ խարար :

Ու զանչեց Մրջանայ Զաղօն, ասաց՝

— Մը՛ րջանայ Զաղօն, յո՞ր այ Սասմայ փահլէվան :

— Օձմանդաղի թագաւորի պալատի մէջ քնած այ :

Չունքի կէս դիշեր էր :

Թագաւոր ասաց՝

Մը՛ րջանայ Զաղօն, մեռնիս ապրիս, էն փահլէվան քեզնից զուզեմ էն սհաթին :

Մրջանայ Զաղօն ծափ տուեց ու դնաց (2) :

Գնաց Օձմանդաղի թագաւորի օթախի մէջ յիշաւ, տեսաւ օր՝ Բուր զէն քնած այ :

Ասաց — Բու՛րդէ .

Ասաց — Զա՛նէ, Մրջանայ Զաղօն .

— Էկերեմ օր քեզի տանեմ :

Ասաց — Տանես կոյ կ'ատանես :

Ասաց — Երթում կեր մէկ բանովմ, օր քեզի չ'տանեմ, թէ չէ կը տանեմ : Թէ ընձի կ'սիրես՝ — չեմ տանէ, թէ չես սիրէ — կ'տանեմ :

Խարեց թէ՛ քե կ'սիրեմ :

Էն սհաթին Մրջանայ Զաղօն յետ դարձաւ. էկաւ. Փոլագի Դարբանդ, թագաւորի պալատի գուռ յիշաւ : Տեսաւ օր՝ էնքան այ բազմութեն թափէ — էլ հաս հէսար (3) չ'կայ : Ու ջալլագներ կայնած էն կասայ՝ ևս պախ վերցում դլօխ, էն կասայ՝ ևս պախ վերցում : Մէկէլ տեսան Մրջանայ Զաղօն զարտակ էկաւ յիշաւ :

Թագաւոր հարցուց — Յու՞ր այ Բուրդէն :

Ասաց — Զ'կարացայ բերէի :

Ասաց — Յընչի՞ :

Ասաց — Զօրբայ մարդ էր, զվախիս չը յազգեց :

Փահլէվան դեւն էկաւ կայնաւ թագաւորի յառէջ, ասաց՝

— Թա՛րաւոր, կը խարայ Մրջանայ Զաղօն, ասէ՝ կսիրեմ քէ, ըն դուց չը բերէ :

Ամայ ընդոնց ազգ սիրող-էրող չհն :

(1) Այսակող է թէ ոչ : — (2) Բարսեղի ասելով՝ Մ. Զ. օդի միջով թըռչում էր : — (3) Թիւ, համար :

Թագաւոր հերսոնաւ. Մը ջանայ Զազօյի վերէն թէ՝ — Զեմ գինա :  
մեռնիս-ապրիս, պատի բերես :

Մը ջանայ Զազօն ծափ տուեց ու դնաց :

Գնաց Օձմանդաղի թագաւորի օթախ, քնած տեղ փաթըթեց ևոր-  
դան դոշկով, քէջայ կարպտով, զարկեց զոլթուղն ու բերեց Փոլաղի  
Դարբանդի մէյզանի մէջ զրեց :

Բուրգէն քնած էր, հակամայ քնուց յիմցաւ տեսաւ օր՝ Փոլաղի  
Դարբանդին էկեր այ, բոլոր (1) բազմութեն էնպէս այ փաթթէ, օր  
դու պրծար : Հերսոնաւ բոսաց՝

— Տուէ՞ք խարջ :

Որ ասաց՝ տուէ՞ք խարջ, ընդրայ նափասից բոլոր ոխաթ (2) թա-  
փան ծովի մէջ :

Յետոյ զեւ խնդրուաւ թէ՝

— Թա՛գաւոր, տո՛ւ վերցնել :

Թագաւոր ասաց :

— Մը՛ րջանայ Զազօ, որտեղէն բերեր ես, էնտեղ տա՛ր էլի :

Մը ջանայ Զազօն վերցուց աարաւ Օձմանդաղի թագաւորի պալատի  
մէջ զրեց ու յետ դարձաւ :

Է.

Մհնք խարար ո՞րտեղէն տանք՝

Դարաղազու թագաւորի մօտէն :

Դարադաղու թագաւոր յէլաւ վերցուց բազում զօշուն, էկաւ Օձման-  
դաղի թագաւորի քաղքի բոլոր բոնեց, զիր զրեց թագաւորին թէ՝ ես  
փահլէվանդ ճամբես դայ էստեղ կոխւ էնենք, եա չէ քաղաքդ կաւիրեմ :  
Թագաւոր դանչեց վազիրին, ասաց՝

— Վա՛ զիր, կ'տեսնես էս բազմութեն, որ էկեր մեզի կոխւ կենայ .  
հրայ մենք կոխւ էնող չենք, ի՞նչդ էնենք :

Ասաց՝ — Բուրգէուն ասա՛, տես ի՞նչ կասայ :

Վազիր դնաց բոսաց՝

— Բու՛ բղէ, դուս յէլի :

Բուրգէն դուս յէլաւ ասաց՝

— Վա՛ զիր, ի՞նչ այ :

Ասաց — կ'տեսնի՞ս էս բազմութեն :

Ասաց — Հա՛յ հա՛յ հա՛յ, վա՛ զիր էս ի՞նչ այ :

Ասաց — Բստոնք էկած այ՝ թագաւորին սպանեն, ոխաթին էլ ըս-  
պանեն, քեզի էլ սպանեն :

(1) Տուրջ : — (2) Ժողովուրդ :

Ասաց — վա՛զիր, քու Աստուածն օր կ'սիրես, մէ իմ ձին քաշա՛զուս :

Ձին քաշեց զուս, խեծաւ, տասնըխինդ փթանոց զեռոզ վերցրեց, ասաց՝

— Վա՛զիր, Աստուած կանչա՛չ չ'փախնին. չուր փափակս առնիմ, չըլնի թէ մնամ կարօտով :

Ու քչեց գնաց զպա զօշուն, յէլաւ մէ բանձր զարի վրայ ու կայնաւ, տեսաւ օր՝ աստղունքին, քարին, թփին հէսար կայ, զալող զօշունին հէսար չ'կայ :

— Ե՛ : որ մէկ չ'բուամ, կը ճըղվիմ. մէ բուամ՝ ջանիս հանգստութեն ըլնի :

Մէկ օր չ'բուաց, տասվերկու զար քանդուաւ զըլխվեր էկաւ քարով ու թփով : Դօշուն յիմցաւ, թէ երկնուց գետնուց մարդ լցուաւ վրէներ, միսեցին յիրար ջարդել : Բոլորը կոտորվան, մնացին թագաւոր ու վաղիր՝ փախան գնացին :

Բուրգէն յետ զարձաւ էկաւ քաղաք, ասաց՝

— Վա՛զիր, էդ էր քու մարդիկ, որ պտի մեզի ջարդէին :

Են սհամբին զուս թափան տեսան՝ մէկ մարդ չէ մնացէ, բոլորը ջարգուած :

Դարադաղու թագաւոր ու վաղիր փախան էկան գաղաք, ինչքան օր զիտուն մարդիկ կար, ժողվին բերին թէ՝

— Մէկ աղամարդի ձեռից մեր քաղաք աւ իրուաւ :

Դիտուն մարդիկ ըսին՝

— Թա՛զաւոր, քանքանչիներ (1) գաի էն զարի տակ զարտկել տու՛ր : Մէ քանի քանքանչի ճամբեց. օխտն օր գիշեր ցերեկ էն զարի տակ զարտկեցին : Թագաւոր էլի զօշուն վերցրեց, գնաց Օծմանդաղի թագաւորի քաղքի չորս բոլորը առաւ :

Խարաք բերին Բուրգէն թէ՝

— Բու՛րգէ, է՛լ էն մարդիկ էկան կոիւ էնելու մեզի հետ :

Բուրգէն հեծաւ ձին, քշեց էն զարի զլօխ ու կայնաւ, տեսաւ՝ աստղունքին, քարին, թփին հէսար կայ, զօշունին հէսար չկայ : Միտք արաց՝ թէ մէկ բուամ, օր ջանիս հանգստութեն ըլնի, թէ չէ կը ճրդուիմ :

Մէկ բուաց օր բուաց, զարը քանդուաւ, Բուրգէն խասուաւ. Խորդի հետ, քարի հետ, թփի հետ ու զըլխվեր էկաւ :

Բուացին — Քեաման (2) թալէ՛ք :

Քեանանէր քցեցին. հարիր քեաման յընկաւ Բուրգէու ջան ու ջանգակ, ձեռ ոս բարք (3) բռնեցին : Ու վերցրին զպա Դարադաղու թագաւորի քաղաք առան, բերին մէյդնի մէջ կայնըցին : Ու զեցան օր

(1) Ականահատներ : — (2) Քեամանդ : — (3) Ամուր :

զիկ զարկել տին : վաղիրի մէկն էկաւ տեսաւ օր՝ էնպէս մէկ տղայ այ :

Ասաց՝ — Թա՛ գաւոր, ի՞նչ միտք կենես :

Ասաց՝ — Ի՞նչ միտք պահ էնեմ. օր էսի մեր քօք բերեց, պաի վիկ զանել տամ :

Ասաց՝ — Ես կիրշէկեմ էզի խամ մարդու տղայ չէ, խամ մարդու տղայ այ, մեր օրէնք իրաւունք չի տայ օր խամ մարդու վրայ սուր բանվի :

Ասաց — Բըր ի՞նչ էնենք :

Ասաց — Տա՛ ր քաղքից էրկու վերստ ցածր, ունես խորեր, որ հարիր գեազանոց են, որ էրկու հարիր գեազանոց են, մէկ խորի մէջ յիջորոտ, մէկ ջաղցի քար էլ գի՛ր խորի բերնի վրէն, էրկու գեւ էլ դիր պահապան, թու էրթայ մնայ յաւիտենական խորի մէջ :

## Ը.

**Մենք խաբար ո՞րտեղէն տանք՝**

**Սասումայ քաղքից :**

Սասումայ թագաւոր Զալ ունէր մէ հաս աղչիկ :

Աղչիկ գիշեր էրազին տեսաւ օր՝ իրանց փահէվան Յուրզէն չուր ծծեր ալի մէջ անկուած էր : Քնուց յիմցաւ տեսաւ օր էրազ էր :

Մատանց՝ մեր Յուրզէու մօտէն թագաւոր խաբար ունի՞ թէ չէ, Խասայ՝ լուսնայ՝ պահ էրթամ հարցնեմ տեսնեմ՝ խաբա՞ր է թէ չէ :

Մէկ սհաթմ էլ չ'քաշեց, աղչիկն էնպէս հերսուաւ, որ հերսէն պաի ձզուէր : Խոկոյն ձրագ վասեց, զպա Զալ թագաւորի օթախը դնաց : Թոխմախով դուռ ծեծեց, թագաւոր սասաց՝

— Ես վո՞վ այ մեր դուռ կ'ծեծայ :

Ասաց՝ — Ես եմ, թա՛ գաւոր :

Ասաց՝ — Ա՛ զչի, զանպայ (1), չե՞ս թողնէ քնինք :

Ասաց՝ — Թա՛ գաւոր, ի՞նչ քնինք, օր գիշերս էրազին տեսեր եմ, օր Յուրզէն չուր զոլթուղներ ալի մէջ անկուած : Ես սհաթին մէ խաբարմ կ'բերես — բե՛, թէ չես բերէ — պաի հերսից ձզուիմ :

Թագաւոր մատաց սասաց՝

— Վե՞րնից խաբար առնիմ, վե՞րնից չառնիմ կէս դիշերուայ ժամանակ : Եթամ Զըմբութ Ղուշի կուշտ, էնի տչխարք չատ մանգալող այ :

Զըմբութ Ղուշն էլ սիպասկ ծովի վրայ այ :

Էն սհաթին յեւաւ վերցուց Ռուստամ (իրա աղբէրն էր) Զէնով Յու-

(1) Լիրը :

վան ու գնաց դպա Զըմբութ Ղուշ : Զըմբութ Ղուշ տեսաւ օր՝ Զալ թագաւոր դպա իրան կուգայ , ահից էրկու վերսաւ էկաւ յառէջ :

— Զա'լ թագաւոր, ասաց, խէ՞ր ըլնի էսայ վախտ էկեր ես :

Ասաց — Զըմբութ Ղուշաւ մեր Բուրզէու մօտէն մէ խարար տուր :

Ասաց — Զա'լ թագաւոր, խացն ի գինին, աէր կննդանին, որ ես խարար չունիմ Բուրզէու մօտէն :

Ասաց — Ծըա վո՞վ այ խարար :

— Դոփոյ Եկ դասատի (1) : Էն այ խարար, թէ չէ ուրիշ մարդ խարար չունի : Համայ Ղոփոյ Եկդասատին էլ էս օխար տարի ձեր ազդի ձինից դասարգիւն էղեր այ (2) : Գնա' Ղոփոյ Եկդասատի կուշաւ :

Զալ թագաւոր ուզեցաւ օր պտի էթէր, ասաց — Էզմալ մի' գնա, գնա' մի խոնչա (3) պատրաստա՛ , լաւ ազիզ խորակներ լցրու մէջ, տուր Ռուստամին ու գնացէք դպա Ղոփոյ Եկդասատին :

Ու գնացին մէկ խոնչա պատրաստին ու դպա Ղոփոյ Եկդասատին գնացին :

Ղոփոյ Եկդասատին տեսաւ օր՝ Զալ թագաւոր իրա ազբրներով դպա իրան կը դայ, սկսեց օր պտի փախնէր : Զալ թագաւոր ասաց՝

— Ղոփոյ Եկդասատի, խացն ի գինին, աէր կննդանին, քեզի պատուի եմ էկի :

Ու տարաւ խոնչէն դրեց Ղոփոյ Եկդասատի յառէջ : Խաց կերաւ, գինի արադ խմաւ, դարձաւ թէ՝

— Զա'լ թագաւոր, խէ՞ր ըլնի քու դալը :

Ասաց — Մեր Բուրզէու մօտէն մէկ խարարմ տուր' :

Ասաց — Հարագաղու թագաւորի պալատի տակ մէկ խոր կայ , Բուրզէն էն խորի մէջն այ , ջաղցքար բերնին, էրկու դեւ էլ պահապան : Դէ զնա խա՛ն :

Ասաց — Կը խնդրեմ մէկ քոմակ էնես տղէներուն :

Ասաց — Թա' գաւոր , քու խաց կերեր եմ , քոմակ կանեմ , ամաքու ազբրներ ներդում ուտեն , որ ճամբէն չ'զուան : Էս օխա տարի ես ձեր ազդի ձինից դասարգիւն էմ էղէ :

Ռուստամ , Յովան երդում կերան Զալ թագաւորի գլուխ թէ՝ մենք երբէք չ'գոռանք ճամբէն :

Ու գնացին՝ Ռուստամ , Յովան, Ղոփոյ Եկդասատի :

Գնացին խասան Հարագաղու թագաւորի քաղքին , Ղոփոյ Եկդասատի ասաց՝

— Տղէ՛ք, էն էրկու դեւ կ'տեսնի՞ք , ձեր եղբօր պահապաններն են : Կանա՞ք ամէն մէկդ մէ քար բերէք ընձի :

(1) Պարսկերէն բառ է որ նշանակում է «Միջնորանի» : — (2) Հեռացել — (3) Մատուցաբան :

Ամէն մէկ իրեք փթանոց քար վերցին բերին : Դոփոյ Եկղաստու քամակին կար մէկ հատ պարսէտ . իրեք փթանոց քար դրեց մէջ , մէ անգամ պարտեց ու զարկեց՝ մէկ գեւին ջարդեց կոտորեց : Մէկէլ քարն էլ դրեց — մէկէլ զեւին էլ կոտորեց :

Ասաց — Դու Էստեղ կայնէք, ես էթամ :

Գնաց խորի վրայ . ձեռ թալեց ջաղցի քարն ու քաշեց . ասաց՝

— Բու՛րդէ :

Ասաց — Զա՛նէ, Դոփոյ Եկղաստի :

Ասաց — Յեղի խորէն կը հանիմ :

Ասաց — Կը հանես՝ կոյ կը հանես :

Ասաց — Զալ թագաւորի անուն երգում տուր, որ չ'գոռաս :

Ասաց — Իրեք հարիր քեզի պէս Դոփոյ Եկղաստի սատկի, որ ըստուց զառ եմ ելէ՝ կ'բոռամ :

Ու թողաց Դոփոյ Եկղաստի փախաւ :

Գնաց Ռուսամի, Յովանի կուշտ, ասաց՝

— Տղէ՛ք, կ'բոռայ, խետ իւլաջ չի լինի :

Շուռ էկէք աեսէք երդան դոշակ կարա՞ք դանիք :

Շուռ էկան գտան :

Ասաց — Փաթթէք իմ գլօխ, որ ձէն իմ անկաջ չընկնի :

Ու փաթթեցին Դոփոյ Եկղաստու գլօխ : Գնաց խորի վրայ կայնաւ, ձեռից բռնեց, քաշեց :

Բուրզէն յէլաւ խորի զրազ նստաւ, Իրիշկեց տեսաւ օր՝ Ղարադաղ թագաւորի քաղաքն այ : Ղանչեց Ռուսամին, Յովանին ասաց՝

— Էղանք չորս խոդի, քաղաքն առէք արանք ու ջարդէ՛ք :

Քաղաքն առան արանք ու ջարդեցին :

Խաբարն էկաւ Ղարադաղու թագաւորին, թէ՝ Յուրզէն խորից զուռ էկէ, իրեք մարդ էլ էկան հասան ինէ, ազգական այ — դիտեն, ազգական չէ — չեն զիտէ . քաղաք ջարդելով էկան : Մէ իւլաջ զիտես — էրա՛, չես գիտէ — մեղ էլ կ'ջարդայ :

Թագաւոր զանչեց էն վազրին, որ չ'թողեց Յուրզէու գլօխ զարկին, ասաց՝ — Վա՛զիր թէ մէ բան կարցար զու — կինես, չ'կարցար — պրծաւ զնաց :

Վազրիր յէլաւ զնաց Յուրզէու յառէջ . էն վախտ խասաւ Յուրզէուն, որ քրանքի մէջ վուզուրիշ էղած կ'ջարդայ սիաթ : Խամնել ժամանակին խնդրուաւ :

Ասաց — Վա՛զիր, ուրիշ մարդ չկայ գէր իմ յառէջ . դո՞ւ պաի զէր : Մէկ բանով բաշխեմ ձեր ազատութեն, էրկառվ չի . կեթաս ձեր թագաւորին կասես մէկ զարալայ (1) գրոց, ասավերկու սինօդ ձեռ դը-

(1) Պայման :

նեն, թագաւորին էլ փեշատ խփայ, թէ քանի որ աչխարք չէն այ, Օծանդաղի թագաւորին վերդի ավող ընհնդք :

Խակ էն սհաթին պատրաստեցին զարալէն, ավին : Վերցրին զարալէն էկան գոյայ Օծմանդաղի թագաւորի քաղաք : Խասրէխսաս (1) Եղնելով Ղոփոյ Եկդաստի ասաց՝

— Տղերք, զուք Զալ թագաւորի աղբէրներն էք, ձեղի աչխարքի մալ զովլաթ ունէք, ես չօչէն (2) եմ, ազքատ մարդ եմ. էղ զարալէն տուէք ընձի, ձեղանից յառէջ տանիմ տամ թագաւորին, որ մէկ բան բաշխայ ընձի տանեմ ուտեմ :

Ղաբալէն տուին Ղոփոյ Եկդաստին, ըսին՝

— Առ ու գնա՞ :

Դնաց տեսաւ օր մէ աղչիկ իրբուղ ձեռ զպա հաւուղ ջրի կերթայ. իրիշկեց տեսաւ օր էնպէս մէկ աղչիկ այ, արեգական կըսայ՝ զու զուս մի՛ էլնի, ես գելնիմ. ճրագի պէս լոյս կուտայ. ջուր կ'խմայ՝ գունդ գունդ բողզէն կերեւայ. Չուտես, չ'խմես օխտն օր գիշեր ցերեկ էդ աղչկայ մահջամալին (3) : բոյ բուսաթին թամաշայ էնես :

Յետոյ մտածաւ Ղոփոյ Եկդաստի՝

— Թագաւոր ի'նչ տայ, որ ըստուց լաւ էղնի :

Զիս թալեց աղչկայ թեւից, քցեք քամակր, փախաւ :

Բուրզէն իրիշկեց տեսաւ՝ Ղոփոյ Եկդաստին կ'փախցու թագաւորի աղչիկ. յըն՛տաւ յետեւ, մէկ գուրզ զարկեց. Ղոփոյ Եկդաստին ու թագաւորի աղչիկ էնպէս սըլվաղեց քարից, որ օխտ օր որ ման գէք չէր գիտէր թէ էս ուրիշ բան էր :

Վերցին զաբալէն ու զացին :

Ղաբալէն տարան ավին Օծմանդաղի թագաւորին : Թագաւոր կարգաց որ՝ Ղարադաղու թագաւոր իրան վերդի ավող էղեր այ :

Ասաց — Աղչիկ բերէք փէշքէշ աանք Բուրզէտն :

Բուրզէն ասաց՝

— Աղչիկ ավող էրեր եմ քարից :

Նստան քէֆ, ուտել, խել, ուրախութեն էնել :

— Հաջողութեան աղիքին :

Բուրզէն եւ քագաւորի աղիքին :

Ա .

Մենք խարար ո՞րտեղէն տանք՝

Փոլադայ Ղարբանդոց :

(1) Մօտ : — (2) Անտուն : — (3) Գերեցկութիւն :

Փոլագայ Դարբանդու թագաւոր զօշուն ժողվեց գնաց Սասումայ վրէն, որ պար կոիւ էնայ Զալ թագաւորի հետ :

Զալ թագաւորին մէկ տղայ կէր, անուն Ֆաղ կէ Ֆահ ու բամակ գնաց խնդրուաւ տղի մօտէն թէ՝ գուշմանն քաղքի բոլորն առեր այս ֆաղկէ ֆահրամազ ձին խնդաւ, Զալն էլ մէկ ձի խնդաւ, գնացին զօշունի մէջ կոիւ էնելու, Բուրզէն Օծմանզաղի թագաւորի քաղքից գուրս յէլաւ դպա Ասամայ քաղաք պար գէր, իսկ գուրս ելնել բանին մէ գրղի ձէն լսեց, իսկոյն յիմցաւ որ ֆաղկէ ֆահրամազի գուրզն էր :

Ասաց՝ — Տղէ՛ք, ջալդ էրէ՛ք, քէլէ՛ք, որ մեր քաղքի վրայ դիւշմանն այ տվէ :

Ու գնացին խասան, տեսան որ ահադին մէ զօշուն Զալ թագաւորի ֆաղկէ ֆահրամազի հետ կոիւ կենեն, իսկոյն հասնել բանին Բուրզէն մէ գուրզ զարկեց զօշունին, մէկ մարդ չ'պրծաւ, բոլորը կոտորվան :

Զալ թագաւոր տեսաւ որ Բուրզէն էկաւ խասաւ, փոստէ բարխէ բարբարանի (1) իրա ձեռքով տարաւ, քցեց Բուրզէի թեւերի վրէն, ասաց՝

— Քեզի արժան այ թագաւորութեն, ես ըխթիարցեր եմ:

Ֆաղկէ ֆահրամազ ինատ արեց, զարկեց գնաց աշխարք ման դաշլու թէ՝ որդե որ մէ զող տղայ ըլնի, ամսական փողով բերեմ քո քաղքի վրայ կոիւ :

Բ.

Մնաց մէ օխտ օր ժամանակի, Բուրզէն խնդաւ ձին, գնաց աւ էնելու, Տեսաւ՝ ջէյրանի մէկն յառեջէն փախաւ, ձին քցեց յետեւանց, Օխտ օր գիշեր ցերեկ տարաւ, բռնեց ջէյրան զրեց զիրկ։ Ու մտածաւ տեսաւ՝ էնպէս մէ երկիր այ, որ մօրիդ ծնանէ չի տեսէ։ Ուզեցաւ որ գլխիվեր էթեր, տեսաւ՝ գեւի մէկն ջամբու խետ կուգայ, մոթի մէկն երկինք, մէկն գետինք, մէկն գետին։ էն վախտ օր բերան յիրար կ'տփայ բուռ բուռ կրակ բերնէն կ'թափի։

— Բարեւ, ասաց, խո՛ղածին, ո՞րտու ց ես :

— Սասումայ քաղքէն :

— Դու, Բուրզէին կ'ճանչնա՞ս :

— Լա՞ւ :

— Ինչո՞վ փորցած կ'լինես զու :

— Էն վախտ օր ոսս կ'ճխաէր էնուր ոտին, ջուխտ ակընջից էլ կ'բռնի, ընձի կ'վերցէր ու կ'քցէր :

— Դէ յարի ոսս կոխս', ակընջներս էլ բռնա՛, տեսնիմ կարա՞մ քցեմ քեղի :

Ոս կոխեց, ակընջից բռնեց ու սխմեց, ոս կոտրուաւ գետին գը-

(1) Բարսղի ասելով՝ դա Քրդերի մնծութեան նշան է աջ թեւի վերայ :

նաց, ակընջներ ջուխան էլ քօքահան էլաւ, ու դոռաց թեւն, ասաց՝  
— Ամա՞ն, թո՞ղ :  
— Ի՞նչ թողամ, որ իսկ Բուրզէն եմ :  
— Ամա՞ն, Բու՞րզէ, թո՞ղ :  
— Թողեց, որ թողեց, գեւ մէ գիր գրեց, Բուրզէի ձին խատաւ (1).  
Բուրզէն կուրզմ զարկեց վըր գեւի գլխուն, ջան ջահնամի էլաւ,  
թամբ շլկեց ու հայան գնաց :  
Մէկ անծանօթ քաղաքմ ռաստ էկաւ, տեսաւ որ մէկ պառաւ նըս-  
տուկ մէտ տան մէջ ջահրայ կ'մանայ :  
— Նա՛նէ, ասաց, կընիմ քեզի տղայ : Ի՞նչ փէշակ էս քաղքի մէջ  
կայ, որ բանցնեմ ու քեզի պախեմ :  
Պառաւն ասաց՝  
— Ո՛րդի, լաւ գիւլաչչի կընե՞ս :  
— Գիւլաշ կպնող կա՞յ :  
— Գնա՛ թագաւորի գուռ, նստի բինակդաշու (2) վրէն, իսկ էն սհա-  
թին գիտեն որ գու գիւլաչչի ես ու գիւլաչչին կը բերեն որ գու կպնիս :  
Գնաց նստաւ էդ բինակդաշու վրէն, թագաւորի վազիրներ տեսան՝  
մէկ մարդ բինակդաշու վրէն նստած, ըսին՝  
— Գնացէ՛ օ մեր գիւլաշցուն տարէք թող կպնին :  
— Գնացին գիւլաշցուն տարան, ըսին՝  
— Թա՛ զայ գալող գիւլաշցի, գիտե՞ս մեր մէջ պահման կայ՝ որ մեր  
գիւլաշցին քեզի զարկայ գետին, վիզդ կ'կտույ անխօսալ :  
Ասաց՝ — Ես չեմ վախնայ, բերէ՛ք կպնինք :  
Էրկու, գիւլաշցի խասան յիրար :  
Բուրզէն թագաւորի գիւլաշցուն տոկեց գետին, չոքեր զարկեց վըր  
որտին՝ գուրմէք (3) բրդաւ, գուս յէլաւ եախից, տեսաւ՝ ջուխամ չա-  
մամ ծիծ յընկաւ գուս :  
Դու մի ասա՝ էդ գիւլաշցին թագաւորի աղջիկն այ, էնպէս այ  
կարգադրէ ուր մտքին՝ թէ որ տղամարդ զարկեմ գետին, ընդ ու վիզն  
պտի կտուեմ, ով որ ընձի զարկեց գետին՝ էն տղամարդ պտի առնեմ հա-  
թուրզէն որ զարկեց գետին, թագաւոր գոռալով էկաւ թէ՝  
— Մի՞ սպանի իմ գիւլաշցուն, բաշխի քեզ :  
Էն սհաթին բերեցին դհող գուռնէն, տարան Բուրզէին թագաւորի  
աղջկան պսակեցին, առան էկան, Բուրզէն կայնաւ թէ՝  
— Ես կերթամ պառաւ նանի տուն, ուրիշ տեղ չեմ էրթայ :  
գ.

Օխտ օր մնաց պառաւի տուն, ասաց՝

— Թա՛ գաւորի աղջիկ, էնպէս ձի կա՞յ քու հօր ձիաներու մէջ,

(1) Սատակեց : — (2) Պատգամի աթոռ : Ուրիշ հեքեաթներում այս  
աթոռի վերայ նստելը իննամախօսութեան նշան է : — (3) Կոճակներ :

օր ընձիւ պալացնայ :

Ասաց — Ուրբաթէ ուրբաթ հրեղէն այլըռ դուս կուգայ ծովից ։  
իմ խօր իլիսին ջարդելով կ'մերայ լցէ հայեաթ ու յետ կը դանայ :

Ուրբաթ օր գնաց ու ձին բանեց ։ խիծաւ էկաւ սպառաւի դուռ կայնաւ, ասաց՝

— Եա՞նի, թագաւորի աղչիկ, մացէք բարով, ես խօ գնացի :  
թագաւորի աղչիկ ասաց՝

— Բըլ ե՞ս :

Ասաց՝ Ես խօ քեզի տանող չեմ :

Ու գնաց խասաւ Սամայ քաղաք :

Մնաց իննը ամիս, իննը սհաթ, իննը գաղղայ (1), թագաւորի  
ալչիկ չոփեց զարկեց գետին մէկ խատ տղայ բերեց, որ տղէն այ Բուր-  
զիկ վասասակ :

Բոլոր ժողովվան էկան, որ պէտք այ տղին անուն դնեն : Աղչիկն  
ասաց՝

— Ընձից սալայի մարդ չ'կայ, ես կ'գնեմ :

Տղի անունն զբեց թ դ բ ու ր է Շ է ր ա ն :

Թղբուրե Շերան :

Թղբուրէ Շերան էղաւ էրկու տարեկան տղայ, կերթէր ճան խա-  
ղալու, ձեռ կը թլէր տղէներու ականջ, կ'բռնէր յանկըջից ու կը թը-  
լէր՝ ջանդակ կերթէր, յանկաջ կը մնէր :

Քաշեց մէ ժում մէ ժամանակ, մինչեւ թղբուրէ Շերան էղաւ տաս-  
նրիխնդ տարեկան տղայ :

Տեսաւ օր քաղքի զրադ չաղըր չաղըրի վրայ զարկուած : Գնաց  
ասաց՝

— Ես ի՞նչ չաղըր ե՞ն :

Ասացին — Թաղկէ Թահրամազի ձիաւորներն ենք սուս կաց, որ լսի,  
փորդ կ'թափայ :

Ասաց՝ Ո՞ր բն այ Թաղկէ Թահրամազի չաղըր :

Ասացին — Էդ մենծ չաղըր ընզոր չաղըն այ :

Գնաց չաղըրի դուռ կայնաւ ասաց՝

— Թաղկէ Թահրամազ ես, ինչ ես, դուս յարի' :

Թաղկէ Թահրամազ դուս էկաւ :

Ասաց՝ Գնա՞ զրա՞ ընձիւ ձիաւոր :

Ասաց՝ Արի թրիս տկով անցի, օր քեզ զրեմ ձիաւոր :

Ասաց՝ Կայնի էրթամ ձիս խեծնիմ դամ, բարքի դու ընձիւ չ'զը-  
րես ձիաւոր :

(1) Բօղէ :

Ու գնաց տուն, պատմեց մօր, թէ մէկ մարդ էկէ, կսի արի թըրիս  
տկով ընցի, որ քեզի վերցում ձիաւոր:

Մէրն ասաց՝

— Ո՛րդի, գնա՛ ձեռքմ տղամարդի շօր բեր:

Մէր խազաւ, էղան ջուխտ ձիաւոր, քշեցին գացին չադրի յառէջ  
կայնան:

Ասաց՝ — Վէ կաց մեղի ձիաւոր գրէ՛ · թէ չես գրէ — կ'բրդենք  
չադրդ վրէլ:

Ֆաղէկ Ֆահրամազ անսաւ օր էսառնց հետ իլլաջ (1) չիլնի, ասաց՝  
կանի տանիմ ըցկեմ Բուրդէի ձեռ, ըստոնց համէն թող գայ:

Յէլսն ձիաւորուան ու գացին Սասմայ քաղաք:

Ֆաղէկ Ֆահրամազ զիր գրեց ճամբխեց Զալ թագաւորին՝ եա արի  
կոիւ էնենք, եա չէ քաղաքդ սաղ կաւիրեմ:

Զալ թագաւոր զանչեց Ծուստամին — Գնա՛ · ասաց, խելք այ,  
խրատ այ ա՛ռ արի՛ :

Ծուստամ խեծաւ ձին, գնաց:

Ֆաղէկ Ֆահրամազ ասաց՝

— Թղբուրէ Շէրան, գնա՛ · հէս այ էկաւ, գնա՛ կոիւ արմ՛:

Խեծաւ ձին ու գնաց յառէջ, ասաց՝

— Կայնի՛, մի՛ գա:

Ու զուրզմ քցեց · Ծուստամ յընկաւ քիթ ու մոթի վրայ · յէլաւ  
փախաւ քաղաք:

Զալ թագաւոր ասաց՝

— Տգա՛յ, յընչի՞ էկաւ:

Ասաց՝ — թագաւոր, քու գլօխ չատ ըլնի (2), մէկը կայ էտոնց  
մէջ, որ զուրզ կ'թալայ իսկոյն կասես թէ մնր Բուրդէի զուրզն այ:

Ասաց՝ — Գացէ՛ք Բուրդէին զանչէք բերէ՛ք:

Բուրդն օր էկաւ, թագաւոր ասաց՝

— Բու՛րդէ ·

— Ի՞նչ այ, թա՛դաւոր.

— Օր դու գացիր օտարութեան մէջ ամիսմ էրկու անցցեր, իսօ  
չե՞ս կարգուէ:

Ասաց՝ — Թագաւոր, օխա օր մէ թագաւորի աղչիկ առեր եմ:

— Դէ գնա՛ քաշմ՛ · ջանդ զուս գայ:

Յէլաւ գնաց յառէջ:

Թղբուրէ Շէրան ձին խեծաւ, զուրզ վերցրեց, քշեց Բուրդէի վրէն:

— Առ, ասաց, քեզի մէկ զուրզ քցի:

Խոլ էն սհաթին քցած ժամանակ Բուրդէն բռնեց զուրզ: Գուրզմ

(1) Հնար: — Եսատ պարի:

Ել Բուրգէն զարկեց — Թղթուրէ Շէրան էկաւ յընկաւ ձիու տոնադների  
արանք . յիջաւ օր տղի զլօխ կտռէր : Մէր ճանչցաւ բռուց՝  
— Նա գիտա՞ս մեր տղէն այ, ի՞նչ կենիս :  
հէր մէր յիրար հետ խօսալով տղի օյալ (1) վրէն էկաւ ասաց՝  
— Նա'նէ, էդ ո՞րն այ .  
— Բու խէրն այ, լա'ս (2) :  
Թագաւորի աղջիկ ասաց՝  
— Բո'ւրզէ, էս մարդ քու ի՞նչդ այ .  
Ասաց՝ — Իմ հօրօղոր տղէն այ .  
Ասաց՝ — Ըրը ընչի խամար կոիւ կանայ ձեզի խետ .  
Ասաց՝ — Զունքի թագաւորութեն Զալ տուէ ընձի, նէհրակութեն (3)  
կենէ ընձի խետ .  
Ասաց՝ — Զեր թագաւորութեն ընչի վրայ այ :  
Ասաց՝ — Փոստէ բրինէ բարբարանի :  
Բուրզէի թեւից տուաւ, քցեց Ֆաղկէ Ֆանրամազի թեւերու վրէն :  
կղան մէկ հօտ մէկ հովիւ :  
Բոլոր ձիաւորներ ջարդեցին, Էլան դպա Սասմայ քաղաք գնացին :  
Թագաւոր դհոլով, զունով, սազով, սողբաթով, թոփով ջարախանով (4),  
վաղիրով, վաքիրով նոր տարան Բուրզէին պսակեցին :  
Բատոնք խասան իրանց մուրազին,  
Դուք էլ խասնիք ձեր մուրազին :

---

(1) Աւշքը : — (2) Քրդ. նշանակում է՝ ո՞րդի : — (3) Ոլու : — (4) Վասոզ :

Ա ա ր դ ա ն Գ ա լ ո ւ ս տ ե ա ն + Յ Ձ ա ա ր ե կ ա ն ։ բ ա յ ց զ ե ռ ա շ խ ո յ ժ ։ հ ա ր ո ւ ս տ յ ի չ ո ղ ո ւ թ ե ա մ բ ծ ե ր ո ւ ն ի է ։ Է ջ մ ի բ ա ծ ի ն ն ա զ ա ղ թ ե լ է վ ա ն ա յ ն ա հ ա ն գ ի Զ ի բ ի խ լ ո ւ դ ի ւ զ ի ց ի ց ։ ո ր տ ե լ ն ա պ ա ր ա պ ո ւ մ է ր հ ո ղ ա գ ո ր ո ծ ո ւ թ ե ա մ բ ։ Ռ ո ւ ս ա հ ա յ ա ս տ ա ն ո ւ մ ա պ ր ո ւ մ է օ ր ա կ ա ն վ ա ր ձ ո վ ։ Ն ո ր ա ո ւ ս ո ւ ց ի չ ն է ե զ ե լ Մ ո ւ խ ո ի Գ ի ւ լ ա ն ։ ո ր ե ր ե ք ա ն գ ա մ ա յ ց ե լ ե ր է Պ ո լ ի ս ե ւ մ ի ժ ա մ ա ն ա կ ա յ ն ա ն ե ղ ա շ ո ւ ղ ո ւ թ ի ւ ն ։ (\*) ա ր ե լ ։

Վ ա ր գ ա ն ի պ ա տ մ ա ծ ա ւ ա ն գ ո ւ թ ի ւ ն ն ե ր կ ա յ ա ց ն ո ւ մ է ի ր ա ն ի ե ւ Տ ո ւ ր ա ն ի գ ա ր ե ւ ո ր կ ո ի ւ ն ե ր ի ց մ է կ ն ։ ո ր տ ե զ գ լ ի ս ա ւ ո ր հ ե ր ո ս ն է հ ա ն գ ի ս ա ն ո ւ մ Ռ ո ւ ս տ ա մ ։

## Ռ Ո Ս Ա Ա Մ

### Ա.

Ք ե ւ Խ ո ս ր ա յ ՝ Ի ր ա ն ա յ թ ա գ ա ւ ո ւ ր ն է ր ։ Ա լ ւ ա ս ի ա յ ՝ Թ ի ւ ր ա ն ա յ թ ա գ ա ւ ո ւ ր ն է ր ։

Մ է կ օ ր Ք ե ւ Խ ո ս ր է ն ո ւ ր դ ի ւ ա ն ի մ է ջ կ ՚ կ ա ն չ ի ա յ ա ն (1) մ ա ր դ ի ր ։ Հ ո ք ի վ ր է ն կ ՚ կ ա յ ն ի ր ։ կ ՚ զ ր ո ւ ց ի կ ա ս ի թ է ։

— Ի ր ա ն ա յ մ է ջ ի ն չ ր ա ն օ ր ։ ե ս բ ո ն ի մ ա ն ի մ ։ վ ո ՞ վ կ ա յ օ ր գ ե ա յ ի մ յ ա ռ է ջ ։

Տ ի ւ ն ա ռ ո ւ զ ա ր ա ս ա ց ։

— Թ ա ՞ գ ա ւ ո ւ ր ։ խ օ ս ք ն ի տ ի ւ թ ա գ ա ւ ո ր ի ս ։ մ ե ն ք ք ի ւ խ օ ս ք չ ե ն ք կ ա ն ա յ կ ո ւ ր ի ։ ա պ ա է ս օ ր Ռ ո ւ ս տ ա մ ք ի ւ դ ի ւ ա ն ի մ է ջ չ ի ։ լ ա ւ չ ի օ ր գ ի ւ է ս ա խ օ ս ք ի ր կ ա ս ի ս ։

Տ ի ւ ն ա ռ ո ւ զ ա ր օ ր է տ խ օ ս ք ն ա ս ա ց ։ թ ա գ ա ւ ո ր բ ա ն ի ց զ ն ջ ի լ գ ր ի ց վ ի դ ։ ա ս ա ց ։

— Վ ո վ օ ր գ ե ա յ է ս ա մ ա ր դ ի ւ ն ո ջ ա յ (2) է ն ի ։ է ն մ ա ր դ ն ը ն ձ ի գ ր ւ լ ե ս ի վ ե ր չ ի բ ե ր ի ։ տ ե ս ն ա ն ք վ ո ՞ վ ի ր ա ն ա յ մ է ջ կ ՚ կ ե ա յ գ ե ո ղ ա յ (2) կ ա ն ի ։

Մ է կ փ ա լ ի ւ ա ն խ ե ծ ա ւ ո ւ ր ի մ է ն ։ ս ի լ ա հ ն ի ր կ ա պ ի ց ո ւ ր մ է ջ ք ։ գ ր ս ա ց Ռ ո ւ ս տ ա մ ի գ ի ւ ա ն ։ Ռ ո ւ ս տ ա մ ի ի ր ի շ կ ա ց ա ս ա ց ։

— Փ ա ՞ լ ի ւ ա ն ։ ո ՞ ր տ ե զ ա ց կ ՚ կ ե ա ս ։

Ա ս ա ց ։ — թ ա գ ա ւ ո ւ ր ի ս ա ր է ն կ ՚ գ ե ա մ ։

Ա ս ա ց ։ — թ ա գ ա ւ ո ւ ր ի ի ՞ ն չ կ ա ն ի ։

Ա ս ա ց ։ — թ ա գ ա ւ ո ւ ր յ է ր է կ յ ի ր ի կ ո ւ ն դ ի ւ ա ն դ ր ի ց ։ ո ւ ր ա յ ա ն մ ա ր դ ի ր ժ ո ղ լ ր դ ի ց ։ է զ ա ւ չ ո ք ի վ ր է ն ։ ա ս ա ց ։

(\*) Ա շ ո ւ ղ ն ե ր Ա ր ե ւ ե լ ք ո ւ մ կ ո չ ւ ո ւ մ ե ն թ ա փ ա ո ւ ա կ ա ն ե ր ա ժ ի շ տ ա ն ։ ո ր մ օ տ յ ի շ ե ց ն ո ւ մ ե ն մ ե զ մ ի ջ ն ա գ ա ր ե ա ն ա լ ո ւ թ ի ւ ն ե ր ի ն ։ ի ր ա ն ց ա ն բ ա ժ ա ն ը ն կ ե ր ո ջ ։ ե օ թ ն ա լ ա ր ս ա զ ի հ ե տ ։ ն ո ք ա շ ջ ո ւ մ ե ն ք ա ղ ա ք ք ա ղ ա ք ։ դ ի ւ զ դ ի ւ զ վ ա ս ա վ կ ե լ ո ւ ։ ն ո ց ա ծ ր ա գ ի ր ն բ ա ղ կ ա ց ա ց է ա ռ հ ա ս ա ր ա կ լ զ ի ւ ց ա ղ ն ա կ ա ն ա ւ ա ն գ ո ւ թ ի ւ ն ե ր ի ց («Ֆ ե ռ ո ւ Օ լ լ ի») ։ «Շ ա ն ի ր ա յ ի լ» ։ «Շ ա ն Ա բ ա ս » ։ ե ւ ս ի ր ա ն ա ր ա կ ա ն հ ե ք ե ա թ ն ե ր ի ց («Գ ն ա ր Մ ի լ զ ա ») ։ «Բ ե ա ր ա մ ի » ։ Պ ա տ մ ո ւ մ ե ւ ե ր գ ո ւ մ ե ն տ ա ն կ ե ր է ն ։ — (1) Մ ե ծ ա ւ ո ր ։ — (2) Խ ն դ ի ր ։

նեմ, մարդ կա՞յ օր ասի՞՝ կարիւլ չիմ անէ (1)։ Տիւս Նառագար ասաց՝

— Թա՛ գաւուր, քիւ խօսք խօսք ի, մինք չենք կանայ քիւ խօսք կուտրէ։ Ապա Ռոստամ քիւ զիւանի մէջ չի, լաւ չի օր աիւ էտա խօսք քիր առանց Ռոստամին քիւ զիւանի մէջ կասիս։ Էն խօսքն օր Տիւս Նառագար ասաց, թագաւուր էնոր բռնից, զնջիլ գրից վիզ։ գրից բանատուն։ Սապագ ի՞նչ, տեսնանք վո՞ր մարդ կ'զեայ ոջայ էնի, մարդիւն թողնայ։

Ռոստամ ասաց՝

— Փա՛ լիւան, յէլի գնա՞՝ Քիւ Խոսրայ թագաւուրին ասա՞՝ Ռոստամ կասայ՝ Աս էնոր ձեռ կ'պաղնեմ, էն միր թագաւուրն ի, կ'խնդրեմ Տիւս Նառագար ասայ իմ խաթըր թողնի, էնիկ մեր ամակդա՞րն (2) ի։

Փալիւան էլաւ գնաց թագաւուրի քով, ասաց՝

— Թա՛ գաւուր, Ռոստամ կ'ասէր՝ Ես էնոր ձեռք կ'պաղնեմ, խօսք էնու խօսքն ի, էն մի (3) թագաւուրն ի, ամա Տիւս Նառագար մի ամակդա՞րն ի, պէտք ի ասայ իմ խաթըր թողնի։

Որ փալիւան թագաւուրին ասաց, թագաւուր շատ ըորկաւ (4), բիրից Տիւս Նառագար զնջլեռվ տարաւ, թալից զնդան, յերդիւմ էրաւ, որ պաի զնդանի մէջ մնայ, չուր մնոնի։

Էն փալիւան զնա՞ց Ռոստամին ջուար տարաւ։ Տիւս Նառագար, որ տիւ ոջայ արիր, էնիկ բռնի քիւ ինատուն թալից զնդան։

Ռոստամ էնտեղ ջիւրիւ տւաւ (5)։ ասաց՝

Որ թագաւուր էն մարդն իմ խաթըր չը թողից, էլ իս էն դիւշման կըլնինք, կ'զարկինք մէկ մէկու։

Ասաց Ռոստամ, զիւան իդի (6)։ ուր մարդիր կանչից ասաց՝

— Իս Քեւ Խոսրայ թագաւուրի խիստ պաի զարկւիմ։

Ժողվրդից ուր կօշտն, կասի՝ սաքսան խաղար չաղըր էղաւ, ամեն չագըր սաքսան խաղար փալիւան էղաւ։

Իրանայ մէջ էղաւ էրկու թիւրայ (7)։

## Բ.

Մէկ փալիւան կէր, անուն Քեւշիւ։

Քեւշիւ գնաց Թիւրան Ալւասիայ թագաւուրին ջուար տարաւ։

Ալւասիայ խարցնից ասաց՝

— Փա՛ լիւան, աիւ ո՞րտեղացի իս։

Ասաց՝ Իս Իրանայ իմ։

Ասաց՝ Տիւս Իրանայ ընչի՞ ես իկի Թիւրան կան կ'զեաս (8)։

(1) Համաձայն չեմ։ — (2) Օդնական։ — (3) Մեր։ — (4) Բարկացաւ։  
— (5) Զայրացաւ։ — (6) Խորհուրդ կազմեց։ — (7) Մաս, բանակ։ — (8) Կ'ըրջիս։

Ասաց՝ — Իս իկիր իմ քիզի մուշտուլուզ (1) իմ բիրի :

Ասաց՝ ի՞նչ ի :

Ասաց՝ — Իրանայ թագաւոր Քեւ Խոսրէն Ռոստամը ընկեած յիրարէղած էրկու թիրայ, կ'զարկին մէկ մէկու մարդ կսպանին : Յսօր քիւօրն իկիր ի : Կօշուն կէնիս կէրթաս Իրանայ միծն կսպանիս, Թիւրանայ պուճուրն տեղն կ'դնիս :

Ալւասիայ ասաց՝

— Աղէկ ջուռար բիրիր . յիրկւան կանչիմ էն միծաւրներ բիրիմ, տեսնանք էնոնք ի՞նչ կասեն :

Յիրկուն յրողղից (2) միծ մարդիր ժողւից բիրից . յրողղից Հման բիրից, Փիրան, Յամիւսէ Վեաշան, Կղակղաէ Զինի (3) . Աչքապիս, Կղէւլիւն : Թագաւոր ասաց թէ :

— Հման, կասին՝ Իրանայ թագաւոր իսատ Ռոստամին յընկած յերար . կօշուն էնինք էրթանք էտունց վերէն : Ի՞չ կասիս :

Հման ասաց՝

— Թա՛գաւոր, թէ իմ խօսքին ականջ կանիս՝ պար չէրթաս կորիւուր (4) երկրի մէջ կորիւ կանին, ի՞նչ ունիս որ արտ էրթաս :

Դոր (5) Փիրանից խարցունց կանի . Փիրան ասաց ուր թագաւորին՝

— Ինչկանդար կարող իս քիւշմանին յաղթիս՝ ոս ճիստի գլխուվերէն :

Թագաւոր յրկուն ժողւից ուր կօշուն, ասաց՝ Փիրան աղէկ վուղիր ի :

Քիրից Փիրան խլզաթ (6) տւից :

Կօշուն ժողւից զնաց Իրանայ վերէն կորիւ . Գնաց Սիրանայ տեղ չադրնիր զարկից . Էնարից թուղթմ գրից ճամբիսից Քեւ Խոսրայ թագաւորի խամար, ասաց՝

— Եան կ'զեաս ընձի խիտ կորիւ անիս, եան քիւ խող քեար կ'վերուցիմ տանիմ :

¶ .

Քեւ Խոսրէն յրողղից ուր փահլւանքուիր ժողւից իրի կասի՝

— Փահլւանքտիր, Թիւրանայ թագաւոր էկիրի իմ կորիւ կուզի :

Մէկ փահլւան կար, անուն Պէտագայ . թագաւորն ասաց՝

— Պէտագայ, արտ բայրաղ (7) վերիցիւ էրթանք կորիւ :

Պէտագայ ասաց՝

— Թա՛գաւոր, քիւ մէր գուլ (8) ի, քիւ մէր տու ընծիւ զամ քիւրաղ վիրուցիմ, էրթանք կորիւ :

(1) Լուր : — (2) Ուղարկեց : — (3) Զինաստանցի : — (4) Իւր : — (5) Թետոյ : — (6) Բննծայ : — (7) Դրօչ : — (8) Այրի :

Թագաւորն ասաց՝

— Իմ մէր չըմ զիսի իմ խօսքին ականջ կանի և ան չանի ։ Երթանք կու անենք՝ զանանք՝ գեանք՝ իմ մօր մօտէն խարցունց անենք ։ տեսնանք՝ կէրթայ մարդիւ ։ որ զնաց՝ իմ մէր կ'ասմ յիզիւ ։

Պէտագան ասաց թագաւորին՝

— Թէ որ երթանք կու անենք, զալիւ ժամանակ տիւ թագաւոր իս ախր բալքի ախր քիւ մէր չուիր ընձիւ ։ Հիմայ պէտք ի սասընձիւ սորա (1) երթանք կու անենք ։

Քեւ Խոսրէն զնաց մօր մօտ, խարցունց արաւ, ասաց՝

— Թիւ բանայ թագաւոր էկիր իմ Արքանայ տեղ (2) կօշուն զրիր, աւիրից ջուաթ արից ընձիւ խամար՝ կզհաս իմ կու չխօ (3) քիւ խողքեար կ'վիրուցիմ կ'տանիմ ։ Պէտք է Պէտագան ասնիս, որ զեայ իմ բայրադ վիրիւցի, երթանք կու ։

Քեւ Խոսրի մէր ասաց՝

— Պէտագան չի կանայ քիւ բան ահանայ ։ տիւ իմ խօսքին ականջ արա՛ ։ Իս քեզի ինչ կասեմ ։ զնա՛ Տիւ նառլար զընդանից խա՛ն ։ Խլզաթ տու՛ ։ ճամբիսի երթայ Խոսանմի մօտ, Ռոստամ զեայ քիւ զործ ակենայ ։

Քեւ Խոսրէն յերդիւմ արաւ թէ՝ էն մարդ չիմ խանի զընդանից ։ Մէրն ասաց՝

— Քիւ քէֆովեարա՛ ։ թէ որ իս ասիմ՝ իս իրիկ չըմ անի (4) ։ տիւ պաի ասիմ՝ իմ մէր ընձիւ սապատ (5) էկնի, Թիւրանայ թագաւոր գեայ իմ թափան առնի ։ իս սապատ չիմ էկնը ։ Որ տիւ կամնցար ասիր, իս էլ կէրթամ էն մարդն կառնիմ ։

Թագաւոր բիրից խարսնիս արաւ, ուր մէր տէից Պէտագային ։ Պէտագան բայրազն վիրիցից, զրից թիւի վիրէն, կօշուն քեաշւաւ ։ Գնացին Ալւասիայի խիս կու ։

Իրիք օր զիշիր ցերկի կու արին ։ Էնինց կու էզաւ, շատ մարդ կոտրւաւ ։ Էնոց ձէնից, Էնոց զիւրզիրւ զարկիլից Ասծու հրիշտակնիր էրինուց թամաշայ կանդնան էտունց կու ։ Շատ մարդ ասաւ ։ Էտունց զարբից (6) աշխարքն աւիրաւ ։ Խելօք մարդիր ասին որ՝ Քեւ Խոսրայ թագաւոր Ալւասիայ թագաւոր կու կանին, Էնունց զարրի ձէն ընկիր աշխարք ։

Իրիք օր օր թըմըմաւ էտունց կու ։ Պէտագան ասից բայրազ վաւ թագաւորն էլ փախաւ, Էնոր կօշուն բիթուն փախան ։

Մէկ մարդ, անուն Գոզարզ (7) ։ ուր թախումով (8) մնաց մէյզանի

(1) Ապա ; — (2) Պատմովի ասելով՝ զընանքի տեղ է ։ — (3) Ապա թէ ոչ ։ — (4) Զերմ ամուսնանայ ։ — (5) Պատճառ ։ — (6) Հարու ածից ։ — (7) Ռոստամի քեռին է ։ Նա ունէր 24 որդի, որոնք իրրեւ «ասիւծներ են ճակատամարտում» (Թիրզուսի) ։ — (8) Խմբով ։

մէջ . Ալւասիայի կօշուն էտունց վերէն ժողվը բարան :

Ալւասիայ ասաց՝

— Ետայ կօշուն էտայ մարդիրուց յիտ տուէք, Հման էնուր խիտ կոիւ անի :

Հման Գողարզ իրիք օր գիշեր ցերեկ զարկւան մէ մէկու : Հման ասաց Գողարզին՝

— Քիւ թագաւուր փախիր ի, տիւ մէյդնից իլի տիւս : Գողարզը ասաց Հմանին՝

— Ո՞րն ի սալըդ տւիր, որ իմ տան (1) մարդ մէյդանից ըլնի փախի : Հման կասի Գողարզին՝

— Որ էնհնցի, յրողի քիւ բայրաղդար քիւ թագաւուր կօշունով թըդ գեայ մէյդան կանգնը . իմ թագաւուր իմ դլխու վերէն կայնուկ ի, իս չեմ կանայ մէյդանից ըլնի տիւս : Քիւ թագաւուր որ էկաւ մէյդան, իս յոջիւ քիւ կլնիմ տիւս :

Մէկ տղայ կայ, անուն Բահրամ, խեծաւ գնաց թագաւուրի մօտ ասաց՝

— Յսօր իրիք օր մհնք Հման մէ մէկու կը կուտուրինք . Հման ասաց՝ դնա՛ քիւ թագաւուրին ասա բայրաղ բիրի մէյդան զարկի, մինք յիւղիւ քիւ քեաշուինք :

Բահրամ ասաց՝

— Յիւ՞ր ի քիւ բայրաղդար, բայրաղ վիրիւցի էրթանք մէյդան, որ Հմանըտուն կուռց քեաշուին էրթան :

Քիւ Խորայ թագաւուր կանչից Պէտագայ, բիրից տսաց՝

— Սրի՛ բայրաղ վիրիցիւ էրթանք մէյդան կոիւ :

Պէտագան բայրաղ թալից գետին . Բահրամ խասաւ մէ լանդիւ (2) զարկից էնու սրտի մէջ, բայրաղ վիրիցից, գնացին մէյդան :

Բայրաղ օր տարան մէյդանի մէջ, Հմանըտուն քեաշւան էլան տիւս : Էտունք գնացին ուրինց թագաւուրի կուշտ, Գողարզն էլ ուր թագաւուրի կուշտ :

¶ .

Բահրամ ուր տաժան (3) կուրսեր էր :

Էնու աղբէր կէր, անուն Գիւ . աղբօր ասաց՝

— Իմ տաժան կորուսիր ի :

Գիւն ասաց՝

— Ի՞նչ էնիս տաժան, էրթանք տունի, քիլի արձըթէ տաժան կ'էնիմ :

(1) Ծեղի : — (2) Քացի : — (3) Յոլ խաղաղու փայտ :

Ասաց՝ — Իս էն տաժանայ կասափատ չիմ անը (1) . իմ անունը վերէն գրիւկ ի, պատի ասին՝ Բահրամ տաժան թողիր փախիրի :

Օք մթուց, էրկու սհաթ զիշելւան մօտէն գնաց, Բահրամ զինք զեռղյաւ, գնաց մէյդան յիսիւ ուր տաժանին : Գնաց տեսաւ օր՝ մէկ տքիւցմ կ'գեայ, ասաց՝

— Տիւ զո՞վ իս :

Ասաց՝ — Բա՛հրամ, իս իմ :

Ասաց՝ — Բա՛հու, տիւ՞ իս :

Ասաց՝ — Հա՛, իս իմ :

Ասաց՝ — Ի՞նչպէս իս :

Ասաց՝ — Եարալու իմ. կանա՞ս ընձի տանիս, բալքի ժրիմ (2) . Էռտեղ մնամ՝ կ'մեռնիմ :

Ռահովն ասաց՝

— Բա՛հրամ, տիւ զո՞ր կէրթաս :

Ասաց՝ — Իմ տաժան մնացի մէյդան, կէրթամ բիրիմ :

Ասաց՝ — Մի՛ էրթա, փահլիւան Դիւլօ քառսուն փահլիւանի խիտ յէռջիւ քիւ տաժանին պախւած ի :

Բահրամ ականջ չիդի, գնաց, կենայ (3) տքիւցմ էկաւ . ասաց՝

— Տիւ զո՞վ իս :

Ասաց՝ — Իս Ռահըն իմ (4) , Բա՛հրամ :

Ասաց՝ — Ի՞նչպէս իս :

Ասաց՝ — Եարալու իմ. օր ընձի տանիս՝ բալքի ժրիմ. օր ըստեղ մնամ՝ կ'մեռնիմ :

Բահրամ էն էլ թողից գնաց, կենայ մէ տքիւցմ էկաւ . ասաց՝

— Տիւ զո՞վ իս :

Ասաց՝ — Ես Յէժիրն իմ, եարալու իմ. օր ընձի տանիս, կը ժրիմ :

Գնաց մէյդանի մէջ . ուր տաժանն կնատ, (5) ոտն ոքերէն (6) խանից, ձեռ թալից, տաժան վիրիցից : Դիւլօն քառսուն փահլիւանի խիտ էտու եախէն բանիցին, ինչ բանիցին, ինչ տիւ զամուր թալիս կրակ, կարմրնայ, խանիս գնիս զնդանի վրէն, ուստէք կունով զարկին, էնենց զիւրզ կ'գեայ Բահրամի վերէն : Բահրամ մէկ ձեռնեով մարտալ (7) էր բոնիր էնունց զիւրզիրու յիսիւ, մէկ ձեռնեով կոիւ կանիր էտունց խիտ :

Էն փահլիւան, ընչ անուն թեւչի, ասաց՝

— Վո՞վ ի տիսի՝ քեասուն փահլիւան մէկ փահլիւանի վերէն կոիւ անեն : Ես էլ իրանայ փահլիւան եմ, ես էլ էրթամ Բահրամին քամակ ըլնիմ, ձեզի զարկիմ :

(1) Զեմ հողայ : — (2) Ասողանամ : — (3) Պարձեալ : — (4) Ռահով, Ռահը եւ Յէժիր երեքն էլ Բահրամի եղայրներն են և Գողարզի որդիքը : — (5) Գտաւ : — (6) Ասպանագակ (արաբ.) : — (7) Վահան :

Քեւշիլ ոքէր զարկից քեարքեադանին (1), գնաց Բահրամի մօտ կայնաւ ասաց՝

— Բա'հրամ, քիւ քեամակ տու ընձի, իս էկայ հընդաթ (2), դիւշ-մանի խիտ կոիւ անինք :

Բահրամ իրիք հեղ մօտէն իկրար (3) առաւ, էնիկ յերդիւմ առաւ՝ էկամ քի հընդաթ :

Բահրամ քեամակ տւից Քեւշիլին, դիւրզմ զարկից Գիւլօյին ։ Քեւ-շիլ կանգնաւ այսրի վերէն, թուրմ թալից Բահրամի թիւին՝ Բահրամ ձիուց էկաւ տակ :

Քեւ կան էկաւ, Բահրամ չ'տեսաւ :

Գնաց խօր ասաց թէ՝ Բահրամ կորուսի, չէրկւայ. Բահրամ գնաց յետիւ տաժանին, կըլնէ որ սպանած ի :

Քեւ յէլաւ սիլահնիր կապից, քեարքեադան խեծաւ, գնաց յետիւ աղբօր : Խէլի գնաց տեսաւ՝ տքիւցմ կ'գեայ. ասաց՝

— Տիւ վո՞վ իս :

Ասաց՝ — Իս Ռահոլն իմ. կարա՞ս ընձի տանիս, բալքի ժրիմ. օր ըստեղ մնամ՝ կ'մեռնիմ :

Քեւ թողից գնաց : Ռահըն ոասաւ էկաւ, ասաց՝

— Ի՞նչպէս իս, ա'զպէր :

Ասաց՝ — Շատ եարալու իմ, էստեղ մնամ՝ կ'մեռնիմ :

Քեւ թողից գնաց : Յէժիրն ոասաւ էկաւ :

Ասաց՝ — Տիւ վո՞րն իս :

Ասաց՝ — Յէժիրն իմ :

Ասաց՝ — Տիւ Բահրամ չի՞ս տեսիր :

Ասաց՝ — Բահրամ գնաց յետիւ ուր տաժանին. չուր կէսգչերին անուշ ձէն կ'զէր, կէսգչերու ժամանակ բուռուց էղաւ մօտէն. սպանին՝ չիմ զինայ, բռնին էլ՝ չիմ զինայ :

Քեւ գնաց մէյդան : Գիւլօն, քասուն փահլիւան էլան Գեւի եա-խէն բռնին. Քեւ մէկ զիւրզ զարկից Գիւլօյին, քեարքեադանից վար իրի, յէջաւ թուր թալից վիզ կարից : Էտա քասուն փահլիւան յէոջիւ Գեւին փախան. Գեւ ընկեաւ յիտիւ, քասուն փահլիւան մէ մէկ սպանից, Մը-նաց մէկ փահլիւան՝ Քեւշիլ : Փախաւ զինք թալից Ալւասիայի թախտ-ոա-ւանի (4) յառէջ. Գեւ բանից, էտուր թարք չ'տից, խասաւ քեալբանդ (5) թալից բռնից, քեաշից՝ թագաւուր Քեւշիլ խտրատ (6) կ'տանէր :

Էտա կօշուն ըիթուն կայնան Գեւի խիտ կոիւ. արին, անջախ թա-դաւուր ձեռնէն խանին, սլքծուցին : Քեւշիլն տարաւ, գնաց բիրից Բահ-

(1) Պատմողի բացարութեամբ՝ «Ռնգեղջիւր» է նշանակում : — (2) Օդ-նութեան : — (3) Խօսք : — (4) Շարժական զան է պատիրազմի ժանանակ : — (5) Քեամանդ : — (6) Միասին :

բամի ջանգիկի վերէն, էնուել Քեւչիլի վիզ կտորից : Բահըամ թալից ուր թարք, Յէժիր թալից ուր յառէջ, Ծահըր թալից մէկ եան, Ծահօլն էլ մէկ եան, առից էկաւ չաղրներ :

Ե.

Քեւ Խոսրէն մնաց շիւար : Բոնից Տիւս Նառւզար զնդանից խանից, էտու լաւ քեարքեալան տւից, լաւ շուր տւից, լաւ ոիլան տւից, յրուդից զնաց Խոստամի մօտ :

Ոռստամ իրիշկաց օր ծիւս Նառւզար էկաւ, ասաց՝

— Խէր ըլնի, քիւ թագաւուր յերդիւմ էր արիր, քի (1) թալիր իր զնդան, զնդանից չէր խանի քի . յընչի՞ քի ճամբիսիրի էսա տեղ :

Տիւս Նառւզար ասաց՝

— Էնտեղ օր տիւ չէղնիս, մենք յընչի՞ խամար ինք, թագաւուր յընչի՞ խամարի . մէ ծաղիկ օր կայ՝ տիւ իս :

Ոռստամ ասաց՝

— Իս էլ յերդիւմ իմ արի, օր իս թագաւուրի իրիս չ'տեսնիմ . իս էնու տուն պտի չէրթեմ : Անա ընձի ափսուս էկաւ . Գողարզ, իմ քեռու տղէք մնացեր ին կուռ մէջ . քիւ խաթրը խամար, իմ քեսի Գողարզի, պտի զամ թագաւուրի խամար մէ կորիւմ անեմ :

Ոռստամ կօշուն բիթուն ժողվրդից, սաքսան խազար չագըր յընչիր յիրար, յըմեն չաղըր սաքսան խազար փանլիւան : Տիւս Նառւզար վիրցուց բայրաղ զրից վըր ուր թիւին, Ոռստամ ուր կօշունով զնաց թագաւուրի մօտ, էրկու օրդին խառւաւ իրար :

Ալւասիայ ասաց դիւլընքչուն (2)՝

— Դի՛ւլընքչի, քիւ դիւլիրին ա՛ս զնա՛ սարի դլեռիս, յըրըշկա՛ տեսնանք իրանայ թագաւուր բարչիլու . խիտ ի, փախիլու խիտ ի, թէ կուռու :

Դիւլընքչին դիւլլին առից զնաց սարի դլեռիս նստաւ, յըրըշկաց տեսաւ՝ էրկու օրդին էղեր էր մէկ : Տեսաւ էտունց չաղըներ՝ մէկ չաղը Յընկի, Պըլընգի (3), Խլիւսման, Կէսաւուր, Մաղրաբի, Շանդա՛ոի, ինչյւան կապուկ չաղըր յառէջ՝ Ոռստամի Ծախշէ-Բալաքն (4) է : Դիւլընքչին զարգանդ բռնից էնտեղ, յէլաւ զնաց Ալւասիայի մօտ :

Ալւասիայ խարցունց արաւ, ասաց՝

— Դի՛ւլընքչի, ի՞նչ կայ :

Ասաց՝ Թա՛գաւուր, սաքսան խազար չագըր էտունց յաւըլցիր ի, իրանայ կօշունից մարդ զարգանդ կ'բռնի :

— Թագաւուր ասաց՝

— Հմա՛ն, ի՞նչ կասիս, Շանդա՛ոի չաղըր աէր ի՞նչ մարդ է, Ծախշէ-Բալաքը վի՞ կայ (5) :

(1) Քեզ : — (2) Թշնամու բանակը զննող : — (3) Վագր : — (4) Ուախ :

— (5) Ու՞մի է :

— Յառաջ քի ասիմ՝ բան չունիս իրանայ լսիս էն վո՞վե է՝ Ռուսացին է :

Թագաւուր իրիսն արաւ Փիրանին, ասաց՝

— Փի՛ բան, տիւ ի՞նչ կասիս :

Փիրան ասաց՝

— Իս ի՞նչ կասիմ, կըլնը օր մէկ բազրկան եան մէկ մարդմ Յաղպաց տեղէն Եկիր չաղբներ էնաեղ զարկիրի :

Թագաւուր ասաց՝ — Փիրան աղէկ վուցիր ի :

Բնդիւց Կղակղաէ Զինին ասաց՝

— Թա՛ գաւուր, ընչի՞ կ'վախենաս, հալբաթ ընձի մէկ բահլիւան կայ օր էրթայ էնու զլենիս կտրի բիրի քզի խամար :

Խլիւսիւն (1) լիւս բացւաւ, Մէկ փահլիւան, անուն Կղէլիւն, էլաւ խեծաւ ուր քեարքեագան, ուր գուրզ առից զնաց մէյգան, գիւրզ զարկից զետին, թող խանից զետնից, ասաց՝

— Իս Ռուսամի դիւշման ի՞ր, իս Ռուսամէ կոիւ կուզիմւ

Ռուսամ զի կացաւ, կապից ուր թուրքէրմանին, մարտալն Ռախչի կողէն կախից, այար զրից, տայնքիր կքից, էլաւ Ռախչ խեծաւ ասաց՝ էրթալ իմ, զետալ՝ Աստրծուն :

Չեռ թալից՝ իրեք խարիր վաթունը վեց լիսր էնու գիւրզն էր, վըրցից զրից ուր թիւր վրան, քըշից չաղբնիրու դոնէն ընցաւ և Յեարալու մարդիր ասին Ռուսամին՝

— Հիմաթով (2) զնա՛ էտա մարդիւ կոիւ :

Ռուսամ էնաեղ ջրիւտւաւ, Ռախչից իջաւ վար, ուր սիւահնիր բիթուն, ուր գիւրզ թողից Ռախչի վերէն, Ռախչ դարձըցուց չաղբնիր զինք ուր նիտ անեղ առից զնա՛ց մէյգանի մէջ :

Կղէլիւն ասաց՝

— Քեզի սիւահ (3) բալքի չունէր, քիւ թագաւուր ընչի՞ քի սիւահ չ'տւից տիւ զէր իմ կոիւ անէր, աիւ իմ անուն չի՞ր լսիր :

Ռուսամ ասաց՝

— Իմ թագաւուր ասաց՝ կէրթաս Կղէլիւնը կոիւ ի՞նչ հաւճայ է (4), օր աիւ սիւահ աանիս էրթաս կղէլիւնը խիտ կոիւ անիս : Գնա՛ կղէլիւն սպանի, էնու սիւահնիր քի խամար բի՛ :

Կղէլիւն էնաեղ մէկ գիւրզ թալից Ռուսամին . Ռուսամ զինք եան էտու՝ զիւրզ դպաւ զետին, Ռուսամ չոքիր զարկից զետին, մէկ նիտ անեղ զարկից էն փահլիւանի քեարքեագանի սրտի մէջ, էնու անեղի նիտ սրտից զարկից տիւս էլաւ . ուխտ սհաթի ճամբախ էր չուր թագաւուրի օրդին՝ Ռուսամի նիտ զնա՛ց զպաւ թագաւուրի թախտ-թառաւանին :

Կղէլիւն ասաց՝

(1) Հետեւեալ առաւօս : — (2) Զգուշութեամբ : — (3) Զինք (արար.) :

(4) Պէտք է :

— Տիւ ընչի՞ զարկիր իմ քեարքեադան սպանիր :

Ասաց՝ — Ո՞ւն է տեսիր ձիաւուր փիատէն (1) կռիւ անեն . իս էլ փիադայ, դիւ էլ փիադայ, իս տիւ զարկինք մէ մէկու :

Ենտեղ էրկու փահլիւան խասան յիրար . Ռոստամ Կղէլիւնին վիրիցիւց զարկից գետին, չոք զարկից որտի վերէն, թուր քաշից վիզ կտրից, տարաւ ուր թագաւորի խամար :

Զ.

Ալւամիայ ասաց՝

— Փի՛րան, էտա նիտ վի՞րն էր, օր կզանի կիզեայ էսա տեղ :

Ասաց՝ — Վո՞վ գիտէ, Բաղդադայ տեղէն մէկ ծուռ մարդմ ի նետիր կզարկի, կղեայ էսա տեղ :

Ասաց՝ — Հմա՛ն, տիւ ի՞նչ կասիս :

Հման ասաց՝

— Յառաջ օր քի ասիմ՝ բա՞ն չունիս Իրանայ իրիտ . էն վո՞վ կը Ռոստամին է :

Փիրան ասաց թագաւորին՝

Ի՞նչ վախեցար, մէկ փալիւան (\* ) է սպանւիր . ընձի հալրաթ մէկ փալիւան կայ էրթայ Շանգա՛սի չաղրը տիրիւչ գլեռի կտրի բիրի :

Մէկ փալիւան, անուն Աչքապիւզ, խլիւսիւն խեծաւ ուր քեարքեադան, գնա՞ց մէյդանի մէջ, ասաց՝

— Ես Ռոստամի կռիւ կուզիմ :

Կենայ Ռոստամ էլաւ, ուր քեարքեադան խեծաւ՝ էրթայ Աչքապիւզիւ կռիւ : Չաղրներու գոնէն ընցաւ՝ ետրալուք կենայ կանչին Ռոստամին ասին՝

— Հիմաթով գնա էտա մարդիւ կռիւ :

Ռոստամ ջիւրուտւաւ, Ռախչէ Բալաքից պայա էլաւ (2), ձին բրախից, նիտ անեղ առից գնա՞ց կռիւ :

Աչքապիւզն ասաց՝

— Ո՞վ մարդ, քիւ անուն ի՞նչ ի, տիւ իմ անուն չի՞ր լսիր, օր փիադայ էկար իմ կռիւ :

Ռոստամ ասաց՝

— Իս իմ չիմ գինայ . իմ խէր Զալ ընձի գրեր էր ուր չոքի վրան, ընձի կը խաղցնէր կասէր՝ «Տիւ Աչքապիւզի գրեղն իս, պիտի էրթաս էնու խոգին առնիս» :

Աչքապիւզ մէ դիւրզմ զարկից Ռոստամին . Ռոստամ զինք եան տից՝ գիւրզ գպաւ գետին : Ռոստամ չոքիր տւից գետին, մէկ նիտ անեղ

(\*) Շատ անգամ պատմողը հ-ն չէր արտասանում : — (1) Հետիոտ :

— (2) Իշաւ (պարսկ.) :

զարկից էնու քեարքեադանի սրտին՝ կենայ նիտն գնա՞ց թագաւորի  
թախտ-թառաւ անին դիպաւ, մնաց մէջ :

Էրկուս էնտեղ փիազայ խասան յիրար, կռւան, Ռոստամ Աչքապիւ-  
զին վիրիցիւց զարկից դետին, էտու գլեռիս կտրից, տարաւ ուր թա-  
դաւուրի խամար :

Է.

Մէկ փալիւան կար, անուն Քամիւսէ Քեաշան :

Քեամուսէ Քեաշան խեծաւ ուր քեարքեադան, էկաւ Ռոստամի կը-  
ոիւ. էկաւ մէյդան ասաց՝

— Իս Ռոստամի կոխւ կուզիմ :

Ռոստամ էլաւ խեծաւ Ռախչ, կապից ուր թուր, վիրիցիւց ուր  
մարտալ, ուր մէջ զարկից մէ ալմաստի խանչալ, ձեռ թալից ուր դիւրզ,  
վիրիցիւց զրից թիւի զրան, ասաց՝

— Երթալ իմն ի, զեալ՝ Աստղծուն :

Էկաւ չաղբնիրով ընցաւ, Եարալուք կենայ ըսին՝

— Ռոստամ, էտա փալիւան շատ զոչաղ ի, մողիաթով (1) գնա  
էնու կոխւ :

Ռոստամ կենայ ջիւրուտւաւ, ուր սիլահնիր թալից, ուր քեար-  
բանդ առից գնա՞ց մէյդան :

Քամիւսէ Քեաշան ասաց՝

— Ռոստամ, ախւ իմ անուն չի՞ր լսիր՝ տիւ էկար իմ կոխւ :

Ռոստամ ասաց՝

— Իմ թագաւուր հրաման էրաւ՝ Քամիւսէ Քեաշան չ'սպանիս, ասդ  
րոնիս բիրիս ընձի խամար :

Քամիւսէ Քեաշան դիւրզմ զարկից Ռոստամին. Ռոստամ մարտալ  
չէր բիրիր, օր գնէր յիւջիւ զիւրզին. էնու ձին Ռախչ գլեռիս տւից  
դիւրզին՝ ոսկի խնձիւր Ռախչի ճական իր, զիւրզ զիպաւ ճակտի մէջ,  
ոսկի խնձիւրն կուտարաւ, երուն թափաւ Ռախչի քնթէն : Ռոստամ քեար-  
բանդ թալից Քամիւսէ Քեաշան բռնից :

Քամիւսէ Քեաշան ասաց Ռոստամին՝ — Էտի ընձէ իր սովրած :

Էն էլ թալից Ռոստամ բռնից. Էն քեաշից, Ռոստամ քեաշից. Էնիկ  
զոն Ռոստամին առաւ, Ռոստամ տեսաւ օր էնու զուաթ (2) էնու չի  
յաղթի, քեարբանդ ուր սրաէն խանից, թալից Ռախչի սիրա, ոքէր  
տւից Ռախչի կող, Ռախչ քեաշից զիմիւսէ Քեաշան բիրից :

Քամիւսէ Քեաշան թուր քաշեր էր կ'զանէր քեարբանդին, օր  
կտրէր փախէր, Ռոստամ ասաց՝

(1) Զգու շութեամբ : — (2) Ոյժ :

— Քամիւսէ Քեաշան, վող օր ընկիր ի էդ քեաբրանդի մէջ, էն չի պրծիր. իս քի չիմ սպանի՝ տիւ ափառւ իս, քի պտի տանիսմ, քեառուն ջարի (1) ունիմ, թօփուզով զարկին քզի սպանին :

Քեաշից տարաւ չագրնիրու մէջ. ջարիք թօփուզներ առան էկան գլխու վերէն զարկին էտեղ սպանին :

Ը.

Ֆըրազամ (2) սոսաց՝

— Ռոստամ, էսկանդար կօշուն մեզի կայ, էսկանդար կօշուն թիւրանայ թագաւուրին կայ՝ որ կ'զեայ մէյդան, քիւ կոիւն կուզի : Մենք քանի տարի ըստեղ բայլամիշ անինք (3), օր էսա կոիւ պրծնի : Նորաթ (4) իմն է, ևս էրթամ կոիւ :

Ֆըրազամ խեծաւ, Ռոստամն էլ խեծաւ, Բրզուն էլ խեծաւ, Գողարզըն էլ խեծաւ, Գեւն էլ խեծաւ, Սիահոչն էլ խեծաւ, Սիափոշն էլ, Մսիւսան փաշէն, Բաղզազայ ոլին, Դեւ կոսրէն, Ասքեար բիթուն կայնան. Տիւս Նառզար բայրազ վերիցից՝ ասքեար քեաշւաւ :

Աղօթրանին բոնեցին Ալւասիայի չագրնիրու վերէն, կոիւ էլաւ իրիք օր գիշերն ցերեկ. մըջ զիւման կայնաւ էրկնիւց իրիսն բոնից : Շատ մարդ սոսաց՝ աշխարն աւիրաւ. միծ (5) մարզիք ըսին՝ Իրանայ թագաւուր թիւրառան յիրար, թող զիւման ընտրանց յառէջ կէնի : Հրիշտակնիր յէրկնիւց կայնան թամաշայ :

Իրիք օր օր լըմացաւ. Թիւրանայ թագաւուր փախաւ. Իրանայ թագաւուր, Ռոստամ, Ֆըրազամ լնկեան յիտըւան, օխտ օր ճամբախ քէշին, օխտ քեազաք զաւթին. Թիւրանայ միծիր տիւս խանին, Իրանայ պստիկ տեղ դրին, էրին միծաւուր (\*):



— (1) Աղախին : — (2) Ռոստամի որդին է : — (3) Սպասենք : — (4) Հերթը : — (5) Խելօք : — (\*) Այս վարիանտն բաւական մօտ է իւր պարսկական բնագրին, ինչպէս մենք կարդում ենք Ձիրդուսու «Արքայից Գրքում», չ'նայելով, որ քրդական խմբագրութիւնն առաջ է բւրեկ մի շարք փոփոխութիւններ թէ բոլանդակութեան եւ թէ յատուկ անւանց մէջ :

Սուրբալի գաւառի (Երևան, Նահանգ) Մոլլա-Ղամար զիւղի բնակիչները կողմէն մօտ 40 տարեկան առոյդ զէմքով աղամարդ է ունի լաւ յիշողութիւն։ Նա մեզ պատմեց մի շարք հետաքրքիր աւանդութիւններ եւ հեքեաթներ, ի թիւս որոց Դաւթի եւ Մըհերի մի ընկարձակ վարիանա : Արհեստով սափրիչ է, Ռուսամի եւ այլ հերոսների զրոյցները նա լսել է Հոսորմցի (Աղքամանդրապ, զաւառ) Ղորդանից, որ երկաթագործ էր եւ շատ անգամ այցելում էր գործով Մոլլա Ղամար : Նա իւր ժամանակի յայտնի հեքեաթ ասող էր :

Խ ը ս ա մ :

Մըստամը Զալի աղէն էր : Էթում էր խարաջ (1) առնէը Դեւստունից : Գնաց օր՝ մէ գեւ պարկած այ, ասաց՝

— Յըլնեմ էրկու ոտով զարկեմ էս գեւին թող մէջքը կոտրւի :

Յէլաւ վրբ գեւի քամկին : գեւն ասեց՝

— Էս տեղը լըսոտ է :

Զեսը թալեց Մըստամին բռնեց, խիեց ոտի տակը, իրիշկեց օր՝ Մըստամ լալում այ, յաչքերից արուն այ գալում, ասեց՝

— Մըստամ, յընչի ես լալում :

Ասեց՝ — Իմ կնիկն էրկու խոզով այ :

Ասեց՝ — Ուը'ստամ, օր ես քեղի թողեմ էթաս, օր քո կնիկդ տղայ բերեց, կողորկե՞ս (2) գայ իմ խետ կուի :

Ասեց՝ — Հա' :

Թողեց Մըստամին, Մըստամն էկաւ տուն : յուխտ արեց, յիր զուրգըն, յիր քեամանն (3) քցեց բերգի տակ, ասեց՝

— Եալլաթ ըլնի էլ իմ ձեսը չառնեմ, ես յաղթուայ :

Ֆ ա հ ր ա մ ա զ :

Յէլաւ օր ըտու տղէկներն՝ Ձահրամազ ու Բուրզէ՝ ըտու զուրգ ու քեամանի վրէն կոիւ ին անում : Էն մէ աղէն ասում էր՝ ընձի, էն մէկըն էլ ասում էր՝ ընձի :

Ասեց՝ — Ո'բղիք, յարէք ես ձեղի ասեմ : գնացէք խեծէք ձեր ձիանքն, էկէք : ես իմ սէհրիխազալը (4) թողում եմ, զու ձեր քեամանը քցէք, որը որ սէհրիխազալը բռնեց, զուրզը կ'տամ ընդուր :

Սէհրիխազալը թողեց, ըտոնք յիրանց քեամանները քցին : Էն ինչ Բուրզու քեամանն էր՝ տիով ընցաւ (Բուրզէն ջահէլ էր) : Էն ինչ Ձահրամազին էր՝ էնի յիշ մնաց որ յընկնէր վիզը : Ձահրամազն իրեք օր զիշեր ցերեկ խրեղէն ձինը քչեց սէհրիխազալի յետեւ, գնաց յընկաւ մէշէն :

(1) Հարկ : — (2) Կ'ուղարկեռ : — (3) Քամանդ (պարսկ) : — (4) Սէհրի կախամարդական (պարսկ), խազալ = gazelle (արար.) :

Գիշերը տւեց վրէն, մութն էր : Խրիշկեց օր՝ զատանց (1) մէ կը-  
րակ այ էրեւում : Ենքն էլ շատ անօթցեր էր : Զինը քչեց գնաց զըխ էտ  
կրակը : տեսաւ օր՝ մէ քոռ դեւ այ, մէ յաչքանի, նստէ կրակի կուշաը  
վէրու (2) օչխարներ մորթէ, մըսեր կտոր կտոր արէ, քցէ վըր կրակին :  
Ֆահրամազն էն քոռ աչքի դեխից մէ կտոր դողցաւ : Որ կերաւ, դեւը  
տեսաւ՝ մէ կտոր չկայ, ասաց՝

— Դո՛ զ, դու ինչ նամարդ (3) ես, արի նստի հա կէ՛ :

Ֆահրամազն էկաւ դեւի կուշաը, ասաց՝

— Դեւ աղբէր, ես անօթի ի, վախեցայ քեզանից :

Դեւն ասեց՝ — Յընչի ես վախենում, հա կէ (4) :

Նստան խըս յիրար, կերան : Լուս բացուաւ, ասաց՝

— Դեւ աղբէր, դու յընչի ես ըստեղ բնակուէ :

Դեւն ասաց՝

— Ես Տաղմուրագ Շահի (5) աղգից եմ փախէ, էկեր եմ ըստե, օր  
ընտոցից մէկն յընկնի ձեռս, ուղարկնեմ :

Ֆահրամազն ասաց՝

— Ես ընտոց խետը ջըսբըւեր եմ (6) : արի դու էլ ջըսբըւենք, յըւ-  
նենք յընկեր :

Ասաց՝ — Ձեռս տու իմ ձեռին :

Ֆահրամազ ձեռը տւեց դեւի ձեռին : դեւը ճխտեց՝ Ֆահրամազի  
ձեռը սկի չը ցաւաց : Ֆահրամազը դեւի ձեռը ճխտեց՝ արուն մատներից  
տւեց դուս :

— Ամա՞ն, ասաց, ձեռս կոտրւաւ, թո՛զ :

— Ես Տաղմուրագ Շահի թոսն եմ, ձեռնէզ ինչ որ կուգայ, արա' :

Դեւն ասաց քի՛ — Աղբէր, ես մեղայ Աստծու : էթանք էս քա-  
ղաքը պատահելու :

Ֆահրամազ խեծաւ ձին, յընկաւ դեւի յառէջ + մէ խէլի (7) տեղ քը-  
շեցին, Ֆահրամազ տեսաւ՝ միը ձին հա չըքւում այ (8) : ասաց՝ հալբաթ  
դումլաղ այ (9) : Մէ խէլի տեղ էլ քչեց, որ զանգուն զառըով զարկեց՝  
ձինը պատուաւ . շիտկաւ իրիշկեց օր՝ դեւը մէ սէհրի դիր այ կար-  
դում . զարկեց դեւին սըպաննեց, չըլկեց յիր թամքը, դնաց էդ քաղաքը :

Քաղաքը թագաւորանիստ էր, գնաց քաղաքի յաղբրի վրէն թամքը  
դրեց տակը նստաւ : մէ պառաւ էկաւ ջուրը լցելու : ասաց՝

(1) Հերուից : — (2) Վայրի : — (3) Խարդախ : — (4) Ողիսեւսի ար-  
կածների արձագանքն լսուում ցայսօր ոչ սակաւ արեւելեան զրոյցներում :  
Կասկած չկայ, որ կիլոպների («զարագեռզների») = միաչքանի հսկանե-  
րի եւ զանազան հրէշների մասին զրոյցներն մի ժամանակ տելի տա-  
րածւած էին Փոքր Ասիայում, եւ միայն Յունաց ստեղծական ոգուն էր  
վիճակել զեղարուեստօրէն մշակել այս աւանդութիւններն եւ ազգային  
վիպականութեան աստիճանին հասցնել նոցա : — (5) Բոս Ֆիրդուսի՛ այս  
դիւանարարիկ արքան Հուշենդի որդին է եւ Զիմշիդի հայրն : — (6) Փոր-  
ձեր եմ : — (7) Բաւական : — (8) Թրւում է : — (9) (Հողն) փափուկ է :

— Որդի ջան, յընչի ես նստէ էս յաղբրի վրէն :

Ասաց՝ — Մա'մէ ջան, զարիր եմ, ծանօթ չունեմ :

Ասաց՝ — Ո'րդի, արի էրթանք մեր տուն :

Ֆահրամաղ թամքը շըլկեց գնաց պառաւի տուն : Գիշերը քնան, յառաւօտ յէլան օր՝ դալալ (1) այ բոռում քաղաք . Ֆահրամաղ խարցրեց պառլին :

— Մա'մէ, էս ի՞նչ դալալ այ :

— Ասաց՝ — Թագաւորի իլխին էթում այ ծովի զրաղը . ծովից մէ ջանաւար այ յըլնում, թագաւորի ձիանք լցնում այ ծովը . թագաւորի դալալը բոռում այ՝ որն որ էն ջանաւարը բռնի, իմ աղչիկ կը տամ ընտուր :

Ասեց՝ — Մա'մէ ջան, ես կէթամ խըտ իլխուն :

Ֆահրամաղ գնաց խըտ իլխուն : Կէսաւուր տեսաւ օր՝ ծովը բացուաւ, բէ բող զսրազ ծովից յէլալ յընկաւ ձիանքի յետեւ, լարեց, իրեք ձի կոխեց ծովը : Ֆահրամաղ դարձաւ էկաւ թագաւորի մօար, ասաց՝

— Թա'գաւոր, քու աղչիկ կուտամ ընձի, որ ես էն ջանաւարը բռնեմ :

Ասաց՝ կտամ :

Ասաց՝ — Դնա՛ պողպըաից 40 գեազանոց ընձի մէ քեաման շիքել տու :

Թագաւորը գնաց 40 գեազանոց մէ գեաման շիքել տւեց պողպատից . առաւօտ ֆահրամաղ քեամանը քցեց թեւ, խըտ իլխուն գնաց . դացին ծովի զրաղը : Կէսաւուր մօտ տեսաւ օր՝ ծովը բացուաւ, զսրաղը դուս էկաւ ծովից : Ֆահրամաղ քեամանը քցեց, ըցկեց զսրազի վիզը . զսրազ քաշեց, ֆահրամաղ քաշեց զսրազին խեղզեց, բերեց հանեց չորը, առաւ էկաւ քաղաք : Թագաւոր տեսաւ օր՝ էսի ձի այ :

Ֆահրամաղն ասաց՝

— Մէ թամք բե դի վըր էս ձիան, տեսնանք խմալ այ :

Թագաւոր ինչ թամք օր բերեց, չէկաւ վըր ձիան . Ֆահրամաղն ասաց՝

— Թա'գաւոր, մէ խին թամք ընձի պառաւի տունն այ, յըղերկա՛ էրկու ջէկւ թող առնեն գան :

Թագաւորն զրկեց էրկու ջէկւ, առան էկան . Ֆահրամաղ թամքը դրեց վըր ձիան, գեամը զարկեց բերան, ասեց՝

— Թա'գաւոր, քեզի փէշքէ :

Թագաւորն ասեց՝

— Ո'րդի, բաշխի քեզի, ես էսի չեմ կանայ խեծնի :

Ֆահրամաղ խեծաւ ձին, մէ էրկու զլոխ գնաց էկաւ . էկաւ ձիանից յիջաւ . ձինը քաշեցին նես, թագաւորն սկսեց ֆահրամաղի խարսնիս, աղչիկը տւեց ֆահրամաղին :

(1) Մունետիկ :

Ֆահրամազ մէ իրեք ամիս էտ աղջկայ կուշը մնաց . յետի յիրան  
յիրան միտ արեց, առաց՝

— Ես Տաղմուրազ Շահի փահլեւաներ թողի էկա ըստեղ :

Փաղառեկ կնկան ասեց՝

— Ես քո կուշը բներ եմ, դու կը մնաս էրկու խոգով . առ քեզի  
մէկ բազրանդ ասմ, ևս կէթամ, իմ անունըս մի՛ տա, ևս նըստամի աը-  
զէն եմ . թէ որ աղջիկ կըլնի՝ էս բազրանդը թուջարի խետ խուրտէք  
թող աղջիկն ուսայ . թէ որ տղայ կըլնի՝ կապէք վըր. թեւին :

Ֆահրամազ թողեց էկաւ Տաղմուրազ Շահի քաղաքը (\*):

Թ է հ մ ո ւ ր :

Թագաւորի աղջիկն ընտեղ մնաց . ինն ամիս օր թըմաւ՝ պարկաւ  
մէտղայ բերեց, թագաւորին էկաւ կնքելու, անունը գրեց թէ հ մ ո ւ ր :

Թէհմուրին պախեցին, էլաւ տաս տարեկան, շատ ուժով աղայ  
դուս էկաւ :

Տաղմուրազ Շահի քաղաքը նըստամ Ա. ը չ ա կ Ե ր ա ն ե լ ի ն աը-  
փեց . խովաւ Արշակ Երանելին, գնաց Ֆահրամազի անէր թագաւորի  
քաղաք, թագաւորին ասեց՝

— Բնձի զօշուն տու, ևս էթամ Տաղմուրազ Շահի փահլեւաններ  
աղթեմ, անեմ քեզի խարսչի զեղողալ (1) :

Թագաւորին զօշուն տեց Արշակ Երանելուն տաս հազար ջան,  
արեց էրկու տեղով, մէկի սարասքեարն (2) թէհմուրին էղաւ, մէկին էլ  
Արշակ Երանելին :

(\*) Այս հաստածն, որտեղ զլխաւոր հերոս է հանդիսանում Ֆահրա-  
մազ, մօա յիշեցնում է մազ Ռուստամի արկածը Սեմենգան քաղաքի թա-  
գաւորի մօա: Բատ Ֆիրդուսու՝ մի անգամ իրանի համբաւաւոր հերոսն՝  
որսորդելիս՝ հանգիստ է ասնում Սեմենգան քաղաքի մօաերքն, արձա-  
կում Ռախչին և խորը քնում: Քնի ժամանակ զողանում են նժոյզը .  
արթնելով, նա երկար որոնում է իւր ընկերոցն և ապա զիմում Սե-  
մենգանի աիրոցն, մաս սպանալով նորա փահլեւաններին, եթէ չ'գտնեն  
Ռախչին: թագաւորին, ճանաչելով Ռուստամին, խոստանում է կոստաբել  
նորա խնդիրը և հրաւիրում նորան իւր մօա: Գեղեցկուհի Տեխմիմէն  
(թագաւորի աղջիկն), հրապուրած հերոսի հոչակից և ցանկանալով  
նորանից որդի ունենալ, զիշերը գալիս է նորա մօա և առաջարկում  
նորան իւր սէրն: Ռուստամ չէ մերժում: Հետևեալ օրը նա սահնում է  
իւր նժոյզն և վերագանում տուն, ընծայելով Տեխմիմէնին մի թանկա-  
գին քար . «Եթէ աղջիկ ծննդիր, ասում է նա, սորանով զարդարիր նո-  
րա մազերն, իսկ եթէ որդի՝ կապիր նորա ձեռին»: Մէր վարիաննե-  
րում առհասարակ Ռուստամ թնաւ կորցրել է իւր հոչակը, նորան փախա-  
րինում է արգէն Ֆահրամազն, որին ժողովուրքը սիրով վերագրում է  
նորա հօր արկածներն: Այսպիսի փոխադրութիւններ, որ կապւած են նոր  
հերոսի անւան հետ, նկատելի են առհասարակ բոլոր աղջիրի դիւցազնա-  
կան վէպերում: — (1) Հարկատու: — (2) (Պարսկ.) զլխաւոր, զօրապետ:

Էկան Տաղմուրագ Շահի սինոռը, չաղբներ զարկին նստան սինոռի  
մէջը . Թէհմուրի մէր խեան էկեր էր : Գիր գրեցին Ռըստամին քի՝ վախ-  
տիդ (1) հազիր կաց, մեր կոփւ կոփւ այ :

Յառաւօտ Բուրզին խեծաւ յիր ձինը, յիր գուրզն առաւ ձեռ, յիր  
զալիանը, էկաւ մէյդան : Թէհմուրն Արշակ Երանելուց իրաւունք առաւ  
քի՝ ես կէթամ կոփւ : Արշակն ասեց՝ զնա՛ :

Թէհմուրն էկաւ Բուրզու խեան առան յիրար, կուան մինչի կէսա-  
ւուր . Բուրզին տեսաւ օր՝ յինք յաղթւաւ, ասաց՝

— Իգի՛թ (2) :

— Ի՞նչ այ, ա' զրէր :

— Էթանք հաց ուտենք, մեր ձիանքն էլ զինջանան, էլի դանք  
կուենք :

— Շատ լաւ կըլնի :

Բուրզին շիտկւաւ զըխ բերզն, Թէհմուր ձինը խաղցրեց մէ ջրինդ  
թալից Տաղմուրագ Շահի քոչքի վրեւով ընցրեց : Զալ նստած էր վըր  
թախտին . որ ջրնդի ձէն առաւ, ասաց՝

— Էյլախ, էս իմ ազգի թալած ջրինդն այ . իմ ազդ բերած իմ  
խետ կուեցնում են . մենք կաղթւենք :

Թէհմուրը դարձաւ դնաց յիրան չաղըրը, աշպազը (3) հաց բերեց,  
կերաւ, դինջացաւ, խեծաւ ձինը, էկաւ կայնաւ մէյդանը . տեսաւ օր՝  
մարդ չկայ . Բուրզին էլ դնացեր էր պարկեր էր : Դարձաւ էկաւ յիրա-  
չաղըրը յիշաւ :

Յառաւօտ լուսը բացւաւ, էկաւ Արշակ Երանելուն ասաց՝

— Յէսօր ես էլի կէթամ կոփւ :

Ասաց՝ գնա՛, Տէրը իւսա քեզի :

Էկաւ մէյդանի զլոփ կայնաւ . Ռըստամին յէլաւ փահլեւաններին ասաց՝

— Գնացե՛ք, գուշման էկէ մէյդան կայներ այ :

Ֆահրամազն յէլաւ խեծաւ ձին, գուրզն առաւ ձեռ, էկաւ . էկաւ  
մէյդանի զլոփ, դիպան յ'բար . մինչի կէսաւուր կուան : Յաղթւաւ ֆահ-  
րամազ, ասաց՝

— Ի' գի՛թ :

— Ինչ է :

— Էթանք հաց ուտենք, մեր հայւներն էլ զինջընան, դանք էլի  
կուենք :

— Լա՛ւ կըլնի :

Ֆահրամազ դարձաւ դնաց դըխ քոչքը, Թէհմուր ձին խաղցրեց, մէ  
ջրինդ թալից քոչքի վրեւով ընցրեց . Զալն ասեց՝

— Էյլախ, էյլախ, էս իմ ազգի ջրինդն այ, էսի չի յաղթւի :

(1) Ժամանակիդ : — (2) Քաջ : — (3) Խռհարար (պարուկ) :

Թէհմուրը դարձաւ էկաւ յիրա չաղըրը . հաց կերաւ . խեծաւ ձին, էկաւ մէյլան . էնքան ձին խաղցրեց, էլ մարդ չէկաւ : Թահրամազն էլ գնեց աեղով բարձով պարկաւ : Թէհմուր դարձաւ էկաւ քնաւ :

Լուսը բացւաւ, Թէհմուր էլի յէլաւ դնաց Արշակ Երանելու չաղըրի դուռը կայնաւ, ասաց՝

— Ես կէթամ կոխւ :

— Գնա՛, Տէրը խըա քեզի :

Էկաւ մէյլանի զլոխ կայնաւ, ձին խաղցրեց . Զալ հարցրեց՝

— Ո՞րն է էթում կոխւ :

Ասեցին՝ — Մարդ չկայ, մնացեր այ Ռըստամը :

Ռըստամն ասեց՝

— Ես քսան տարի է իմ գուրդ թորկեր եմ :

Ասեցին՝ — Պէտք այ էթամ, իլլաճ չկայ :

Ռըստամը յէլաւ խեծաւ ձինը, զողզալով գուրզը վեկալեց, էկաւ մէյլանն որ՝ Թէհմուր ձինն խաղցնում այ : Հասան յիրար, մէ էրկու գուրզ թալեցին յիրար, Ռըստամն ասեց՝

— Ի՞զիթ, ես բան եմ մոռցէ տունը, էթամ բերեմ գամ :

Քչեց էկաւ տունն, ձիռոց յիջաւ, լալով պարկաւ :

Թէհմուրը խէյլի կայնաւ՝ չէկան, մէ ջրինդ թալեց քոչքի վրեւով անցրեց, Զալն ասաց՝

— Եյլա՛խ, էյլա՛խ, էս իմ աղզի ջրինդն այ, էս իմ թաղաւորուշ թուն կվերջանայ :

Էկան նստան Զալն ու Ռըստամ մէ անէծքով թուղթ զրեցին Արշակ Երանելուն, տևեցին մէ տղայ առաւ դնաց : Արշակ Երանելին առաւ թուղթը կարգաց որ՝ փահեւաններն յըմէն վերջացրեր այ Թէհմուր . ասաց՝

— Ես էս ինչ բան էր արեցի :

Յէլաւ յիրա գոնապանին թամինեց (1) թէ՝

— Որ էզուց Թէհմուրը դայ, ասէք թէ՝ էլի մէյլան քունն այ, գնա՛ : Ես բերէֆ (2) եմ :

Էկաւ Զալի թախտը, վերցրեց յիր գուրդ քեաման, յիր ձին խեծաւ, յառաւօտ լուսը բացւաւ էկաւ մէյլան կայնաւ, Թէհմուրն էլ էկաւ մէյլան, առան յիրար, էնպէս ին կռւում, որ կրակ բասմիշ էր անում (3) էրկախն : Թէհմուրն վախենում էր, որ գրզի կտորներից առնի մօրը վեասայ, յաչքը վըր մօրն էր պահում : Արշակը գուրզը զարկեց, առաւ Թէհմուրի վղին, Թէհմուրը յընկաւ . Արշակն յիջաւ, եամ փուչախին (4) խանեց, որ վիզը կտրէր, մէր գոսալով էկաւ :

— Ի՞նչ ես անում, Արշակ, էտի քո աղբօր աղէն այ :

Արշակն ասեց՝ — Բր յու՞ր այ մեր նշանը :

(1) Պատուիրեց : — (2) Ի՞նձ վատ եմ դպում : — (3) Պատում : — (4) Դաշոյն :

Մէրն էկաւ թեւը բացեց որ՝ մահրաժազի բազրանգը վըր թեւին այ : Արշակը խանեց կայնըցրեց, յերեսները պաչեց, առաւ էկաւ մըստամի ու Զալի մօտ, ասեց՝

— Էսի մահրաժազի տղէն այ :

Զալն յերես պաչեց, մըստամի յերես պաչեց . ուրախացան վրէն , յիրան մօրը պախեցին, դօշունին իզին տւին, գնաց յուր տիրութուն (\*):

Բ ու ր զ ի :

Ա.

մըստամ Զալը նստան կանչին փահլեւաններին, ասեցին՝

— Դեւստունի խարաջը մացեր այ հօթը տարի (1) :

Բուրզին էկաւ կայնաւ օրթալաղ, ասեց՝

— Տուէք ընձի ազգական Բէջօն (2), որ վալադ ըլնի ես էթամ դեւստուն : Ես օր զնացի դեւստուն, ինչ վախտ որ ես նեղութենի մէջ կընկնեմ, կոիւ կ'ապատահի ընձի, իմ ձինս զետին կ'քանդայ՝ դուք գուրզը քեամանը կապէք վըր ձիան, դայ հասնի ընձի :

Ցէլաւ զնաց աղդական Բէջօյի խետ, Գնացին մէկ ձօրի ափին նըստան . Բէջօյին ասաց՝

— Ես կը քնեմ, իմ քունս գալում այ, զու նստի զարաւուլ (3) :

Բուրզին քնաւ . Բէջօն նստաւ ղարաւուլ : Մէ ցերեկ Բուրզինը քընաւ : Բէջօն տեսաւ օր՝ էրկու զեւ են զալում ձօրի մջովը, մէ հայոց աղչիկ էլ փախցրած այ : Էկան տեսան օր՝ մէ մարդ ձօրի ափին քարի վրէն քնած այ, աշչիկը դրին յէրի (4) մէջը, քեամանը սարքեցին քցին Բուրզու ոսները : Ընքան ճչաց Բէջօն, Բուրզին չիմացաւ . կայնաւ վըր Բուրզու գոչին յանկը չներից քաշեց, ճչաց . Բուրզին յիմացաւ, յէլաւ ասեց՝

(\*) Արշակ անունը ժողովրդական աւանդութիւններում մեզ առաջին անգամ է պատահում . ենթագրել, թէ այստեղ պահպանւած լինի Արշակունեաց տոհմի որ եւ է մէկի յիշատակը՝ դժար թէ հիմնաւոր լինէր : Պատմողը ինքն չկարողացաւ բացատրել «երանել» բառը, որ նա երկու անգամ «երանալ» արտասանեց . «երանալ» ժողովրդի բերանում զեներալ = «զօրապետ» է Կաշանակում : Կարծում եմ, թերեւս այս անւան հետ կապւած լինի յայտնի հայ զնդապետի՝ Արշակ Տէր-Ղուկասնենի՝ յիշատակն, որի դործունէութիւնը զիսաւորապէս երեւանեան նահանգում էր կեզրոնացած եւ որի անունը մինչեւ այժմս անմահ մնում է ժողովրդի մէջ : Եա այստեղ երեւի փոխարինում է մի այլ հնութեան հերոսի, որ բոլոր հետաքրքրութիւնն կորցրած պիտի լինի ժողովրդի համար : Այսպէս են կերպարանափոխուում դիւցազնական զրոյցներն : — (1) Այսպէս սովորաբար սկսւում են եւ սուսաց վիպական երգերն, բատամենայնի, հետեւելով արեւելեան զրոյցներին : — (2) Պարսից այս նշանաւոր հերոսը, չնորինիւ իւր ժողովրդականութեան, յիշուում է եւ մեր Դաւթի վարիանտներում, իրեւ հերոսի հօրեղբայրը : — (3) Պահապան : — (4) Այր :

— Խ՞նչ, ես ասում, Բէջօ, չես թողում քնիմ:

Ասեց՝ — Քո տունդ քանդւի, հըլը իրիշկա՛:

Իրիշկեց որ՝ զեւեր քեաման կապած յիրանց մէջքերը բառը քաշում ին. ձեռը քցեց քեամանց բոնեց, էրկու զեւն էլ քաշեց հանեց դայի (1) գլոխ, էրկսի գլոխն էլ ջարդեց: Յիջաւ Բէջօյի խետ, էկան աղչկան գըտան. աղչկան տոեցին՝

— Զեր զեղը յու՞ր այ:

Ասեց՝ Ես դքի (2) վրէն այ:

Ասեց՝ Քեզի ըը զեւեր յու՞ր ին տանում:

Ասեց՝ Էկան ընձի իմ խօր անէն զոռով փախցրին:

Աղչիկն յընկաւ աղաքներ, առաւ ըտոնց էկաւ հօր տունը. նստան, յիրիկուն հաց բերեց հէրը, հաց կերան: Բուրզուն Բէջօյին ասեց՝

— Աղնաւուրներ (3), ես ի՞նչ տամ ձեզի:

Բուրզին ասեց՝

— Մենք բան չենք ուզում քեղնից. զեւստունի ճամբախը տու մեւ զի նշանց:

Յէլաւ էտ մարդն մէ մարդ քցեց ըտոնց յառէջը, տարաւ Դեւէ Փնդիպոլազի (4) քաղաքը տեսց նշանց, յիտ դարձաւ: Բուրզին Բէջօն էկան Դեւէ Փնդիպոլազի օթեւանը: Յիրիկուն նստան, էնի յիրա մարդիկը կանչեց, հարցրեցին Բուրզուն թէ՝ — Յընչի ես էկէ:

Ասեց՝ Էկեր իմ եօթ ապրուայ խարաջը պէտք այ տաք:

Դեւէ Փնդիպոլազը ասաց՝

— Ես քո խետ, կոփւ կանեմ, չեմ տայ:

Բուրզին ասեց՝

— Յառաւօտ յընենք կըուենք:

Յառաւօտ Բուրզին յէլաւ մէյդանը (4), զնաց էկաւ. ընկոց տունը ձինն գեաին քանդեց:

Բիստամին ասաց՝

— Բուրզին կոփւ այ, գուրզը քեաման կապէք վըր ձիան թո էթայ: Կապեցին, զնաց ձին. ձինն էկաւ խասաւ Բուրզուն. Բուրզին յէլաւ ձինը խեծաւ:

Դեւէ Փնդիպոլազին մէ զեղեցիկ քուր ունէր. բերեց դրեց քէջու զի (5) մէջը, կայնըցրեց մէյդան, յինք խեծաւ ձին, էկաւ Բուրզուն յաղաք, կուան մէյդանի մէջը: Բուրզուն յաչքը առաւ էդ զեղեցիկ աղչկան. չիտկւաւ աղչկան իրիշկեց՝ Դեւէ Փնդիպոլազը թուրը զարկեց Բուրզուն թիւն ետրալու արեց. Բուրզին չիտկւաւ. Դեւէ Փնդիպոլազի վըրէն, Դեւէ

(1) Ժայս: — (2) Բարձրաւանդակ: — (3) Մեծաւորներ: — (4) Մէյդան (պարսկ.) առհասարակ նշանակում է հրապարակ. դիւցազնական զըրոյցներում իրիւ կուի ասպարեզ: — (5) Կառք: — (\*) Գուցէ Յունաց «Պենտապոլիս» քաղաքն է այսուղ յիշւում:

Փնդիսոլագ փախաւ մտաւ մէշէն, Բուրզին ձինը քչեց յետեւ, իսաւաւ թուրը զարկեց գլխին. Դեւէ Փնդիսոլագը փախաւ մտաւ ծառի բօղը (1), վրէն կուրտաւ:

Զինը Բուրզուն փախցրեց բերեց Զէշնազիբայ Ալէ քսան թաշ գաւորի յաղբրի վրեւից հանեց դուս, Զուրը տեսաւ Բուրզին, յիշաւ, ձինը ըսեղ յորուկեց (2), յինքն էկաւ ջուրը խմելու, Զուրը որ խմեց, ջուրը Բուրզուն տարաւ, խելքը գնաց, յընկաւ մէջ չաղպին, յաղբրի ջուրը էլաւ յարուն:

Ալէքսան թագաւորն յիրան մէ քուր ունէր, անունը Սալւի Խուրէ ման, թագաւորն ասաց՝

— Գնա՛ մէ ջուր բեց խմեմ:

Սալւի Խուրէմանն էկաւ ջրի, իրիշկեց որ՝ ջուրը արուն այ գաւում, էկաւ ասեց թագաւորին՝

— Թա՛ գաւոր, արուն այ գալում ջուրը:

Ասեց՝ — Աւչիք (3) աւ այ զարկած, էկէ յընկեր այ յաղբրի ակը, էթանք հանենք :

Յէլան գնացին՝ թագաւոր Սալւի Խուրէման, գացին տեսան որ՝ մէ միծ մարգմ յընկեր այ յաղբրի մէջ, ասաց Սալւի Խուրէմանին՝

— Գնա՛ իմ թուրը բեց, ես ստու վիզը կտրեմ:

Սալւի Խուրէմանն ասաց՝

— Թա՛ գաւոր, էսի ափաս մարդ այ դու ստուր օյամիշ արա՛ (4), ես ստու եարէն սազցնեմ, էսի ուրիշ թագաւորներ քեզանից խարջ ու զելուն ընտոց խեաը կը կուի:

Թագաւորը փանզընար (5) աւեց, Բուրզին օյամիշ էղաւ, առան Բուրզուն, ձխանը, էկան տուն: Թագաւոր հարցրեց՝

— Դու ի՞նչ մարդ ես:

Ասեց՝ — Ես Տաղմուրագ Շահի թոսն եմ:

— Քո անունը ի՞նչ այ:

— Իմ անունը Բուրզի այ:

— Դու իմասս ըստե, ես քո եարէն կ'սազցնեմ, Սալւի Խուրէման քուրս էլ կամք քեզի:

— Ասեց՝ — Ես յօժար եմ, թա՛ գաւոր:

Սալւի Խուրէմանի մատնիք տւեցին Բուրզուն, Բուրզին միաց ըսեղ:

### Բ.

Դեւէ Փնդիսոլագին ունէր մէկ սիրող, յինք սէհրիբազ, անուն Երշանէ Զազօ, սարերը սէհր էր անում և աղչկայ հետ, Դեւէ Փնդիսոլագը միտն յընկաւ, յէլաւ աղչկներ վերցրեց քի:

(1) Ճեղքը: — (2) Բխովից: — (3) Որսորդներ: — (4) Աւշքի բեր: — (5) Գեղթափ:

— Ես էթում եմ իմ սիրողի կուշտ :

Եկաւ Դեւէ Փնդիպօլադի կուշտ տեսաւ որ՝ Դեւէ Փնդիպօլադ տուն չի . հարցըրեց՝

— Դեւէ Փնդիպօլադ յու՞ր այ :

Ասեցին՝ — Տաղմուրադ Շահի թոռն էկաւ հետը կուտաւ, լարեց տարաւ, չգիտցանք ինչ արեց :

Յէլաւ ումը քցեց, տեսաւ որ՝ Դեւէ Փնդիպօլադ մէշի մէջ ծառի բոդն այ : Սէհրի ձիանքը խեծան գացին Դեւէ Փնդիպօլադին խանին բերեցին ուր օթեւան : Նստաւ Մրջանէ Զազօն, ուամը քցեց, ասաց՝

— Տեսնամ էն ի՞նչ թաւուր մարդ այ, որ քեզանից դոչաղ այ :

Ասմը քցեց որ՝ Զէնապիրայ Ալէքսան թագաւորի քաղաքն այ, յէլաւ սէհրի ձիանքը խեծաւ, գնաց զիշերւայ մէ վախտը դուռը ծեծեց, զուոը բացեցին, մտաւ ներս : Բուրզին ասեց՝

— Դու ո՞րն ես :

Ասեց՝ — Ես Մրջանէ Զազօն եմ :

— Յընչի՞ ես էկե :

— Եկեր եմ քեզ տեսութուն, դու ի՞նչ թաւուր մարդ ես :

— Բարի ես էկե :

Մրջանէ Զազօն ասեց՝

— Չուր յէսօր ես Դեւէ Փնդիպօլադի սիրողն իմ, ըստով դէն ես քեզի սիրող կըլնեմ :

Ասաց՝ — Իմ թեւը եարաւու այ, ընձի ժամանակ չունեմ :

Ասաց՝ — Էդ ի՞նչ մատանիք այ քո մատը :

— Սալւի Խուրէմանի մատանիքն այ :

— Հասով զէն Սալւի Խուրէմանին չես թողէ քո բոլոր գայ, ես քեզի մէկ ամիս մոհուլ (1) տւեցի, Եթում եմ սարերը, ամսով յետ կ'զամ, ես քումն եմ, դու իմն ես :

Յէլաւ մատնիքը խանեց տւեց Սալւի Խուրէմանին . Մրջանէ Զազօն սէհրի ձիանք խեծաւ յէլաւ սարեր : Սալւի Խուրէման էկաւ էլի մատանիք տւեց Բուրզուն, թեւի եարէն սալցրեց, մտան մէ աեղի մէջ, քնան :

Սմիսը օր թըմաւ, Մրջանէ Զազօն աղջինէրի հետ սէհրի ձիանք խեծաւը լիւստուրին էկան հասան . էկան տեսան օր՝ Բուրզին Սալւի Խուրէմանն մէկ տեղի մէջ քնած են : Մրջանէ Զազօն ասեց՝

— Բը դու ասում իր՝ ես Սալւի Խուրէմանին էլ չեմ տոնէ, զուընձի խափու՞մ իր :

Սէհր արեց (2), զալամը բէհուչ (3) զարկեց, Բուրզին բէհուշ էլաւ . քցեց վըր սէհրի ձիանքին, տարաւ Դեւէ Փնդիպօլադի դիւանի մէջը : Դեւէ Փնդիպօլադին ասաց՝

(1) Ժամանակ : — (2) Կախարզեց : — (3) Ուշաթափ (անելու նըպատակաւ) :

— Դուշմանդ էսայ բռներ եմ բերեր եմ :

Դեւէ Փնդիպօլաղը յիր մարդիկը ժողւեց, ասեց՝

— Յարէք տանանք ի՞նչ էք ասում :

Ասեցին՝ — Թա՛ գաւոր, էս մէկն որ սըպանինք, էլ չկա՞յ Տաղմուռադ Շահին վար Շահին փահլեւան, գուզան մեղի կը ջնջեն :

Մրջանէ Զազօյին ասեց՝

— Ես ըստուր չեմ սըպանէ, ինչդ բերեր ես, էլ էնմալ տար :

Մրջանէ Զազօն վերցրեց զրեց վըր սէհրի ձիանքին, տարաւ Սալւի Խուրէմանի օթախը զրեց, օյամիչ արաց, Աալւի Խուրէմանին կանչեց, ասեց՝

— Էսայ դու, էս էլ քո նշանած :

Յինքը խսովաւ զնուց ապեր :

Գ.

Ալւ անուզմագ թագաւորը յինք ուժով թագաւոր էր, յինացաւ որ Ալէքսան թագաւորին մէկ սիրուն քուր ունի զաւազները ողորկեց Ալէքսան թագաւորի մօտը, ասեց՝

— Սալւի Խուրէմանին պէտք այ տաս ընձի :

Սալւի Խուրէմանն լսաց, էկաւ Բուրզուն ասաց՝

— Իմ աղբէրս մէ բէքախտ մարդ այ, ընձի տալումայ Ալւանուզմագ թագաւորին : Յառաւօան պէտքայ էթան զաւազները, դու զնա ճառնապարհն յառըջները կտրա՛, ընդոց ձեռի թուղթն առ ճղա՛, մէկը սպանա՛, մէկը թու էթայ ջուաբ տանայ :

Յառաւօան Բուրզին էլաւ տեսաւ. որ զաւազներ էթում են, յընկաւ յետեւներից խասաւ, զաւազի մէկը սըպանեց, թուղթը ձեռներից առաւ ճղեց, յինք մէկ թուղթ զրեց, ասեց՝ «Ինչքան որ զուաթդ կաղթայ, զօշուն բե» :

Զաւազը գնաց հասաւ Ալւանուզմագ թագաւորին և թուղթն առաւ կարգաց, զօշունն բիրասի (1) ժողուեց էկաւ Ալէքսան թագաւորի սինուսի բոլորը բիրասի փաթթեց :

Ալէքսան թագաւորը յէլաւ որ՝ զօշունն էկեր այ, էկաւ Բուրզուն ջուաբ (2) տւեց, ասեց՝

— Բու՛րզի, էս զօշունը զո՞ւ ես բերե :

Բուրզին ասաց՝

— Ես բերեր եմ, ես էլ կջարդեմ :

Բուրզին յէլաւ ձին խեծաւ, տւեց էք զօշունի մէջի, կէսը ջարդեց, կէսը փախաւ, Գողտուկ զիր զրեց Ալւանուզմագ թագաւորը Ալէքսան թագաւորին, ասաց :

(1) Բուրզը : — (2) Զուաբ (պարսկ.) =պատասխան : Հայելն երեմի գործ են ածում լուր նշանակութեամբ :

— Բուրգին որ կայ՝ ջուր այ, կէթայ՝ մենք որ կանք՝ աւաղ ևնք,  
կմանք, արի ըտու զլսխը մէ օդիաթ խանենք :

Յերեցին գիշերը Բուրգուն մէյդանի մէջը մէ քառուն քեազա-  
նոց խոր փորեցին, քառուն զեազ լէնքը, քառուն զեազ յէրկէնքը.  
խորի վրէն ծածկեցին :

Առաւոտ Ալւանուզմակ թազաւորի էն միւս զօշունը էկաւ կայնաւ  
մէյգան, Ալէքսան թազաւորը ջււաբ բերեց Բուրգուն, ասաց՝

— Ելի զօշուն այ էկէ :

Բուրգին յէլաւ ձին խնծաւ, զնաց մէյգանի զլոխ, ձինը չէր  
էթում, զանգուն որ զարկեց ձիան, ձին յիրան թալեց, յառաջի ոտները  
հասաւ էն տեղի զրապը, փրծաւ ձինն, յընկաւ մըջ խորին (\*), ձինը սատ-  
կաւ, Յուրզուն բանեցին, թեւերը կապեցին, տեղին եօթ հատ զեւի-  
տարան ծովի կղզին, մէ քարէ խոր կար, քցեցին էն քարէ խորի մէջ,  
մէ ջաղցի քար էլ զրեցին բերան, եօթ զեւ էլ կայնան զարաւուլ :

Էկան որ Սալւի Խուրէմանին տանին, Սալւի Խուրէմանն ասաց՝

— Ես աղու (1) կը խմեմ, չեմ գայ չուր քառուն օր :

Դ.

Ռըստամ զիշերը քնաւ, տեսաւ որ՝ Բուրզին յընկեր այ մէ ծովի  
մէջ, ձկներն ուզում են Յուրզուն կըլցնեն (2): Յէլաւ յառաւոար լա-  
ցաւ, առաւ աղղական Բէջօյ, էկաւ շուռ զալու (3): Էկաւ Դեւէ  
Ղօֆի կուշտը, հարցրեց ասաց՝

— Դեւէ Ղօֆի, իմ տղիս կուրսւեր այ, որ տեղն առես, քեղի մէ  
խաղնայ կատմ:

Դեւէ Ղօֆն ասեց՝

— Ետպնայ մի տայ, դու յորզըւա՛՝ որ էլ նարայ (4) չքաշես, ես  
էթամ քո տղին բերեմ:

Ռըստամը յորզըւաց՝ որ էլ նարայ չքաշի, քանի սադ այ, եօթ հատ  
զտրանոց քար Դեւը զրեց մըջ մէ ջւալի, կապեց քամակ, մէկ հատ  
պարսետ թալեց թեւ, Ռըստամին ասաց՝

— Քո տղէն Սեւ ծովի կղզին այ, եօթ մարդ քո տղին զարաւուլ  
այ, ես էթում եմ. թէ իմ եօթ պարսետի ձէնն էլ լսացիր՝ ես էն եօթ  
զեւին էլ կը սլպանիմ, կառնեմ քո տղէն գուզամ:

Դեւէ Ղօֆ յընկաւ ծովի երես գնաց, Գնաց, էն եօթ զեւն էլ էկան  
վըր Դեւէ Ղօֆին, եօթը պարսետից քարով եօթն էլ սըպանեց, զնաց  
ջաղցի քարը վերցրեց զրեց զէն, ձէն տւեց Յուրզուն, ասաց՝

(\*) Այս միջաղէպը (Զօրի մէջ ընկնելը), սաստիկ տարածուած լի-  
նելով Պարսից աւանդութիւններում, սոցա աղցեցութեան տակ ընտե-  
լացել է եւ Մուսաց (Խիթայ Մուրզոմեց) եւ Հայոց (Դաւիթ) զիւցաղնական  
վէպերին: (Տի՛ս մեր Առաջաբանը): — (1) Թոյն: — (2) Կուլ տան:  
— (3) Պարելու: — (4) Նարայ (պարսկ.): = ճիչ:

— Բո՛ւրզի, սա՞ղ ես :

Ասաց՝ — Սաղ եմ :

Ասաց՝ — Ես էկեր եմ քեզի խանեմ :

Ասաց՝ — Դէ կախա՛ գայ շրիտը :

Շրիտը կախեց, գնաց խորի մէջը. Բուրզին շրիտը կապեց յուր մէջքը, մէ թեւով քաշում էր Դեւէ Դօփը, քանի թեւի զուաթ (1) կար, բանձրցնում էր, մէկէլ թեւը չկէր, որ փոխէր, էլի թողում էր յընկնում էր տեղը :

Բուրզին ասեց՝

— Տունդ աւիրի, ընձի սըպանիր :

Ասեց՝ — Ես ինչ անեմ, ես մէ թեւանի եմ :

Ասեց՝ — Հաեղբանք փէտ կա՞յ :

Ասեց՝ — Կայ :

Ասեց՝ — Մէ փէտ զիր վըր խորի բերնին, շրտի ճոթն (2) թող դայ ընձի :

Շրիտի ճոթը թողեց գնաց Բուրզուն. Բուրզին շրտի ճոթից բռնեց, Դեւ մէ շրտի ճոթից քաշեց, Բուրզին մէկէլ քաշեց հանեց զուս. Բուրզուն շիկեց, բերեց ծովից խանեց զուս, Բերեց աւեց Ծըստամին, ասեց՝ էսայ քո աղէն :

Ծըստամը Դեւից շատ չնորհակալ էզաւ. Ծըստամը թողեց էկաւ յիւրա տունը, Բուրզին յէլաւ գնաց Զէշնապիր Ալէքսան թագաւորի քաղք, գնաց Սալւի Խուրէմանի մօսը. Սալւի Խուրէմանը լացաւ, Բուրզուն ասեց՝

— Քասուուն օր մոհէլաթ եմ առէ, եսեսունը զացէ, մացիր այ տաս օր ։ Բուրզին ասեց՝

— Իրեք աւուր մէջ էրկու թագաւորն էլ կը ջնջեմ, ես կը մընամ, զու։

Ծէլաւ գնաց Ալւանուզմագ թագաւորի երկիրը աւիրեց, էկաւ Ալէքսան թագաւորին սըպանեց, տղին դրեց թագաւոր։ Գնաց զեւսունի եօթ տարուայ խարաջը յողեւց առաւ էկաւ, Սալւի Խուրէմանին վե կալեց տասաւ էկաւ Ծըստամէ Զալի քաղաք։ Ծըստամն եօթ գիշեր Բուրզու խարսնիս արաց, խասցրեց յիրան մուրազին (\*):

(1) Դուաք (արաբ.) = ոյժ : — (2) Մայրը : — (\*) Այս վարիանալը, չնայելով իւր սղութեան իւ մի քանի պակաս տեղերի միւս երկու վարիանաների հետ համեմատելիս, այսուամենայնիւ իւր հիմառոք մասերով նոցա համապատասխան է, թղբուրէ Շէրանի բացալայութիւնը այստեղ, կարծես, ապացուցանում է, որ այս զրոյցը բոլորովին առանձին է ևս միայն Քրդերի մէջ նա հնթարկուել է արհեստական ձուլման :

Դարձը Դահլիճան :

Ա.

Դեւստունը մասլահաթ արին, ասեցին՝

— Գնացէք Տաղմուրագ Շահի ազգից մէ քոռփայ ճիժ գողացէք բերէք, պախենք ջոջցնենք, յիրանց խետ կըուցնենք, որ յիրանց յաղթենք :

Էկան էրկու դեւ Ռըստամի բաղի մէջը տափան : Ռըստամի տղէն Դաթը և Դահ աման մէկ տարեկան էր, աղի պահապանն տարեր էր բաղն, դրեր էր ծառի տակը, յինք բաղի մէջ ման էր գալում : Դեւերը գողացան, առան փախան, տարան գեւստուն (\*):

Մինչի ութը տարի պախին գեւստունի մէջ : Ութը ատրին որ թըմաւ, յէնում էր գեղի մէջ գեւերի աղէրքի խետ խազում էր, որի որ ձեռ տալում էր՝ թեւն էր կոտրում, գլխին ձեռ տալում էր՝ յանկաջն էր խանում : Դեւերը մասլահաթ արին, էրկու դեւ խանեցին քի՝ տարէ՝ քեաւշան : Չորս տարի քեաւշանը պախեցին : Էլաւ տասւերկու տարեկան : Մէ օր էրկու դեւեւ խետ նստան վըր մէ յաղրը խաց ին ուտում, դեւը կզաւ ջուր խմեց, Դաթը Դահրամանն էլ կզաւ ջուր խմեց, իրիշկեց որ՝ իր քիափաթ (1) դեւին մէկ չի, դեւին ասեց՝

— Յընչի ես զու մէկ չինք :

Ասեց՝ — Ես ինչ զինամի :

Ասեց՝ — Սաղն ասա՛, քեղի կը սըպանեմ :

Էն մէ դեւը սալը չասեց, ընդուր սըպանեց : Էն մէ դեւին բռնեց ասեց՝

— Սաղն ասա՛, քեղ էլ կը սըպանեմ :

Ասեց՝ — Դու Տաղմուրագ Շահի ազգից ես :

Ասեց՝ — Դէ յէլի ընձի տա՛ր :

Դեւը խափեց Դաթը Դահրամանին, բերեց թողեց մէշէն, յինք վըրէն կուրսաւ . Դաթը Դահրաման մնաց մէշի մէջ չուռ գալով : Էկաւ իրեք խառ ծառ կապեց յիրար, յէլաւ վրէն, գիշեր պարկում էր քնում էր՝ ուտելիքն ինչ էր՝ վերու օխչար էր, չօրերը յըմեն կըտուաւ, վերու փոստերը կապում էր յիրա ջանը, յէլէր էր մէ ջանաւարի հաշւի :

(1) Երես : — (\*) Արքայազն մանկանց առեւանգումը դիւերից, ինչպէս երեւում է, բաւական տարածուած նիւթ էր զես հին Հայաստանում : Մովսէս Խորենացին առաջ է բերում մի քանի զբոյցներ Արտաւազզի (Արտաշեսի որդու) մասին, ի թիւս որոց եւ հետեւեալն՝ «Ի ծնանելն զաս (Արտաւազզ) զիւկեալ պատահարաց իմն, զոր համարեցան կախարզել զաս կանանց զարմիցն Աշգահակայ...» եւ զայս նոյն երգիշքն յառասպելին ասեն այսպէս : Եթէ վիշապազունք գողացան զմանուկն Արտաւազզ, եւ դեւ փոխանակ եղին» . (Խոր, Գիրք Բ, Գլ. Կլ.) :

Դիշերը դնած էր վըր իր քեաթիւին . մէ քեարքեադան էկաւ, որ էզուր քեաթիչից յիջըցնէր սըպանէր . մէկ փէտ օլըրեր էր, արեր էր յիրան քեաման . քցեց քեարքեադանի վիզը . քեարքեադանը ասեց՝

— Ես էլայ քեզի ձի, ընձի մի՛ խեղդա :

Քեարքեադանը խեծնում էր էթում էր աւղուշ . Մէ օր կրակն յընցեր էր . տեսաւ օր զատ տեղից չաղըր են էրեւում . քեարքեադանը խեծաւ դնաց ըստնց բարեւ տւեց, ըստնք չառան, չխասկըցան, խառան յիրար Ղաթըլ Ղահրաման գիտցաւ՝ պէտք այ յիրան զարկեն . մէ ծառ քաշեց քօքից խանեց, առաւ յընկաւ ըստնց մէջը, ըստնց կէսը ջարդեց, կէսը փախան . էկան ջուար բերին Ռըստամէ Զալին, ասեցին՝

— Մէկ էսպէս ջանաւար մարդ մէ ջանաւար էլ խեծէր էր, էկաւ մեր զօշունի մէջ ղըլւըցրեց, մենք չ'խասկըցանք . ծառը քաշեց մեղի ջարդեց :

Ռըստամին մէ գեւ կար, անունը Դեւէ Սարխար . դուլուզ (1) էր անում Ռըստամին, ասաց՝

— Էնի դեւ լիզու ձեզի բարեւ այ տւէ :

Ռըստամին ասաց Դեւէ Սարխարին՝

— Յառաւօտ յէլի զօշունի հետ դնա՛ :

Յառաւօտ յէլան զօշունը, Դեւէ Սարխարն էլ խետը, գացին, Գացին էն տեղը էլի չաղըները գրեցին նստան : Ղաթըլ Ղահրամանը տեսաւ որ՝ էլի մուխ այ յէլնում էն տեղից, խեծաւ քեարքեադան, ծառ ու քաշեց էկաւ . էկաւ բարեւ տւեց զեւի լիզու . Դեւէ Սարխարն ըստ բարեւն առաւ :

Ասեց՝ — Ես յէրէկ էկայ ըստնց բարեւ տւի, ըստնք իմ բարեւը չառան, ուզում ին ընձի զարկին, ես էլ ընկոնց զարկի :

Ասեց՝ — Դու ի՞նչ մարդ ես :

Ասեց՝ — Ես Տաղմուրադ Շահի աղղից եմ :

Ասեց՝ — Բո անունը ի՞նչ այ :

Ասեց՝ — Իմ անունը Ղաթըլ Ղահրաման այ :

— Աբա յընչի՞ ես էկե ըստա :

— Դեւէրն ընձի քոռիայ վախտ գողցած բերած այ :

— Դու Ռըստամի տղէն ես . էրէկւայ քո ջարգածը ձեր զօշունն այ :

Ղաթըլ Ղահրամանը լացաւ . առան Ղաթըլ Ղահրամանին, զարձան էկան Ռըստամէ Զալի քաղաքը : Տեսաւ որ՝ քաղքի մէ եանը (2) տների վրէն սեւ այ քաշած . Դեւէ Սարխարին ասաց՝

— Էս յընչի մէ եանը սեւ այ քաշած :

Ասեց՝ — Բո յէրէկւայ սըպանած մարդիկն են :

Լացաւ Ղաթըլ Ղահրաման, ասաց՝

(1) Ծառայութիւն : — (2) Կողմ :

— իմ խերը շատ զօլայ (1) մարդ այ ։ յէրէկից յէսօր յընչի ընդոց  
սեւը չէ վերցնում այ ։

Տղէն բերեցին ։ Ռըստամը տեսաւ, ուրախացաւ վըր տղին, չօրերը  
փոխարկեց տղի ։ էրկու մարդ բերեց, տղէն տւեց էն էրկու մարդին քի՝  
իմ տղին հայերէն լիզուն կը սարւացնէք ։

Էրկու տարւայ մէջը մարդիկն Պաթը Ղահրամանին հայերէն լի-  
զուն սարւացրին ։

Բ ։

Պաթը Ղահրաման յըլնում էր ման էր գալում քաղաքի մէջ ։ տես-  
նում էր, որ յիբանց ազգից Սեւ Սարի ճամբիսի վրէն, սեւէր քաշած  
վըր գըլիին, նստած լալում են ։ զնաց ըղոնց կուշաբ, ասաց՝

— Յընչի՞ էք լաց ըլնում ։

Ասեցին՝ — Սկի ։

Ասաց՝ — Սաղն (2) ասէք ընձի, թէ որ չէք ասում, ես իմ քեար-  
քեադանը կը խեժնեմ կէթամ ։

Մէրը վերցրեց ասեց՝

— Պաթը Ղահրաման, մեր իրեք տղէն գնացած են էս ճամբիով  
էլ չէկած ։

Ասաց՝ — Քանի՞ ասրի այ ։

Ասաց՝ — Ես էրկու տարի ։

Յառաւօտ յէլաւ Պաթը Ղահրաման, քեարքեադան խեծաւ, տւեց  
վըր էդ ճամբիսին զնաց, Շատը քիչ զնաց, Աստուած դինայ ։ տեսաւ որ  
քարէ բուք այ էս սարի վրէն ։ քեարքեադանը էլ չը զնաց ։ յինք  
քեարքեադանը թողեց փիագայ (3) զնաց ։ տւեց էդ սարը յէլաւ ։ տեսաւ  
որ՝ մէ սէրի չարիս այ բանում ըստեղ ։ յիբան վերցրեց քցեց վըր էդ  
չարիսին, չկարցաւ զաֆթէր չարիսին ։ չարիսն ըստուր վե կալեց քցեց ։  
էկաւ յընկաւ ծովի զըազը, չօրերը բիրատի բրդեց, կաշիք յերեսից թե-  
ւերից պոկից քցեց, յինքը մհուածի սէս յընկաւ ըստեղ ։ Երազին էկաւ  
հրեշտակը, ասեց՝

— Պաթը Ղահրաման, յառաւօտ զըլնես քէչայ կը խաղնես, կէ-  
թաս աջ կողմին դեխին քեղի կը քցես վըր չարիսին, չարիսի միլը կը  
բռնես քաշես, էնի կը կոտրի ։ որ կոտրւաւ, արեւ կասնի ։ Կիջնես կէ-  
թաս Մուղաղամ քաղաքը, իրեք խատ յուրի (4), յիբանք սէհրիքազ,  
քաղաք բիրատի դարձրած քար ։ քո աղբրտիք, քո խօրօղոր տղէրքը՝  
ընդոց էլ այ դարձրած քար ։ յիբանք ճամբիսի վրէն իրեք քւուրով մէ  
օթաղի մէջ են ։ կը տափես (5) օթաղի դրազ ճարի (6) դէր ։ որ զըլնեն

(1) Տգէտ ։ — (2) Ճշմարիս ։ — (3) Ոտով ։ — (4) Յաւերժահարս ։  
— (5) Թազնուիս ։ — (6) Դոսան պատ ։

դուս, կը բռնես; ընդոց վիզը կը կտրես, արունը կը թափես մըջ մէ փոս քարի՝ որ իրեքն էլ մորթեցիր, էն արունը էն քարերին որ քսեցիր՝ կը սաղնան:

Ղաթըլ Ղահրամանը յէլաւ յառաւօս, կանչեց Աստուած, քէչէն խազաւ, տւեց էդ սարի գլոխը, յէլաւ դնաց չարխի մօար, յընցաւ աջ եանէ, կանչեց Աստուած, չարխի միլը բռնեց, չարխը քաշեց՝ կոտրաւ, արեւն էլ յէլաւ, քամին էլ կըարւաւ, Յիշաւ դնաց Մուղագամ քաղաքը, դնաց որ՝ բիրատի քար այ զարձած: Ճամփի վրէն մէ օթաղի բուխէր կից մուխ այ յըլնում: դնաց ընդու ճարի գէմը տափաւ, տեսաւ որ՝ նեքսի խօսում են, էն մէկն ասաւ:

— Աղջի, յէլէք գուս, արեւն առերայ, տեսէք՝ էն անիրաւ Տաղմուրադ Շահի աղգից էկան էլի չարիը կոտրի՞ն:

Մէ աղջիկը յէլաւ գուս, Ղաթըլ Ղահրաման ձեռ քցեց ծամերից բռնեց, տարաւ գոի (1) վրէն վիզը կարեց:

Ասեց՝ — Աղջի, էն մէ աղջիկն դնաց չէկաւ, մէ դու յէլի տես:

Էն մէկն էլ յէլաւ, Ղաթըլ Ղահրաման ընդու էլ ծամերից բռնեց, ընդու էլ վիզը կարեց, արունը էլի բռնեց մըջ էն գոին:

Մնաց ջոջ քուրը, յիրան յիրան ասաց՝

— Էս աղջիկներ էթում ին, ի՞նչ այ պատահում չեն զալում:

Յինքն էլ յէլաւ գուս, Ղաթըլ Ղահրաման ձեռ թալեց յիրան էլ բռնեց:

Ասաց՝ — Իզի՛թ, ընձի թող, ևս քո աղբրամնք կը սաղնեմ:


Ղաթըլ Ղահրաման սաեց՝

— Ինչո՞վ կը սաղնես:

Ասեց՝ — Էտ աղջկների արընով:

Ասեց՝ — Քո արունը քանց ընդոնցից լաւ դեղ այ:

Ըդու վիզն էլ կարեց, արունը վլր կալեց էդ քարերին քսեց, վիր որ քանց՝ Ասծու հրամանով սաղացան, բիրատի էն Մուղագամ քաղաքի մարդին սաղացրեց: Վեր կալեց յիր աղբըրտանքը, յիրա խօրօղբօր տղէրքը Աստծու փառք տալով բերեց յիրանց քաղաքը, Տեսան, ուրախացան:



(1) Գուս՝ փոսացրած քար, որ առհասարակ դնում են ջրի տակ:

Մուրաց Մի ի թ ար եւ աւան՝ Ապարանի Զամբրուռ զի զի բնակիչ՝ 48 տարեկան միջակ հասակով, երկար մաղերով աղամարդ է . չ'նայելով տարիքին, նիհար կաղմուածքը, ներս ընկած աչքերն եւ փոսացած այտերն ծերունու տեսք են տալիս նորան : Զայնը մեղմ է , պատմելը դանդաղ . շատ անգամ շփոթւում է եւ զժւարանում բառերը միմանց հետ կապել : Բոլոր իւր զիտցամ հեքեաթները նա սովորել է իւր հօրից, Միիթարից, որ իւր ժամանակ զաղթած էր Ալաշկերտի Յօնջալու հայաբնակ զիւղից : Միիթարը եղել է համբաւուոր հեքեաթ ասող իւր հայրենիքում . որգին ինքն խոստվանում է, որ նորա զիտցամի միայն ամենասախոքք մասն է յիշում : Մուրազը (որպէս եւ նորա հայրն է եղել) հողագործ է արհեստով :

Բացի Բուրգէի եւ Ռուստամի զրոյցներից նա զիտէ նմանապէս Դաւթի եւ Եների «նազըներն» :

## ՌԸՍՏԱՄԻ ԶԱԼ

Ռըստամի Զալը էղաւ առանցինք տարեկան : Մէկ ձի իրոն համար պատրաստեց, իրան թուր զրէն կապեց, զնաց աւզուչ էնելու : Մէկ ջէյրան էկաւ ռաստ . ձին աւեց ջէյրանի յետեւը, լարեց ջէյրանը, էնքան լարեց, օր իրան հողից զուս էկաւ : Արեւ մտաւ, ջէյրան վրէն կորաւ . ձին քաշեց, քնաց մէկ ծառի տակը կապեց, նստաւ մինչեւ լուս :

Լուսն օր բացւաւ, տեսաւ օր մէկ քեռչք-ու-սարայ (1) կէրեւայ . ձին հեծաւ, քշեց զնաց քեռչք-ու-սարի զուուը կայնաւ . տեսաւ օր, զուու փակած էր . մէկ մինծ խըֆիլ (2) մի կար զարկած զսան վրէն . թուրը քաշեց աւեց խըֆիլին, խըֆիլը կըտուից, զուուը բացեց, ձին քաշեց, ներս մտաւ : Ծեսաւ օր՝ մէկ խաս բախչէ (3) մի կայ քեռչքուսարի յառեջը . մէկ մարմար հաւուզ (4) կար էկ խաս բաղչի մէջ . ձին ծառը կապեց, զնաց հաւուզի վրէն լւացւաւ, իրան մէկ ճոթ (5) հաց կերտաւ, խարութ քաշեց վրէն, չինարի տակը քնաւ :

Մենք խարար ո՞րտեղից տանիք՝

Քեռչքուսարի միջն տանիք .

Քեռչքուսարի մէջը մէկ աղչիկ կար . աղչիկը զլուխ փանջարից (6) զուու քցեց, տեսաւ օր՝ մէկ ձիաւոր էկեր է բաղչի մէջը յիջեր է, ձինը ծառն է կապէ, յինքն էլ չինարի ծառի տակը քնէ : Չէն աւեց, ըստ՝ — Դու ո՞վ իս :

Չէն չ'աւեց : Ռըստամի Զալ յլոցաւ (7), աղչիկն ըստ՝

— Դու ի՞նչ մարդ ես :

— Ես Սասունցի իմ :

— Ցէլի հիծի քու ձին, զնա՞ :

— Բնչի համար :

(1) Արքունիք : — (2) Կողպէք : — (3) Ճոթս պարտէզ (պարսկ.) : — (4) Շատրւան : — (5) Կառը : — (6) Խուսամուտ (պարսկ.) : — (7) Երթնաւ :

— Ավասոս ես, աղա՛յ, գնա՛ : Եսի Կարմիր Դեւիք քեռչքուսարէն է .  
մկայ Կարմիր Դեւ կ'զայ քու մենծ կտորը մէկ լիտր կշինէ :

Բաւ — Ա՛զի, մէկ ճոթ հաց տուր ընծի, նոր էդպէս բան ըսէ  
ընձի . Էստեղ գալացողը Կարմիր Դեւից չի վախենայ :

Աղջիկը էնտեղից յիշաւ էկաւ աղի կուշտը, աղին վե կալեց տա-  
րաւ, դնացին նստան բալկոնը (1), աղջիկը տղին հաց բերեց : Հաց կե-  
րան պրծան, էնպէս էղաւ օր՝ աղջիկայ սիրու ինչպէս ճղես, աղէն մէ-  
ջը դնես :

Բաւ — Տղա՛յ, քեղի ափասոս կիպամ (2) . վե կաց գնա՛ , Կարմիր  
Դեւ չիպայ քեղի ըստեղ տեսնի :

Բաւ — Ա՛զի, քու անուն ի՞նչ է :

Բաւ — Իմ անուն Գիւլ-Փարի է (3) :

Բաւ — Գիւլ-Փարի ջա՛ն, ըստեղ գալացող Կարմիր Դեւից չի վա-  
խանայ, արի՝ նստինք խօսանք :

Նստան թեւ թեւի թալին : Կարմիր Դեւը կայնաւ սարի գլուխը ,  
դուրին (4) դրեց աշիցը, տեսաւ օր՝ իրան դարգա՛յ (5) բաց էր, մի ձի  
կայ ուր (6) բաղչի մէջը, աղի մէկն էլ աղչկայ հետ բալկոնն էր նստուկ :  
Դեւը էնտեղ հերսոտաւ, գոռպոռալէն ճամբախ յընկաւ, էկաւ քեռչքու-  
սարին մօտեցաւ : Որստամէ Զալ բալկոնից յիշաւ էկաւ իրան ձիու կուշ-  
տը, ձիան խոլները պնդեց, ձին խեծաւ, Դեւի հետ կոխ էրեց :

Էնքան կուան օր արեւ մէր մտաւ . Դեւն ըստա՝ — Աղ' բէր, թօ՛լ է (7) :

Որստամի Զալ ձիուց յիշաւ, ձին տարաւ կապեց, էկան նստան,  
իրարու հետ հաց կերան, էն ջոկ օթախ գնաց քնաւ, էն ջոկ օթախ :

Մնաց մինչև յառաօս . յառաօս նստան յիրարու հետ հաց կե-  
րան : Դեւ հարցուց թէ՝

— Քու անուն ի՞նչ է :

— Որստամի Զալ է :

— Աշխարքի մէջ էսպէս զոչաղ հողածին ես չեմ տեսէ : Յէլի կոխ  
էնինք :

Յէլան կոխ էրեցին . Էնքան կուան օր՝ օրը ճաշ դարձաւ . Դեւն  
ըստա՝

— Ա՛ղբէր, բաւական է, արի զիւլաշ կպնինք :

Էկան գիւլաշ կպան . շատ իրար տարան բերին . Որստամի Զալի  
հետոը բոնեց, զոլթուզ (8) քաշեց Դեւի ու տւեց զետին, Դեւի գլոխը  
կտուեց :

Աղջիկն էկաւ Զալի կուշտը, ըստա՝

(1) Պատչփամբ : — (2) Խղճալ : — (3) Գիւլ = մոյդ կարմիր . փարի  
կամ փէրի = յաւէրժանարս : — (4) Հեռաղիտակ : — (5) Դուռ : — (6) Իւր :  
— (7) Բաւական է : — (8) Թեւի տակ :

— Տղա՛յ , յարի էրթանք դունեալըգի (1) մալն (2) ու խազինէն էսաեղ լցեր է . ուտինք , խմինք , քէփ էնինք :

Բուաւ . — Զէ՛ , ա' զչի , քեզի պատի տանիմ :

Բերեցին Դեւի ձին , լաւ ապրանիքներ բարձան , աղչկան թարքը քաշեց , էկաւ . Սասուն :

Ներկայ հասուածս ներկայացնում է արեւելեան հեքեաթների ամեւնասովորական միջադէպերից մէկն եւ ոչ մի նմանութիւն չունի իւր պարսիկ բնագրի հետ . Ծուստամի կրիւն «Ապիտակ» Դեւի հետ եւ Քէյ Քառսի գերութիւնից ազատելն կազմում է «Արքայից Գրքի» ամենագեղեցիկ էջերից մէկն : Հետաքրքիրն այն է , որ այսուղ Ծուստամ միանգամայն հայացել է , սերելով իրան Ս ա ս ու ն ի ց :

Բուրդէի զրոյցն , որ պատմեց նոյն Մուրադն , զրեթէ ոչնչով չի զանազանուում Բարսեղ Յարութիւնեանցի պատմածից . առաքերութիւնը միայն յատուկ անուններումն է . օրինակ՝ նոյն իսկ սկզբում՝


Աղչիկը պսակեցին Ծուստամի Զալի վրէն . մէկ տարի թըմմաւ՝ չորս տղայ էղաւ .

Մեծ աղի անուն՝ Թախիէ Թահրամազ,

Բստոր պստկի անուն՝ Շահ Թէբուր .

Բստոր պստկի անուն՝ Ղոբէ Եկպաստ,

Բստոր պստկի անուն՝ Բուրզի :



(1) (Արքար.) Աշխարհի . — (2) (Արքար.) Ինչք :

## ՌՈՒՍԱՅ

իրբեւ նմոյշ այստեղ առաջ եմ բերում Ռուսամի քրդերկն վարի-  
անաներից մէկն, որ ինձ պատմել է եզիդի Փիր (վարդապետ) Կ ակօն  
Սուրբալի գաւառու Քարվանսարայ գիւղում, Փիր Կակօն մօտ 70 տարե-  
կան ծերունի է, իրան սերում է «մարդարէի» ցեղից, գիտէ լաւ հայե-  
րէն, ինչպէս եւ նոյն գիւղի բոլոր եզիդիները :

## Ա.

Ռուսամի՞ Զալի տղէն այ,

Զալ՝ Դալի տղէն այ,

Ֆարամըրզ՝ Ռուսամի տղէն այ :

Մէ օր Զալ կանչեց Ռուսամին, ասեց՝ թո'զ գայ, Ռուսամէ էրէ-  
խայ էր, էկաւ, չ'զիմիշաւ (1) տղին, ասեց՝ էս տղէն ջահէլ այ, յետ զրկեց :  
Մէ ժամանակ ընցաւ, էլի կանչեց .

Ռուսամամ ասեց՝

— Ընչի՞ համար ընձի կանչում ես :

— Քեղի չեմ զիմիշի ասեմ, հիմի քեափը Սաւմիան Սըն-  
դը էկեր այ քու վրէն կոիւ այ ու զում :

— Ես կերթամ էնդու կոիւ մէ զուրզ կշինես էրկաթից 40 լիտր ։  
Էնի գնաց շինեց բերեց, Ռուսամէ փորձեց ասեց՝ թեթեւ այ :

— Օր թեթեւ այ, զնա՛ քու պապին զուրզ կայ շինած, էնի վե-  
կալ բի' :

Գնաց բերեց ասեց՝ լաւ այ, էլի թեթեւ այ :

Իրան հօր բերդին զարկեց, բերզը բլցրեց :

Զալ ասեց՝ էս ի՞նչ ձէն այ գալում, փա՛ռք Ասծու, իմ տղէն էկաւ  
իր պապի տեղը բռնեց, հըլը (2) պապից էլ անցաւ :

Ռուսամամ ասեց հօրը՝

— Ի՞նչ ես հիմի ուզում ինձնից :

— Իմ ուզածը՝ Աստուած քու հետը ըլնի, զնա՛ Սաւմիան Աընդըր  
էկեր այ քու վրէն կոիւ այ ուզում :

Ռուսամամ գնաց մէյզան, բարով աւեց, ասեց՝

— Ընչի՞ համար ընձի ուզում ես :

— Դալի տղէ՞ն ես :

— Զա՛ ։ Ընչի՞ համար ընձի ուզում ես :

— Փարգահէշի աղչիկ կայ, օխաը տարի իմ սիրտ ուզում այ, ըն-  
ձի չի առնի, արի' էրթանք կոիւ, ես զու զոռով բերենք :

(1) Խղճաց : — (2) Դիու :

— էթանք :

Առուստամին զրկեց առաջ՝ մէկ մէկ պարի կռիւ անեն, Փարզահէշին էկաւ, էնի Առուստամ մէ մէկի զարկին, չուր յիբլուն կռւան՝ մէ մէկին չը յաղթեց, Առուստամ կանայ զաֆթ էնի (1), համա չի զիմիշի, աղչին էլ չի դիմիշի զարկի, Մնաց մէկէլ օր, մէկէլ օր էլ չուր յիբրկուն կռւան՝ մէ մէկին չը յաղթեց, Վրայ իրեք օրն Առուստամ զուրդ զարկեց աղչկայ բերդին, քանդեց, աղչկայ թիւ բոնեց քցեց յառաջը :

Աղչիկն ասեց՝ — Դու վո՞վ ես,

— Ես Առուստամէ Զալն եմ:

— Ես գիտամ գու Առուստամն ես, ընդուր համար ես քեզի չը զւմըշայ զանեմ, ես քեզի հաւնում եմ, դու էլ հաւնում ես ընձի առնես :

Իրար հաւնեցին, էկան Սալմիանի կռւչուն Առուստամ բերեց տւեց Սալմիանին, ասեց՝

— Ա՛ռ քու ուզմծը :

Աղչիկն ասեց՝ — Ես Առուստամի համար էկեր եմ, գու երես չեմ անսի, գնա՛, թէ չէ մէ զուրդ զարկեմ քեզի կոսկանեմ :

Առուստամ բերեց ուր առն, էրը ասեց աղին՝

— Սալմիան քեզի ընչի՞ կանչեց :

— Էս աղչկայ համար կանչեց :

— Աղչիկն օր բերիր, ընչի՞ չը աւեր :

— Աղչիկն նրան չէր հաւնում, ընձի էր հաւնում :

— Գնա՛ իմ աչքից կորի՛, դու իմ աղէն չես :

Բ.

Սալմիան գնաց բազում զօշուն բերեց Զալի բերդի բոլորը բոնեց, Սալմիանի հետը էկած էր իւ աղչկայ աղբէրը՝ Ղասըմը՝ մէ թեւ ունէր, ամենից զօռքէն Ղասըմն էր, Օխտ տարի էդ զօշունը բոներ էր բոլորը, Զալը կռւում էր, ընդու վրէն չէր կանայ :

Բէժանպը՝ Առուստամի քւոր տղէն էր, Զալը զրկեց ընդուր Առուստամին գանել :

Գնաց Առուստամի բերդը, Առուստամ ասեց՝

— Ընչի՞ համար էկեր ես :

— Քու առն չաւերի, Սալմիան էնքան զօշուն բերեր այ, մեզի հալչկայ (2), էս օխտ տարի այ մեզի չէնլիկ (3) չթողեցին :

— Ես չեմ գինայ :

Փարզահէշին ասեց՝

— Իմ աղբէր էկեր այ, շատ զօռքայ այ, հետ կռիւ չի լնի, յի՛ դնա՛ կռիւ :

(1) Յաղթել : — (2) Ոյժ, կարողութիւն : — (3) Ճողովուրդ :

Թուստամ, կնիկն էլ ֆարամարդն էլ էկան հասան Զալի քաղաքը .  
Ֆարամըրդ օր տեսաւ զօշունը, ասեց հօրը՝

— Բա՛րօ, էս ի՞նչ զօշուն այ :

— Օգուլ, էսի Սալմիանի զօշունն այ, էկեր այ քու պապի վրէն  
կոյն քու մօք համար :

Բա՛րօ, քեղի բան չունիս, էդ կոյն ես կէթամ :

— Լա՛օ, զու էրէխայ ես, ախտս ես, չես կարայ վրէն կոյն անէ :  
— Զէ՛, վալլայ ես պտի էրթամ :

Մէրն ասեց՝

— Իմ տղէն այ, ընձանից այ, քեղանից այ, թռ' զ էրթայ սըպանւի :  
Գնաց մէյդան կայնաւ ասեց՝

— Որն որ զօրքէն այ, թռ' զայ :

Քեռի Դասըմը զուս էկաւ մէյդան . իրեք օր գիշեր մէ մէկի զարկե-  
ցին, մէ մէկին չաղղեց :

Սալմիան ասեց՝

— Դա՛սըմ, էս ի՞նչ բան այ՝ էս իրեք օր այ էթում ես կոյն,  
չես կանայ զու ընկու բռնես բերես :

Ասեց՝ — Ես ի՞մաւ բերեմ, էնի ընձանից զոչազ այ, ընձանից  
թեթև (1) այ :


Դասըմին մէ տղայ կար՝ Ալի Բէջան, ասեց՝ — Առաւօտ ես կէթամ :

Առաւօտ զնաց . Ալին տղին բանեց, քցեց յառաջը, տարաւ : Օր բե-  
րեց, քեռու արունը եռաց վրէն, չը դիմիշաւ սպանի, ասաւ տղին՝

— Էսի լաւ զօրքայ տղայ այ, պահէ՛ մեղի համար :

Ռուստամ տեսաւ տղին տարան, իրան գուրզ վե կալեց . Զալ մէ  
եանից (2), Ռուստամ մէկէլ եանից էկան Սալմիանի զօշունի վրայ . Ֆա-  
րամըրդին Ալի Բէջանին սազ բռնին բերին : Օխտ գիշեր Ռուստամի  
հարսանիք էրին, քէփ էրին, Ալի Բէջանին խալաթ (3) աւեցին, զնաց  
յիր առն :

Քարվանսարայ, 24 Ապրիլի 1899 թ .



(1) Ճարպիկ : — (2) Կողմից : — (3) Բնձայ :

Ճ Ա. Ե Կ

1)	Բարսեղ Յարութիւնեան ( «Բուրգէն » )	• . . . .	Էջ 24
2)	Վարդան Գալուստեան ( «Մոստամ» )	• . . . .	45
3)	Գրիգոր Խաչատրեան ( «Թահրամազ, Թէհմուբ, Յուրզի, » եւն. )	• . . . .	57
4)	Մուրադ Միքըթարեան ( «Մըստամի Զալ» )	• . . . .	74
5)	Եղիշի Փիր Կակօ ( «Մուստամ» )	• . . . .	77

Տպագրական մի յանի վրիպակներ .

Էջ 3 ,	Տող 6 — « որպէս » պիտի լինի՝ « ոլէսոլէս » .
» 4	» 11 « հիմն » » « հիմ » .
» 6	» 40 « Պլիսի » » « Պլիսի » .
» 8	» 38 « Z ··· Z ··· a » » « L ··· L ··· » .
» 11	» 14 « հայերի » » « հայերի » .
» 39	» 31 « աղիչլը » » « աղջիլը » :





**ՀԵՂԻՆԱԿԻ ՄԻՒՍ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

1.	Տասնինսկորդ գարի կտակը (1899)	.	.	.	գինն է 15 կոտ.
2.	Թըլօր-Դաւիթի եւ Մհեր (1899)	.	.	.	» 40 »
3.	Obschtschij otcherk armianskago bogatyrskago eposa . (Jubilejny Zbornik v tchestj Vsev. Millera) 1900 .	.	.	.	—
4.	Iranskije ġeroi v sredē armianskago naroda . (Ottisk s XLV kn. «Ethnograph. Obozrenija»). 1900.	.	.	.	—
5.	Իրանի հերոսները հայ ժողովրդի մէջ	.	.	.	» 50 »









